

Բարձր



ԱՊՐԻԼ 83

Richard H. Tashjian

9368

digitised by A.R.A.R.®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.- Մ. ԻՇԵԱՆ Մշակոյթի պահակներ
- 14.- Զ. ԽՐԱՆՈՒՆԻ Խեցի
- 15.- » Աշմահանդէս
- 16.- » Աւագաժամ
- 17.- * * * Վահրամ Մովսէս
- 20.- Վ. ՄԱՎԵԱՆ Լիգոն, Մայիս 17
- 23.- Տ. ԱՅԵՄԵԱՆ Վահրամ Մովսէս (երգիծանկար)
- 27.- Ա. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ Անպարտ...
- 29.- Յ. ՕՇԱԿԱՆ Սանակ Պարգեւան
- 40.- Յ. ՆԱԿՈՒԼԵԱՆ Մեծ Բատրոնը...
- 41.- Տ. Հ. ԼՈՐԸՆՍ Հատուածներ (հայացոյց՝ Բ. Փափագեան)
- 53.- Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ Եղբարութեան մը պատմութիւնը...
- 59.- Մ. ՄԻՆԱՍԵԱՆ Նամակներ՝ Սիմոն Յակոբեանին
- 60.- ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ Նամակներ
- 68.- Մ. ՀԱՅԵԱՆ Ահրաստորելի խորհուրդը,
որ բանաստեղծական լեզուով
կ'արտայայտուի ընտրեալներու կողմէ
- 72.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Գ. Անեմանի «Ապագայի հետքերով»ը
- 74.- Բ. ՔԷՊՊՅԵԱՆ Զ. Խրախունիի «Այս ու աւագ փերուս»ը
- 76.- Զ. ԽՐԱՆՈՒՆԻ Յանախան
- 77.- ԱՏՈՆԻՍ Էութիւնը եւ կազմաւորող
հակադրութիւնը

Կողքի գծանկար՝ գործ Հլուչ Թաշմեանի



Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՐ. ՕՍԲ. ԲԻԻՎ ԱՊՐԷԼ 1953 ԳԼԵՐԻՎ

Մ. Ի Շ Խ Ա Ն

Մ Շ Ա Կ Ո Յ Թ Ի Պ Ա Հ Ա Կ Ն Ե Ր

(ԹԱՏԵՐԱԿԱՂ ԶՈՐՍ ՊԱՏԿԵՐ)

Ա. ՊԱՏԿԵՐ

Մարտինեաններու հիւրանոցը. պարզ ու մաշակաւոր կու-
նաւորում: Տխում եւ բազմաբառներ. մէջտեղը՝ միջակ մե-
ծուքեանք սեղան մը: Երբ վարագոյրը կը բացուի, նայն սե-
ղանին տալիս Յասած եմ Ջուարբ եւ Հայկունի. երկուքն ալ
հիւստասարդ եմ ու համակրելի: Հայերէնի մասնաւոր դասի
պահն է:

1.

ՀԱՅԿՈՒՆԻ — Ձեր շարագրութիւնը շատ լաւ սկսած էք, բայց լաւ չէք վեր-
ջացուցած: Եզրակացութիւնը չի համապատասխաներ ձեր նիւթին:

ԶՈՒՎՄԹ — Բայց ինչո՞ւ:

ՀԱՅԿՈՒՆԻ — Պիտի գրէիք՝ «օտար սուսունութիւններու անպատեհութեան»
մասին, այնպէս չէ՞: Մինչդեռ դուք արտայայտած էք այնպիսի գաղա-
փարներ, որոնք...

ԶՈՒՎՄԹ — Ես իմ համոզումս յայտնած եմ:

ՀԱՅԿՈՒՆԻ — Այո՛, սակայն կը յիշե՞ք, անցած դասին, երբք տուած ա-
տենս, ես մեզի մանրամասնօրէն բացատրած էի, թէ օտարի հետ ս-
ուսունութիւն կ'ընլը ի՞նչ մեծ աղէտներու կրնայ առաջորդել ձեր հ-
րիտասարդները. երեւի ուշագրութեամբ մտիկ չէիք ըրած:

9593-84p
digitised by A.R.A.R.@

ԶՈՒՍԹ.— Ընդհակառակն, մեծ ուշադրութեամբ:
ՀԱՅԿՈՒՆԻ.— Լաւ ուրեմն, ինչպէ՞ս արդարացնել սա տողերը. կարգանք միասին: (Մտովառ ձեռքը, սեղանին վրայ հակած՝ կը կարդայ հատիկ-հատիկ): «Ամուսնութիւնը կեանկցութեան պայմանագրութիւն մըն է երկու անձերու միջեւ՝ միւսական եւ բարոյական պարտաւորութիւններու վրայ հիմնուած». լա՛ւ, անցնինք. «Հարողութիւնը... (մտտիտի կտրուկ շարժում մը ընելէ ետք, գլուխը վեր առնելով)՝ յարողութիւն՝ յիտմ:

ԶՈՒՍԹ.— Ա՛հ, չուարած եմ:
ՀԱՅԿՈՒՆԻ.— Ոչինչ, շարունակենք. «Ծագողութիւնը կախում ունի գայն կենդող անձերուն իրար հասկնալու կարողութեան աստիճանէն: Ամուսնութեան մէջ ամէնէն կարեւոր եւ անկրածեղ թաղը, որ երջանկութիւն կրնայ բերել, երկու սրտերը իրարու կապող սգացումն է...» (յօճեկը կրտնդով զգացում, զգացում, զգացում, զգացում՝ անգամ կրկնած եմ, թէ այս բանի առաջին ասուք մէ՛կ պէ՛տ կը հնչուի, բայց զայով կը զրուի:

ԶՈՒՍԹ.— Ա՛հ, գիտէի, ներողութիւն, մեռքի սխալ է:
ՀԱՅԿՈՒՆԻ.— Ոչինչ, շարունակենք. «Երբ գգացում կայ՝ միտքիւնը կրնայ յարատեւել՝ յազքելով միւսական դժուարութիւններուն»: (Զուարթին դառնալով)՝ Ես ալ կը խորհիմ, թէ ճիշդ է մեր այս տեսակէտը. ներութեանը կրկնողական անդ կը զբաւէ ամուսնութեան մէջ:

ԶՈՒՍԹ.— Ես ալ երկրորդական չէ, բայց...
ՀԱՅԿՈՒՆԻ.— Կա՛ւ, չեմ փնտրի, գանջ բուն կէտին: (Կը շարունակէ կարդալ). «Եւ որովհետեւ սիրոյ գգացումը հայրենիք չունի, մարդկային է, հարամարդկային, ետեւաբար՝ սխալ է անքան անցել ազգային սանձմաներ քաշել»: (Զայնը բարձրացնելով)՝ «Ստար ամուսնութիւնները ամէն գնով եւ անպայման դատապարտելը մեղմութեան արդիւմէ է»: (Դառնալով Զուարթին). Եղա՛ւ ասիկա, սրիտող Զուարթ:

ԶՈՒՍԹ.— Բայց ինչո՞ւ չըլլայ, պարոն Հայկունի:
ՀԱՅԿՈՒՆԻ.— Ներթէն չեղած էք:

ԶՈՒՍԹ.— Բուն իսկ ներթին մէջն եմ, կարծեմ թէ...
ՀԱՅԿՈՒՆԻ.— Դուք առած էք Հարցին փրացական, ինչպէ՞ս ըսեմ՝ սանթրի-մանքայ կողմը միայն: Ամուսնութիւնը սիրոյ գերեզմանն է, ըսած է մեծ փիլիսոփայ մը: Պօքը անուշտ կոյր սէրերու մասին է:

ԶՈՒՍԹ.— Սէրը, որքան գիտեմ, գերեզման չունի:
ՀԱՅԿՈՒՆԻ.— Կ'ուզեմ դիտել տալ սակայն, թէ բարքերով, լեզուով, հասկացողութիւններով իրարմէ տարբեր զոչներ չեն կրնար իրար ամբողջացնել, չեն կրնար իրարու հետ շարունակի:

ԶՈՒՍԹ.— Կը ներէք, բայց ասոնք հինցած պաղափարներ են: Երբ հայ երիտասարդները առիթ ունին ամէն օր, ժամեր շարունակ, օտար ընկերներու եւ ընկերուհիներու հետ շփում հաստատելու՝ գպրոցը, սինեմաները, պարասրահները, ինչո՞ւ կ'ուզէք, որ բարքերու եւ հակա-ցողութեան տարբերութիւններ գոյութիւն ունենան տակաւին:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Ծիշդ հո՞ս է բուն ցաւը եւ ասոր դէմ է, որ պէտք է պայքարիլ: Նախընտրելի է, մեր աղջիկներուն համար, համեստ, բայց պարկեշտ հայ ամուսին մը ունենալ, քան թէ փայլուն, բայց յեղեղուկ օտարական մը:

ԶՈՒՍԹ.— Պարկեշտութիւնը անհասական անաբխութիւն է եւ ոչ թէ աղ-գային. իսկ սիրտը արամբարանութիւն չի ճանչնար:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Փաստ է սակայն, որ օտարի հետ ամուսնացած մեր երիտասարդները բոլորն ալ գժբախտ են:

- ԶՈՒԱՐՔ** — Ո՞վ ըստւ. ես առանձինս կրնամ հինգ-վեց օրինակ յիշել հակա-
աակը փաստող: Եւ յետոյ, մի՞թէ հայկական ամուսնութիւնները միշտ
երջանկութեան կը տանին:
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Անուսագն ընտանիքը կը ժրկուի այլատերութի վտանգէն. զա-
ւակները հայ կը մեծանան:
- ԶՈՒԱՐՔ** — Այդ կէտն ալ հարցական է եւ կախում ունի ծնողքէն. խառն ա-
մուսնութիւն կնքած մայր մը, մինչեւ իսկ հայր մը իր մայրենի լեզուն
կրնայ սորվեցնել զաւակներուն. կը բաւէ, որ փափաքի:
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Բաւական անփորձ ու միամիտ էջ, օրիորդ Զուարթ: Լեզուն չի
բաւեր. էականը ողին է, ոգին: Իսկ խառնածին զաւակները անխու-
սափելի կերպով կը ժառանգեն խառնածին ոգի մը, կէս մէկէն, կէս
միւսէն...
- ԶՈՒԱՐՔ** — Կը զարմանամ. ես այս նիւթը, նոյն զաղափարներով գրած էի
նաեւ գուլէճին մէջ եւ անգլերէն շարադրութեան մեր փրոֆեսօրը
չամ զնահատած էր:
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Անոր պարտականութիւնն էր թերեւս զնահատել աղաղակ
զաղափարներ, մինչդեռ մեր աւագ պարտականութիւնն է պայքարի
այլատերիչ ազդակներու դէմ եւ պաշտպան կանգնիլ մեր բնութեան
սրբութիւններուն: (Քրտփնջը կը սրբէ. պահ մը լռութիւն կը տիրէ:
Նփոքած եւ յուզուած կը դառնայ Զուարթիմ): Թոյլ կու տա՞ք անձ-
նական հարցում մը...
- ԶՈՒԱՐՔ** — Խնդրե՛մ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Անփափկանկատութիւն է թէն, բայց պիտի ուզէի գիտնալ,
թէ ամուսնութեան երկու թեկնածուներէն, մէկը՝ հայ, միւսը՝ օտար,
գուց որո՞նչ նախապատուութիւն պիտի տայիք:
- ԶՈՒԱՐՔ** — (հեզմակամ ժպիտով մը) — Ո՛հ, պարտն Հայկունի, կախում
պիտի ունենար զգացումներէս, թեկնածուի անձէն, կացութենէն...
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Պրտի շուղէի՞ք որոշ զիջումներ կատարել, որոշ զոհողութիւն-
ներ յանձն առնել ի նպատակ հայ թեկնածուին:
- ԶՈՒԱՐՔ** — (նայն ժպիտով) — Նայած պարագաներուն...
- ՀԱՅԿՈՒՆԻ** — (խոր շունչ մը աննիշէ ետք) — Երկրորդ հարցում մը եւս...
եթէ թոյլ կու տաք:
- ԶՈՒԱՐՔ** — Խնդրե՛մ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Եթէ թեկնածուն ծանօթ մէկը ըլլար ձեզի, շատ ծանօթ, բայց
իր զգացումները անծանօթ մնացած...: Եթէ այդ թեկնածուն... այդ
թեկնածուն ես ըլլայի...
- ԶՈՒԱՐՔ** (ստիքի կլիկով մեքենայար) — Նիւթէն շեղեցանք կարծե՛մ... այս-
պէս, մէկ անգամէն...
- ՀԱՅԿՈՒՆԻ** (նայնպէս ստիքի կլիկով) — Կը ներէջ, որ այսպէս մէկ անգա-
գամէն...: Բայց ես շատեց կ'ուզէի բանալ սիրտս ձեր առջեւ, չէի հա-
մարձակեր: Հաւատացէ՛ք, այս դատի պահը իմ ամբողջ ուրախութիւնս
էր երկար ատենէ ի վեր: Կը յուսայի, որ կը զգաք եւ կ'ըմբռնէք հողիս
այնպէս որ զգացումը...
- ԶՈՒԱՐՔ** — Կը շփոթեցնէք զիս. շա՛տ անակնկալ էր:
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Կը ներէջ, թերեւս կը շտրաշահե՛մ ձեր վտանգութիւնը...: Ես
ուսուցիչ, գուց աշակերտ, բայց առաջին դասին իսկ գուց գրաւեցիք
զիս, դարձաք կենքս լուսաւորող ու ջերմացնող ճառագայթք:
- ԶՈՒԱՐՔ** — Պարտն Հայկունի, բանաստեղծի պարզ թմայլ մը ըլլալս ձեր ըզ-
գացածը. լուս ատածած էք:
- ՀԱՅԿՈՒՆԻ** — Այն օրէն, որ ես այս տունը մտայ եւ այս սեղանին առջեւ

նստայ ձեր գիժաց՝ ես նոր մարդ էի արդէն...: Օրէ օր խորացաւ իմ մէջ ախ զգացումը...:

ԶՈՒՍԲ.— Որ սէր կը կոչուի հարկաւ:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Կը հեղեղ՞ք:

ԶՈՒՍԲ.— Ստիպուած եմ հաւատալու, քանի որ ուսուցիչս է ըսողը:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Կը խնդրեմ, որ հաւատաք, գիտեմ, այո՛, համեստ ուսուցիչ մըն է ձեր գէժ կեցողը, աննշան զբող մը, որ ո՛չ հարստութիւն ունի, ո՛չ փայլուն գիրք...:

ԶՈՒՍԲ.— Աստուք կարեւոր չեն. քիչ առաջ շարադրութեանս մէջ կարեւորը մտանշան էի, կը յիշէք անշուշտ:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Այո՛, անշուշտ, կարեւորը սէրն է. գուց շեշտեցիք ստիկա, զուք գրած էիք փոխադարձ սիրոյ զգացումի մասին. կրնա՞մ յուսալ այդ հրաշքը:

ԶՈՒՍԲ.— Պարոն Հայկունի, այնպիսի անակնկալի մը առջեւ զրիք գուց զիս, որ չեմ գիտեր ի՞նչ պատասխանեմ...:

Ներս կը մտնէ Զուարթի մայրը՝ տիկին Մարտինեան, սուրճի բաժակի ափսե՞ն ձեռքը:

2.

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ (բաժակը դնելով սեղանին) — Կը ներէք, պարոն Հայկունի, սուրճերնիդ ուշացուցի այսօր. խոհանոցը քիչ մը զբաղած էի: (Պատնայով աղբկամ): Աղջիկս, քեզի չեփեցի. կ'ուզէի՞ր արդեօք:

ԶՈՒՍԲ.— Ո՛չ մամա, պիտի մեկնեմ շուտով. կ'աճապարեմ: (Մէկ կողմէ գիրքերն ու տետրակները հաւաքելով)՝ կարեւոր ժամադրութիւն մը ունիմ: Յետո՞ւթիւն, կը ներէք, պարոն Հայկունի...:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Անշուշտ, անշուշտ...:

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ետս կ'ուշանա՞ս, Զուարթ:

ԶՈՒՍԲ.— Զեմ գիտեր, կ'աշխատեմ շուտ գալ: (Կը մեկնի):

3.

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ինչպէ՞ս, պարոն Հայկունի, աղջիկս կը յառաջդիմէ՞: ՀԱՅԿՈՒՆԻ — Կրնամ ըսել, թէ հայերէն լեզուի եւ պատմութեան հիմնական ծանօթութիւնները ձեռք բերաւ:

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ուրախ եմ, լա՛ս ուրախ. իր մայրենի լեզուն է, պէտք է սորվի: Գիտէք, այնպէս պատահեցաւ, որ Զուարթս պզտիկ տարիքէն ամերիկեան գոլէճ յանախեց: Մէկ կողմէն լաւ եղաւ, ջուրի պէս անպիտան սորվեցաւ: Ասոր շնորհիւ ալ ներկայ պաշտօնը ձեռք բերաւ ամերիկեան ընկերութեան մէջ: Ետտ լաւ պաշտօն է. ինքն ալ, պէտք է ըսել, շատ սիրուած է անօրէնէն:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Բնական է, տիկին, Զուարթի պէս արժէքաւոր աղջիկ մը, բացառիկ շնորհներով օտարած...:

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Գիտէ՞ք, պարոն Հայկունի, գոլէճը պատուով աւարտեց: Հայրը եւ ես մէկ ցաւ ունէինք միայն. Զուարթս հայերէն լեզուի ուսման մէջ տկար մնաց. առ ալ, փա՛ռք Աստուծոյ, ձեր շնորհիւ դարձանելու վրայ է: Զուարթս բախտաւոր է, որ ձեզի պէս ուսուցիչ ունեցաւ. միշտ կը գովէ ձեզ...:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Իսկապէ՞ս...: Կարելիս կ'ընեմ՝ իրեն հայերէնի սէրը ներ-

Նշելու համար :

Ներս կը մտնէ պարոն Մարտիճեան

4.

- ՊԱՐՈՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բարեւ, պարոն Հայկունի, Զուարթը ս'ւր է, դեմ'ց արդէն :
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այո', դեաց :
- ՊԱՐՈՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Մ'ւր :
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Կ'ըսէ՞, որ դիտեամ... Ժամադրութիւն ունիմ ըստ ու դեաց : Այլ հասած աղջիկ է. չես կրնար ամէն ասին հարցնել, թէ ս'ւր կ'երթայ :
- ՀԱՅԿՈՒՆԻ.— Մասնազուտու պատճառ չունիք կարծեմ. օրերդ Զուարթ խելացի աղջիկ է, գորտոր նկարագրի աէք...
- ՊԱՐՈՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Իւրաքանչիւր կուսի մասնազուտիւն ճշն է ծնողքին համար, ներկայ պայմաններուն մէջ, պարոն Հայկունի :
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ (հառաչելով).— Մեողք պիտի ըլլաք, որ դիտեաք. շատ դժուար է գուսիկ մեծցնել եւ ասունին կապուած պահել, շա'ա դժուար... Կը ներէք, ես խոհանոց պիտի վերադառնամ. կերակուրս կը բարկի վրայ է : (Կը մեկնի) :

5.

- ՊԱՐՈՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ակամայ արիւնեցի դարձեալ կեռն սրտին վէճքը : Խեղճը ուղղակի փլած է շարքի մը թ վեր :
- ՀԱՅԿՈՒՆԻ.— Ի'նչ է, նոր բա'ն մը կայ :
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Նամակ ստացաւք մանչէս՝ Արայէն : Գիտէք՝ Ամերիկա մեկնած էք մասնադիտանալու. կը գրէ, թէ նշանուեր է իտալական ծագումով ամերիկացի աղջկան մը հետ :
- ՀԱՅԿՈՒՆԻ.— Ի'նչ կ'ըսէք, Արա'ն :
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այո', Արան. ո'վ կրնար երեւակայել, որք սքանչելի տղան, որ տեղ մը հասցուցեր էի հազար զոհողութիւններով :
- ՀԱՅԿՈՒՆԻ.— Յաւալի է անշուշտ, բայց ոչ անդամանելի : Ժակաստադիրը աւելի մեծ աղէտներ ունի :
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Աւելի մեծ աղէտը Ֆիզիքական մահն է, պարոն Հայկունի : Իսկ տղաս արդային տեսակէտէ մահացաւ : Ան'ես չի դար ալլելու : Մաս առ մաս, շունչ առ շունչ կը հալիք՝ արեւուն ասի ինկած միւնի նըման... (Մտտնալով եւ մտքմտով ձեռքը դիմացիմի ուսիմ դրած, գապտիք մը յայտնելու պէս) Զուարթս ալ վտանգի ասի է...
- ՀԱՅԿՈՒՆԻ (ցնցուած).— Մ'հ, ի'նչ կ'ըսէք...
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ամէնուն չեմ կրնար բացուիլ. գուք ընտանիքէն կը հաշուելիք, գուք կ'ըմբռնէք դիտ... Երկար ասին ընդդիմացայ աշխատելու իր փափաքին, բաւ դիտաւալով, թէ պիտու կոչուած արդ գրասենեակները ինչպիսի թակարդներ են մեր մասաղ սերունդին համար : Աղջիկս յաղթեց ի վերջոյ : «Տունը նստիմ ի'նչ ընեմ, պապան», կ'ըսէր շարուանակ. «Ինեի հետ գուէճ աւարտող բոլոր ընկերուհիներս կ'աշխատին. ասոր մէջ ամօթ բան չկայ. դոնէ հազուադիտ եւ արդուարդիտ ծախսերը կը հանեմ» :
- ՀԱՅԿՈՒՆԻ.— Ասոր մէջ ես վտանգ մը չեմ տեսներ :

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Վասնզը անտեսանելի է, կը զգացուի, հայրական բնազդը զայն կը զգայ: Այն օրէն, որ աղջիկս ասոր հաստատութեան մէջ աստ-
թիւօ կը զարնէ՝ նոյն աղջիկը չէ՝ ազին փոխուած է: Դուք չէ՞ք զգար
աստիկա իր խօսքերէն եւ գրածներէն:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Է՛հ, որոշ շափով՝ այո՛, ազատախոհ զազափարներ ունի,
բայց տարբերն բերումն է. կ'անցնի: Օրիորդ Զուարթ խորքով հիւ-
նալի աղջիկ է:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Կտակած չունիմ. ամէն ջանք թափած ենք, մայրը եւ ես,
որ մեր զաւակները մեծնան հայ շունչով եւ ատեմային աւանդութիւն-
ներով, միայն թէ...

ՀԱՅԿՈՒՆԻ (մտածող).— Միայն թէ ի՞նչ...

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Արային օրինակը մէջտեղն է աւաւատիկ...

ՀԱՅԿՈՒՆԻ (քերտուցած).— Արան ուրիշ, Զուարթը ուրիշ: Ան ժինակ միաց
օտար հրապարակներու փորձութեան առջեւ, մինչդեռ օրիորդը ընտա-
նեկան յարկին պաշտպանութիւնը կը վայելէ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Անգ՛ր պաշտպանութիւն:

ՀԱՅԿՈՒՆԻ (մտածող).— Մասնաւոր, շօշափելի պատճառներ ունի՞ք մտա-
հազուելու:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Առայժմ՝ ոչ. բայց ո՞վ դիտէ...: Աղջիկս անձնական քար-
տուղարուհին է հաստատութեան տնօրէնին...

ՀԱՅԿՈՒՆԻ.— Ատիկա մտահոգուելու պատճառ մը չէ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Պարոն Հայկունի, ես պաշտօնեայ մըն եմ, սահմանափակ
ամսականով, բայց զաւակներու սիրոյն չեմ վարտնած յանձն տանել
ամենածանր զոհողութիւններ: Ինչպէս կը տեսնէք՝ տանս մէջ պակաս
չեն հայերէն գիրքեր, հայերէն թերթեր, մինչեւ անգամ հայերէնի
մասնաւոր դասեր: Բայց ես կը զգամ, թէ զաւակներու տէրը չեմ:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Երանի՛ թէ ամէն հայ ծնողք ձեզի չափ գիտակից ըլլար:

ՄԱՐՏԻՆԵԱՆ (աւելի եւս մտածելով, մտերմօրէն).— Դուք պէտք է օգնէք
ինծի: Զուարթը միասին պէտք է փրկենք: Մի գոհանաք պարզ գիտե-
լիքներ միայն փոխանցելով. ոգի՛ տուէք իրեն. հայ արժէքներու հան-
դէպ սէր ներշնչեցէք, սէ՛ր...

ՀԱՅԿՈՒՆԻ (շուգում).— Դիւրին չէ սէր ներշնչելը...

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Իրաւունք ունիք. հարցը այնքան ալ պարզ չէ, որքան կը
կարծէիք...: Հա՛, շտտում, շմեկնիք. քիչ ետք հոս պիտի ըլլան ձեր
գիրքի հրատարակութեան համար կանչուած յանձնախումբի անդամ-
ները:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Այսօ՛ր էր նշանակուած ժողովը:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այո՛, այսօր: Ձեռագիրը բերա՞՞ծ էք հետերնիդ:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Ո՛չ, ի՞նչ հարկ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Կը կարգայինք քանի մը հատուածներ, տպաւորութիւն կը
գործէր:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Աւելորդ է. կ'ուզէ՞ք անկեղծ ըլլամ՝ ես լուստես չեմ. ձեր
այդ յանձնախումբէն բան դուրս չի գար:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Փորձ մըն է, պէտք է ընել, պէտք է փրկել ձեր զեղեցիկ
գործը:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Որո՞նք են կանչուածները:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Յանկը նոյնութեամբ. Վերախոս եւ Վերագրանք թերթերու
խմբագիրները, Գրասիրաց Վարչութեան նախագահը, արուեստասէր
տղթոր Յակոբեան եւ ծանօթ առեւտրական պարոն Մարգար:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Կը կարծէ՞ք, թէ ասոնք իրարու հետ կը քալեն:

- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Պէ՛տք է քաւեն յանուն հայ մշակոյթին. բոլորն ալ ժշակոյր. թը սիրող մարդիկ են:
- ՀԱՅԿՈՒՆԻ — Լաւ է, որ ես մեկնիմ:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ինչո՞ւ:
- ՀԱՅԿՈՒՆԻ — Խնդիրը իմ գործին շուքը կը դառնայ. ժողովականները թող ազատ զգան...
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ընդհակառակն, ես կը խորհիմ, թէ ձեր ներկայութիւնը անհրաժեշտ է, կրնայ դիրացնել գործը:
- ՀԱՅԿՈՒՆԻ — Ո՛չ, պարոն Մարտինեան, ես այդ համոզումը չունիմ: Ներդաստիւ եղէք, ես պէտք է մեկնիմ: Յամենայնդէպս, խորապէս շնորհակալ եմ ձեր թափած ճիշդութեան համար...: Յետո՞ւ թիւն:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Երթաք բարով...

Հայկունի կը մեկնի: Մարտինեան սիկարէթ մը կը վանէ եւ հայերէն բերթը տանելով՝ կը սկսի աչիւ անցընել. մինչ կը ենչէ դրամ գանգը: Ներս կը մտնէ Գրասիրաց Միւսրեան նախագահը՝ պարտն վարդաճեման:

- ՎԱՐՊԱՆԵԱՆ (շուրջը նայելով) — Բարեւ ձեզ, ո՛ւր է, դեռ մէկը չէ՞ եկած: Ես ալ կը խորհի, թէ ուշացայ:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ի՞նչ առաջինն էք, պարոն Վարդանեան, կը յուսամ միւսներն ալ կու գան շուտով: Հրամայէք, նստեցէք: Զեղի այս նեղութիւնը պատճառեցի գործի մը համար, որ, վատն եմ, կը խօսի ձեր արտին եւ ծառէն կը կապուի ձեր միութեան նպատակներուն հետ: Խընդիրը կը վերաբերի պարոն Հայկունիի մէկ նոր գործին հրատարակութեան:
- ՎԱՐՊԱՆԵԱՆ — Ի՞նչ կ'ընէք, պարոն Հայկունին նոր զո՞րծ հրատարակած է:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ո՛չ, պիտի հրատարակէ: Մեծածուռով վէպ մը, որուն վրայ երկար աշխատած է: Ինծի կարգաց որոշ հատուածներ: Իմ համեստ կարծիքով՝ այս գիրքը իր նմանը շունի մեր գրականութեան մէջ: Կ'ընդգրկէ մեր կեանքին ամբողջ ողբերգութիւնը, մեր երազները, մեր պայտաքը: Այսպիսի գործ մը պէտք է լոյս ընծայել անպայման եւ դընել մեր երիտասարդութեան ձեռքը:
- ՎԱՐՊԱՆԵԱՆ — Անպարտա՛ն, անպարտա՛ն...: Այդպիսի գործ մը պէտք չէ մութին մէջ ձգել: Պէտք է ամէն զուգութիւն ընել ի նպատակ հայ մշակոյթին:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ըմբո՛ղ ատոր համար ալ խորհեցայ հրուիրել յանձնարարութիւնը, ձեռնհաս անձերէ, որպէսզի միասին ընենք, թէ ի՞նչ կարելի է ընել:
- ՎԱՐՊԱՆԵԱՆ — Եստ լաւ մտածեք էք:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ես մշակոյթի մարդ չեմ, բայց կը սիրեմ հայ դէրն ու գրականութիւնը:
- ՎԱՐՊԱՆԵԱՆ — Երբեմն պարզ սիրողներ շատ աւելի օգտակար աշխատանք կը կատարեն: Զարմանալի է սակայն, որ ձեզի պէս մէկը մինչեւ հիմա մեր միութեան անդամ չէ արձանագրուած: Անցածները, վարչութեան ժողովին մէջ ձեր մասին խօսք եղաւ եւ ես պարտականութիւն ստանձնեցի ձեր անգամակցութիւնը ապահովելու: (Ժպտում): Ասի՞ր ինքնաբերաբար կը ներկայանայ անա. յուսամ չէք մերժեք, պարոն

Մարտինեան, ի սէր Հայ մշակութիւն: Տարեկանարնիս մեծ բան մը չէ: ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Պարտաւորութիւններէ փախչողը չեմ, բայց նախ խօսինք այսօրուան բուն խնդրին մասին: Որքան գիտեմ՝ Գրասիրաց Միութեան հիմնական նպատակներէն մէկն է լոյս ընծայել Հայ Հեղինակներու արժեքատր երկերը: Եւ դուք՝ իրեն նախազաւր այդ միութեան...

ՎԱՐՊԱՆԵԱՆ.— Ինչպէս չէ՞...: Մեր ծրագիրը շատ ընդարձակ է եւ Հիտ-նայի իմբացրուած: (Ոգեւորուած աւ համեմատութիւն): Գրասիրաց Միութեան կը ձգտի Հայ ժողովուրդի մշակութային մակարդակը բարձրացրել Հետեւեալ գեղեցիկ սկզբունքներով.— Առաջին՝ զարկ տալ Հայ գրականութեան եւ արուեստի ծաղկումին: Երկրորդ՝ քաջալեր կանգնասնալ Հայ ստեղծագործ մտքի նիւթերուն: Երրորդ՝ զանազան հրատարակութիւններով արածել Հայ գրքին սէրը մեր ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ: Չորրորդ՝ Հայ արժէքները ծանօթացնել օտարներուն: Հինգերորդ՝ օտար արժէքները ծանօթացնել Հայերուն: Վեցերորդ...

ՄԱՐՏԻՆԵԱՆ (ընդմիջելով).— Քանի՞ ստորուան կեանք ունի մեր միութիւնը: ՎԱՐՊԱՆԵԱՆ.— Ինչ գիտեմ՝ աստիճանաբար հինգ օտարի մը կայ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այդքան ժամանակուան ընթացքին բաւական հող չաւանդ պէտք է ըլլար մեր իրականութեան մէջ եւ բաւական գործ կատարած...

ՎԱՐՊԱՆԵԱՆ.— Թէ՛ այո, թէ՛ ոչ: Գիտէ՞ք՝ մեր ժողովուրդը չի գնահատեր գրական եւ մշակութային ձեռնարկները: Հայր լաւ վաճառական է, բայց ո՛չ գրքի:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Թերեւս անոր համար, որ գիրքը որոութիւն համարած է հինէն ի վեր:

ՎԱՐՊԱՆԵԱՆ.— Լա՛ւ ըսիք, պարոն Մարտինեան, Հայուն համար գիրքը անվաճառելի որոութիւն է. երեւի այդ պատճառով Հայ գիրքերը չեն ծախուիր: (Կը խօսուի):

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Վերադառնանք մեր նիւթին. պարոն Վարդանեան, մեր միութիւնը ինչո՞վ կրնայ նպաստել Հայկունիի վէպի հրատարակութեան:

ՎԱՐՊԱՆԵԱՆ.— Ինչպէս ըսի՞ մեր միութեան ծրագիրը շատ ընդարձակ է եւ մասնաւոր յօդուած ունի այս նպատակին վերաբերող: Սակայն ցաւ է որքան ստիպուած եմ խոստովանելու, թէ գանձերնիս դատարկ է: Գուց օտար չէք, կ'ըմբռնէք մեր... ցաւը:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Լաւ, ո՞րն է ուրեմն մեր միութեան շուրջիւր գործը:

ՎԱՐՊԱՆԵԱՆ.— Մեր միութեան շուրջիւր գործը...: Ապագայի ծրագիրներ մշակել: Ասկէ դատ՝ հետամուտ ենք ստեղծելու կոկիկ գրադարան մըն ալ... նուէր ստացուած գիրքերով: Ետտ գործ կայ կատարելիք, պարոն Մարտինեան, շա՛տ գործ...

Դրամ գանգը կը ենչէ: Մարտինեան կ'երթայ դուռը բացաւ եւ ներս կ'առայնորդէ «Արաքոս քերթի խմբագիրը» Ուրարտեան:

7.

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Բարեւ ձեզ...: Կը ներէք՝ ուշացայ: (Ձեռք տալով)՝ Ինչպէ՞ս ես վարդանեան, Հատոնց կրեալ տեսած շունինք: Ետտ սպասցուցի՞ր...: Թերթ վարողը ո՛չ իր անձին սէրն է, ոչ ալ իր ժամանակին:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— ձերչէր ժամանակին եկաք, հրամայէք, նստեցէք: (Աքռա մը կը հրամցնէ):

- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ո՛ւր հասաք, թո՛ղ չուրի վրայ էք:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Կը խօսէինք աղէն ձարէն: Դեռ բոլորը չեն եկած:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Հարցը ծանօթ է ինծի: Եղբայ՛ր, ես Հայկունիին տարի մը առաջ ըսի. թե՛ր սա վէպդ, իբրև թերթին հրատարակենք «Արաբսօ»ի մէջ, փոխանակ դարակի մը անկիւնը պահելու: Ձուզեց: Մեր նոր գրողները չեն զիջանիք թերթին փոխանակելու իջնել: Բարձրէն կը թըռին, կ'ուզեն անպարտան առանձին հատորով լոյս տեսնել, ան ալ լիքս թուղթի վրայ. փաստօրութիւն ու պերճանք...
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Հայկունիի գործը պերճանքէն աւելի բան մըն է, զստան եղէք: Մեր կեանքին հարազատ պատկերն է ան...
- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Հայկունիին գովելու պէտք չունիք. ես լաւ ծանօթ եմ իրին: Եւ եթէ կ'ուզէք՝ զինք քաջալերողը, իր առաջին քանաստեղծութիւնները տպողը մեր թերթն է եղած:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Աւելի լաւ, պարոն Ուրարտեան:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ուրախ եմ, որ անոր գիրքին տպագրութեան նախաձեռնութիւնը դուք էք ստանձնած, պարոն Մարտինեան: Դուք մեր զաղութին մէջ յարգուած ազգային մըն էք եւ կրնաք դիւրաւ մեր շուրջ հուռաքել օգտակար տարրեր: Պէտք է վառ պահել հայ մշակոյթի ջահը:
- ՎԱՊՒՆԵԱՆ — Պաւս՛, պարոն Ուրարտեան, սրտէս խօսեցաք. հայ մշակոյթի սիրոյն ոչինչ չենայի. հայ մշակոյթը ամէն բանէ վեր:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Այո՛, սիրելիս, խճադարականներու նիւթը մեծաւ մասամբ այս հարցն է արդէն: (Ճարտասանական շեշտով)՝ Հայոց մեծաքաջն է լեզուն եւ դարուոր մշակոյթը մեր հոգեկան հայրենիքն են, անասան բերդն ու ամբողջը...
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ձեր խճադարականները հաճոյքով կը կարդանք...: Բայց հիմա գանջ բուն խնդրին, խօսինք Հայկունիի գրքին մասին:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ (առանց մտիկ ընելու կը շարունակէ) — Սփռաքի տարածքին ցրուած մեր ժողովուրդի դժբախտ բեկորները կորուստէ փրկելու մեծագոյն ազդակն է հայ մշակոյթը:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Մասերնիդ գրեք վերջին վրայ...: Հիմա մտածենք, թէ թո՛ղ կրնանք ընել Հայկունիի գիրքը կորուստէ փրկելու համար. ինչպէ՞ս կրնանք լոյս ընծայել գոյն, թո՛ղ միջոցով:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ (միշտ հետադարձ) — Լոյս ընծայուած իւրաքանչիւր հայերէն գիրք կտոր մը հայրենի հող է, ինքնապաշտպանութեան նոր կըրուան: Այս մասին զեռ երէկ խճադարական մը դրած էի. չեմ գիտեր՝ կարդացի՞ք:
- ՎԱՊՒՆԵԱՆ — Ես կարդացի, շատ գեղեցիկ գրուած էր:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Կենսունակ եւ կենսանորոգ պէտք է պահել հայ մշակոյթը:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Դառնանք մեր հարցին: Նիւթական լուրջ դժուարութիւններ արդէլք կը հանդիսանան Հայկունիի գործի հրատարակութեան: Թո՛ղ կրնանք ընել:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Հաւատաւոր կեցուածք պէտք է ունենալ եւ յողթահարել ամէն կարգի դժուարութիւն:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ծանօթ է հարկաւ բոլորիս, թէ թուղթն ու տպագրութիւնը որքան սղած են. թո՛ղ մեռով եւ ուրիշ՝ հայթայթել Հայկունիի գրքին ծախսը. ահա՛ բուն խնդիրը:
- ՈՒՐԱՐՏԵԱՆ — Միշտ ըսած եմ եւ դարձեալ կը կրկնեմ. կամք պէտք է ունենալ եւ նետուիլ յառաջ. մեր ժողովուրդի սիրտը գոհարարութեան անպատ արբիւր է...: Այս առթիւ ես կ'ուզէի շեշտել ուրիշ կէտ մըն ալ, որ յաճախ կ'անտեսուի: Մշակոյթը այն գետինն է, ուր կրնանք

- բողոքս միանալ. պէտք է վեր մնայ ան մեր բու՛ր վէճերէն, մեր բու՛ր մանր կիրքերէն:
- ՎԱՐԴԱՆԵԱՆ.— Պռուս՛, պարոն Ուրարտեան, իմ ըսելիքս դուք ըտիք:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Մտանց կը բաժնեմ ձեր տեսակէտը եւ այդ պատճառով ալ, անանց զազափարական խորութեան, այսօրուան ժողովին հրաւիրած եմ քիչ մը ամէն հոտանքէ յարգելի անձնաւորութիւններ:
- ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Ո՛վ, օրինակ:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Օրինակ, հրաւիրած եմ նաև պարոն Նայիրեանը:
- ՌԻՐԱՐՏԵԱՆ (քննվզած).— Ինչպէ՛ս, ո՛վ, Վէրազգաւնի խմբագր՛ըը...
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այո՛, ուր որ է՛ հիմա կու գայ:
- ՌԻՐԱՐՏԵԱՆ (ժամագոյցիմ հայելով).— Կը ներէք, ստիպուած եմ մեկնիլ, զորք ունիմ խմբադասուանը, գրաշարները ինծի կը սպասեն...
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բայց, պարոն Ուրարտեան...
- ՌԻՐԱՐՏԵԱՆ (ըստկացած խոփն ցատկելով).— Ինչպէ՛ս կարելի է ժողովի նստիլ մարդու մը հետ, որ անտու իրիկուն մեր սրբութիւններուն կը հայհոյէ, որ իր խիղճը ծախած է...: Ո՛չ, ես չկամ...
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բայց, պարոն Ուրարտեան, ի սէր հայ մշակոյթին:
- ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Ո՛չ, ո՛չ...: Դուք որոշեցէք, ինչ որ որոշէք՝ ես համաձայն եմ: (Կուզողովի դէպի դուրս):
- ՎԱՐԴԱՆԵԱՆ (խոփն ելելով).— Ինծի ալ ներողամիտ կ'ըլլաք. վարչական ժողով ունինք: Յաջողութի՛ւն, պարոն Մարտինեան:

Երկուքն ալ կը մեկնին: Մարտինեան յետանաւ երեւոյթով կ'իյնայ քիկնաթռի մը սէշ: Քիչ ետք դրան զանգը կը ինչէ եւ բանալով՝ Մարտինեան մերս կ'անապնդրէ՝ Վէրազգան» քեթրի խմբագիրը՝ Նայիրեան եւ արուեստագէր տաճք-Յակոբեան:

8.

- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բարի եկաք, հրամեցէք...
- ՆԱՅԻՐԵԱՆ.— Ի՛նչ է, կանո՛ւ ի եկանք. մեզմէ զատ մարդ չէ եկած տակաւին: Ես ալ թերթիս գործերը երեսի վրայ ձգած՝ անապարեցի, որ ժամադրութիւնը յարգած ըլլամ:
- ՏՈՒՔ. ՅԱԿՈՅԵԱՆ.— Կը հաւատա՞ք. հիւանդներս դարմանատան մէջ կարգի կը սպասեն. ձգեցի ու եկայ: Ըսի՛՜ եթէ պարոն Մարտինեանը զիս կանչիք է՛ կը նշանակէ, թէ արդային կարեւոր գործ մը կայ կարգաւ դրելիք:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Միայն չէք, տոքթոր. միայն թէ այս անգամ ասելի մշակութային է, քան ազգային:
- ՆԱՅԻՐԵԱՆ.— Երկուքն ալ նոյն բանը կը նշանակեն ի վերջոյ:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այո՛, եթէ կ'ուզէք: Հարցը կը վերաբերի գրազէտ ու բանաստեղծ Հայկունիի ընդարձակ մէկ գործի հրատարակութեան:
- ՆԱՅԻՐԵԱՆ.— Գործը ծանօթ է ինծի. Հայկունին ալ լաւ բարեկամս: Իմ տեսակէտս եթէ կ'ուզէք՝ իւրաքանչիւր գործ, որ կը գրուի՛ պէտք է լոյս տեսնէ, իսկ ամէն զերք, որ լոյս կը տեսնէ՛ պէտք է սպառի հացի պէս. ասիկա վէճ չի վերցնէր:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բուրիս փոփաբն է ասիկա. բայց հայ իրականութիւնը հակառակ պատկեր կը պարզէ:

ՆԱՅԻՐԵԱՆ.— Գիտէ՞ք ինչու, փնտա՞ծ էք պատճառը: Դժբախտաբար մեր կազմակերպութիւններն ու պատասխանատու զէմքերը զուրկ են հայ մշակոյթի արժէքին գիտակցութենէն: Մշակներ ունինք՝ մշակոյթ չունինք. գրողներ ունինք՝ գրականութիւն չունինք. արուեստագէտներ ունինք՝ արուեստ չունինք: Հայրենիքէն դուրս հայ մշակոյթը կորուստի դատապարտուած է: Միայն հայրենի հողին վրայ կրնայ մշակոյթը աճիլ ու զարգանալ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ի՞նչ ընենք ուրեմն. ձեռքերնիս ծալենք եւ հոսանքին անձնատուք ըլլանք:

ՆԱՅԻՐԵԱՆ.— Բնա՛ւ, երբե՛ք, բայց եւ այնպէ՞ս՝ ընդունինք, որ հայրենական հողէն հեռու մեր ուժերը անբաւարար են հայ մշակոյթի վահր վրա պահելու: Իրատես պէտք է ըլլանք եւ աւելորդ արկածախնդրութիւններէ հեռու փախինք:

ՏՈՒԹ. **ՅԱԿՈԲԵԱՆ.**— Ինչո՞ւ կը վիճիք եւ ժամավաճառ կ'ըլլաք. անցնինք բուն խնդրին:

ՆԱՅԻՐԵԱՆ.— Ես չեմ վիճիր, առթո՞ր, ճշմարտութիւններ կը մասնանշեմ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Հայիւնի գիրքը սիրոյ կենդանի արտայայտութիւն մըն է եւ նոր քար մը կ'աւելցնէ հայ մշակոյթի շէնքին: Ձեր գործակցութիւնը օգտակար նկատեցինք անոր հրատարակութեան համար:

ՏՈՒԹ. **ՅԱԿՈԲԵԱՆ.**— Գուք ինչի ա՛ն ըռէք. որքա՞ն պէտք է այդ գործը լոյս ընծայելու համար:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Նուազագոյնը՝ տասէն-տասերէնը հազար ոսկի:

ՏՈՒԹ. **ՅԱԿՈԲԵԱՆ.**— Ի՞նչ կ'ըռէք. շատ դրամ է, ամբողջ գրամազուրի մը...

ՆԱՅԻՐԵԱՆ.— Ես ըսի արդէն իմ տեսակէտս, աւելի՛ն պիտի ըռեմ. նիւթական հարստութիւնները կու գան ու կ'երթան, մինչդեռ մշակութային արժէքները կը մնան. անոնք յաւիտենական են:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այ՛նչ կ'առկած, բայց ինչպէ՞ս գոյացնել անհրաժեշտ գումարը:

ՆԱՅԻՐԵԱՆ.— Հայ մշակոյթը վեր է մեր բոլո՞ր նկատումներէն, բոլո՞ր վէճերէն: Անոր շուրջ պէտք է միանանք ո՛չ թէ խօսքով, այլ՝ դրածքով: Դժբախտաբար ոմանք կ'ուզեն մենաշնորհի վերածել ու շահագործել զայն ի նպատակ իրենց փրփակատիւն. մինչդեռ հայ մշակոյթը ամէնու կը պատկանի անխախտ: Միութեան եւ գործակցութեան դեռիմ մըն է ան: Մենք պէտք է միասնաբար գուրգուրանք անոր վրայ, ի՛նչ գոյնի փողկապ ալ կրննք մեր վզին:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ես՛ա ուրախալի է, պարոն նայիրեան, որ այնպէս կ'արտայայտուիք: Մեր հանրային կարծիքի ներկայացուցիչները գէթ ա՛յս հարցին շուրջ պէտք է իրար հասկնան: Քիչ մը առաջ պարոն Ուրարտեանը հոս էր. միեւնոյն գաղափարները յայտնեց, գրեթէ նոյն բառերով:

ՆԱՅԻՐԵԱՆ.— Ո՞վ, Վարդապէ՛ խմբագր՞ը. ա՛ն ալ յանձնախումբի անդամ հրաւիրած էք:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այո՛, գրազած ըլլալով շատ մեկնեցաւ:

ՆԱՅԻՐԵԱՆ (առփի իլլիլով).— Իմ անուն հանեցէք ջնջել ցանկէն. գործած մասնակցութիւն չեմ կրնար բերել այս յանձնախումբին:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բայց ինչո՞ւ, չէ՞ որ հայ մշակոյթին շուրջ պէտք է միանանք բոլորս ալ:

ՆԱՅԻՐԵԱՆ.— Այո՛, սակայն ինչպէ՞ս կարելի է ժողովի նստիլ մէկու մը հետ, որ իր թիրթով տեսարար կը նախատէ մեր սրբութիւնները...

Ո՛ւ, ո՛ւ, չ՛ըլլար, չեմ կրնար... Դուք ինչ որ որոշէք՝ կ'ընդունեմ. բնաւ հակառակ չեմ հայ մշակոյթի պահպանման սկզբունքին... Ծառասութիւն: (Կը մեկնի):

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Տեսա՞ք, տոբթոր, ի՞նչ պատկեր կը պարզէ մեր կեանքը... ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ — Այո՛, ցուալի է, բայց նորութիւն չէ ինծի համար: Մենք ազգովին հիւանդ ենք:

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Դարձան չունի՞ այս հիւանդութիւնը: ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ — Դժուար է բուժել. քրոնիք զարժած է: Ինծի ալ կը ներէք, սկզբունքով համաձայն եմ մեր յզացած դեղեցիկ ծրարին: Ծառասութիւն: (Ի՛նչի դուռ կ'ուղղուի, ապա յամկարծ ետ դառնալով)՝ Հա՛, շմոռամ ըսելու, Եարաթ օր աղջիկս կը նշանենք:

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Աս ի՞նչ լու լուր է. աչքերիդ լոյս... ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ — Ենորհակալ եմ. տարուք Զուարթին: Արուսեակնք այս սոթիւ քոթէյլ-փարթի մը առլ Վերան-Փալաս» օթէյի մէջ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Օ՛, բաւական մեծամտիս ընդունելութիւն պիտի ըլլայ ուրեմն... ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ — Այո՛, աչքս առած եմ 15էն 20 հազար ոսկի... ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ամբողջ դրամազուրի մը... ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ — Ինչ ընես, պէ՛տք է: Սկիզբը ես հակառակ էի, բայց ետքէն համոզուեցայ, որ անհրաժեշտ է: Թէ՛ մեր եւ թէ՛ աղուն կողմը բարձր դասէ բարեկամներ ունինք... ՄԱՐՏԻՆԵԱՆ — Արու է: ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ — Աղջիկս կը նշանեմ. պէ՛տք չէ՞ր որ այսպիսի ընդունելութիւն մը սարքէի... Դուք նոյնպէս հրաւիրուած էք. կ'ուզեմ, որ անպայման ներկայ ըլլաք: Քարթը շուտով կը հասնի: ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ենորհակալ եմ: Ձեր կարծիքը ընտանեկան շայնքիդ հայկունիի գրքի հրատարակութեան մասին: ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ — Իմ կարծիքս, դուն գիտես, դրական է միշտ նման ձեռնարկներու համար. ինչ որոշում որ առնէք՝ ես համաձայն եմ: Հայ արուեստն ու մշակոյթը շատ մօտ են որսին: Ծառասութիւն, պարոն Մարտինեան, երթամ, հիւանդներս կը սպասեն: ՄԱՐՏԻՆԵԱՆ — Երթաք բարով, տոբթոր: ՏՈՒՔԹ. ԾԱԿՈՒԲԵԱՆ (դէպի դուռը սւղարկւով) — Քոթէյի կը տեսնուինք: (Կը մեկնի):

Ներս կը մտնէ տիկին Մարտինեան

Յ.

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ — Հիւրերդ ինչո՞ւ շուտ գացին, ժողով պիտի լընէ՞ք: ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ըրինք, լրացաւ:

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ — Մեղա՛յ, աս որքան կարե տեսց. ես ալ թէյի պատրաստութիւն տեսնելու վրայ էի ներսը: Բոլորը եկած էին... ՄԱՐՏԻՆԵԱՆ — Գան չգան՝ միեւնոյնն է: Իրաւունք ունի Հայկունին, այս տեսակ հաւաքոյթներէ բան դուրս չի գար:

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ — Բայց ինչո՞ւ, ի՞նչ պատահեցաւ... ՄԱՐՏԻՆԵԱՆ — Բոլորն ալ առանձին-առանձին մշակոյթ կը հոլովեն. մեներգի մէջ մէկ հասիկ են, բայց երբ կարգը կու գայ խմբերգի՛ մայնները կը ձաթին: Կը լռեն... ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ձեմ հասկնար՝ ինչո՞ւ ժողովը կէս մնաց. վերաւորական խո՞սք մը ըսուեցաւ արդեօք:

- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ո՛չ, բոլորն ալ քաղցր խօսքեր էին, շատ անուշ, շատ շոյող խօսքեր...
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Հապա ինչո՞ւ...
 ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այ մի՛ հարցներ, կը տեսնես, որ դասցին։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Է՛, ի՞նչ պիտի ըլլայ, պարոն Հայկունիի գործը պիտի չտպուէ՞։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Պիտի տպուի՛, պէ՛տք է տպուի. ես ժինակս պիտի ապեմ։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Դուն ժինակդ ի՞նչ կրնաս ընել. ուրկէ՞ պիտի ճարես ձեռքդ սօղիս։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Կեցիք նայինք, հարկաւ դուռ մը կը բացուի. երեսս պիտի պնդացնեմ եւ պիտի դիմեմ պարոն Մարգարին։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ո՛ր մէկ պարոն Մարգարին։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Քանի՞ հաս պարոն Մարգար կայ. ա՛ն՝ որ յայտնի առեւտրական է։ Երկար տարիներ թաղական, հողագրաբան եղած մարդ է։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ինչո՞ւ չէիր հրաւիրած ժողովին։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Հրաւիրած էի, չեկաւ։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ի՞մ կարծիքով՝ հոտը առաւ, ատոր համար չեկաւ։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ինչէ՞ն հոտը։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Որ գրամ պիտի ուղէք իրմէ։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ձեմ խորհիք. պարոն Մարգար հայ դիրն ու գրականութիւնը գնահատող մարդ է։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Դուն անանկ կարծէ. ապէ՛ց տուա՛յ բնաւ գրամ ուղարկեմ ես իրմէ։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ո՛չ։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Գնա՛ ուղէ, անկէ ետքը խօսէ։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ինչ կ'ուզէ՛ ա՛ն ըլլայ. որոշած եմ, պիտի երթամ։ Եթէ մերժէ մեկեկնաւ ըլլալ գիրքին, փոխ գրամ պիտի ուղեմ. անձնուպէս երախտաւոր պիտի ըլլամ։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ինչո՞ւ կ'ուզես գլուխդ փորձանքի սակ դնել։
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Դո՞ւն ալ սկսար ժողովականներու նահանջի համբան բռնել. դո՛ւն գոնէ հասաւ կոխ։
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ես հետզ եմ, հայ մշակոյթի սիրոյն ես քեզմէ չեմ բաժնուիր...

(ՎԱՐԱԳՈՅԸ)

(Ետք. 1)

Մ. ԻՇԽԱՆ

Ջ. ԽՐԱԽՈՒՆԻ

*Համախարակյին Առաջին պատերազմին յա-
ջողոջ ժամանակաշրջանին, արեւմտայ զբաղ-
նալիս ժայր սասանին ժէջ բանաստեղծութիւ-
նը բարբոջին տեսնուած ժարզ ժը լեզու թէն,
բայց անրոզլ շտտանածեակի ժը վրայ Մասթիսս
Ջորթիեանէն զատ ոչ ոք կրցու պարտադրել ին-
չնէջ:*

*Կայսրութիւնը բարեփոխուեցու զաթանական
Յուսկաններուն ժիւի, երբ, Եւրոպայի ժէջ
խորուած յեղաշարժեղեան բանաստեղծութեան
պատաստաներով կրողուրուած՝ խուճր ժը երի-
տասարդներ ասպարէզ կէան եւ իրենց աշխուճու-
թեամբ զրեթէ անջ շնչեցին նախորդներուն:*

*Անոնցմէլ ամենէն թեզուն զվճարէն ժէջը՝
Ջարէն Կրտսունք, որուն ետքներորդ Կաստը՝
զմնոյ ու ասոյ ասիրուտայ, յայտ տեսու վերկերու
Կրտսունքի այս նոր Կաստրին ընդհանուր ժըթ-
նուրտին ժառին զազգաբար ժը տալու Կամար՝
ստորեւ կը ներկայացնենք թանկ ժը գիշերուած:
զմնոյ ու ասոյ ասիրուտային նախորուած գրա-
թաստեղանը կարգու պարզեթ ներկայ թիւին ժէջ:*



Խ Ե Ց Ի

Պատկիլ ասագին
Խեցիի մը պէս պարապ ու լինած
Կեանքի ափունքին
Լեցուիլ արեւով բաժակի մը պէս մայրապատանակոն
Վերապրիլ տաճնայ ուրիլ հրայրքով
Կատտայ արեւուն տարիանքովն անհուն
Փնտռել զոյցը պատնանին փլուրած ու գուցէ նետուած
Նայն ասագուտքին
Կագնելու համար կրքով ամբարիակ ոստրէն նախկին
Եւ յգանալու երգով անբաւ յոյսէ մարգարիտ...

Մակայն չգտնել — չհասնիլ երբեք տեսնել վերջ իսկ
Մնայ ասագին
Խեցիի մը պէս պարապ ու լինած...

27-7-1975

Ա Շ Ն Ա Ն Ա Յ Ա Ս

Պարզաքերիլ աշնան հետ
 Բեռնաւորաւիլ քարիճերով անհամար
 չդիմանայ անուշայտոյ ծանրութեամ
 աւ պտրտած, թեւաքեկ

Թափել վար
 Բաժնել ցրուել արգասիքն իր երկունքին
 Բաշխել ամէն անցորդի...

Սրտաքեկիլ աշնան հետ —
 Տոկալ հովում դէմ աշնան
 անձրեւնեղում
 որ շունչ առ շունչ, շիք առ շիք
 մտրակ մտրակ, տարափ սարափ

Կը տանին
 Ամէն հանդերձ կանաչագեղ
 ամէն ստացք ոսկեհամուկ
 ամէն պանոյն, ամէն գարդ

Ու կը թողուն միմիայն
 Կոտիճը չոր էութեամ —

Շարժիլ ուզել — քրտոտանայ ընդվզիլ
 սահայն միայն օրորուիլ
 Փախչիլ ուզել — մեկնիլ երթալ գտնանցած
 սահայն միայն խոնարհիլ
 Կարծք տալ հովում — ճկիլ — երբեք չծռիլ
 Ձեռք երկարել հողմաչարչար շուրթններում իրեն պէս
 Թիկունք ըլլալ — թեւ թեւ տալ անոնց հետ
 Ու կտորիլ...

Նու հատուննայ աշնան հետ —
 Քաշուիլ փակուիլ ինքն իր մէջ
 Գիշերախոյն ծագիկի պէս ամփոփուիլ
 Պահել աւիշը կենդանի խոր ծալեքում մէջ զազտնի
 Ու վերահաս ճարտան հետ
 Հագնիլ դարձեալ ճիւղ պատմութեան իմաստութեամ
 Ձմաիլ
 Ա՛յ ոչ վախճալ քուք բորանէն անուպայ
 Ո՛չ ալ սառիլ անակնկալ մեկ պաղէն
 Վերապրիլ :

28-11-1982

Ա Ի Ա Ջ Ա Ժ Ա Մ

Մենք աւագի
 Միլիանուար միլիանուար հասիկներ
 Մէկ մէկ կ'անցնինք փոքր անցքէն
 Դէպի անդին, միւս կողմ —



Ամէն հասիկ որ կ'իյնայ
 Իր հետ բամ մը — բիւ մը ճիւղ մը զանգուած մը — կը տանի
 Բայց չի պահուիր պահեստն երբեք մէկ կողմին
 ամէն վայրկեան կը նորոգուի կը շտապայ
 Բայց չ'աւելնար փոշի մ'անգամ միւս կողմն
 անյատակ է վիճն հոկայ —

Ստիպան կարգու
 անիլի ճիշդ՝ անկարգութեան ու դիպուածի օրէնքով
 Ամէն հասիկ էջիկ էջիկ դէպի նրբանց կը սանի
 Մէկ մ'ալ յանկարծ կը զգայ քէ
 ծակին բերանն է հասած
 ու մի՞նակ է բացարձակ...
 Պահ մը երկար — երկվայրկեան մը — կը խորհի
 Չկա՞յ արդեօք ձեռք մը հզօր ու գթած
 Որ վարը վեր դարձնէ
 Բաւ համարէ վարկենքուն անհնարին կուտակումը դարէ դար
 Աւերք մըն ալ տայ իրենց
 Հոգ չէ՝ — դարձեալ բախտին յիմար քնայմենքուն յանձնուած...

Մենք աւագի
 Միլիանուար միլիանուար հասիկներ
 կը մտածենք — պահ մը միայն — ուս կը թօթուենք, կը ժպտինք
 կամ ժպտելու պէս կը արկենք շրթունքը մեր դառնահամ
 Մէկ մէկ կ'անցնինք մեղ դռնէն
 Կ'երթանք անդին, միւս կողմ:

11-8-1975



11 Յունուար 1963ին, Երկուշաբթին Երեւոյի լուսնոյ գիշերուան ընթացքին պատահած սրտի ռիթմի ճշ կտր, Լեզգոնի Հիմնադրանցներին ժէկուհ ժէլ ժաւոցու պիտոջտուայ բաձաստից, արձակագիր եւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրութեան հայկական բաձնի պատասխանատու Վահրամ Մավեան:

Վահրամ Մավեան ծնած է 1928ին, Երուսաղէմ: Նախնական կրթութիւնը սեղւոյն Քարգձանայ ժարձարանին ժէլ ստանուլէ կտք, աւարած է Վաղարշ Բագրձան անդլիտական դալէճը, էսկուսիէ ուլ՝ Գեղարձի ՎՅուհնոյ Համալոյարանի անդլիտական դրտկանութեան եւ փիլիսոփայութեան ճիւղը:

1949-50 ժամանակաշրջանին Կիւրքուի Մերզանեան կրթական Հաստատութեան ժէլ ուսուցչի պաշտօն ժարելէ կտք, 1963էն ժինչեւ իր ժաւը ան ծառայեց Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրութեան՝ ժենտպէտ սժանդակելով Հայաստանի թէ Մփեսթի կրթական սեռթիներուն եւ գրտական Հաստատութիւններուն:

Վահրամ Մավեան Հրտարական է Հեռեկայ դարձերը:

«Յամեցող Վերագարձ» (1956 — բաձաստեղծութիւններ), «Հայտ թեկրներ» (1967 — արձակ էջեր), «Անկաղ սրագրք» (1968 — արձակ էջեր), «Աժէն սեղ կայ կայ» (1971 — արձակ էջեր):

1977ին Հայաստանի ժէլ լոյս սեռա իր դարձերին կազմուած Հատընիք ժը՝ «Մլտացող կողներ» իտրագրալ:

Վահրամ Մավեանի ժարձինը Լեզգոնիէ գոթագրտեցա Պէլլուսթ եւ յուզարկուարութեան արտադրութիւնը սեղլ ունեցա Կիրակի, 16 Յունուար 1983ին, Ս. Նչան ժայր եկեղեցույ ժէլ, նա իտգուսութեանը՝ Գարեգին Բ. սթոտակի կթութիւնի: Մարձինը ամփոփուեցա Պուրէ Համուսի սղլային գերեզմանատան ժէլ:

Վ Ա Գ Ի Ն
Մ Ա Վ Ե Ա Ն

Անժամանակ եղա Վահրամ Մավեանի՝ մաիը, դառնալի՝ բարեկամներուն թէ ընթերցողներուն համար, որոնք սակաւաթիւ չէին: Սփիւռքի գրականութեան երրորդ սերունդին մէջ այն քիչերէն էր Մավեան, որ հաւաքական տրտութիւններուն կողքին, ճանչցաւ նաեւ անհատական տառապանքը, ու քանի մը հանգրուաններու, ու քանի մը երեսներու վրայ, վաղահաս որբութենէն մինչեւ երիտասարդութեան կէսօրին թոքերը կրժող ցաւերը, եւ ուսուցչական մարզին մէջ ապրած բեկումներէն մինչեւ հասունութեան շրջանին սրտին ստացած հարուածը, որ հալի կէս տարի մը ժամանակ տըլաւ իրեն շնչելու, մնաս բարովի պահ մը, ափսո՛ս:

Հատերուն պէս, Վահրամ Մավեան եւս բանաստեղծութեամբ մուտք գործեց գրականութեան մէջ, տասնամեակ մը ամբողջ մնաց

այդ կալուածէն ներս, ամփոփեց այդ շրջանի բերքը «Յամեցող վերադարձ» անուն իր երախայրիքին էջերուն, բայց երբ ճանչցաւ լայն աշխարհը ու յարաբերութեան մէջ մտաւ այլապէս խաւերու հետ՝ անցաւ արձակին, յաջորդաբար լոյս ընծայելով «Անկապ օրագիր», «Հայու բեկորներ» եւ «Ամէն տեղ հայ կայ» խորագրուած հատորները, որոնք լայն ճանաչում բերին իրեն:

Անհատական յուզումներու, սէրերու, կսկիծներու հետ, Վահրամ Մավեանի էջերը, մա՛նաւանդ արձակը առաւելաբար կը բացւին մեր հաւաքական կեանքին, տարագիր մեր բազմութիւններուն թէ հայրենի ժողովուրդին առօրեային, անոնց անմիջական կեանքին սերտօրէն առընչուած բացասական թէ դրական երեւոյթներուն, այլալուծումներուն ու այլակերպութիւններուն, հիւծումներուն ու թոհչներուն:

Ազնիւ ու մեղմաբարոյ անձ մըն էր Վահրամ Մավեան եւ բնատրութեան այդ մղումին մէջ նայեցաւ աշխարհին ու մարդոց: Իր անձնական կեանքին թէ հանրային հետաքրքրութեանց ծիրէն ներս պատահած բոլոր շարժումներն ու վերիվայրումները դիմաւորեց խառնուածքային այդ նոյն թելագրանքով, հեզութեամբ ու համբերատարութեամբ, աղաղակելու փոխարէն՝ մրմնջելով, խոժոռելու փոխարէն՝ ժպտելով շարունակ՝ իր մէջ՝ ոչինչ, որ ըլլար անզնորային, ոչինչ՝ վարերէն ու վերերէն, ոչ մէկ տարր՝ կորստաբեր արկածախնդրութիւններու ոլորտներէն, ու իր գրականութիւնը՝ ի պատկերի իւրում, բանաստեղծութիւնը՝ անձնական ապրումներէն քաղած մեղեդիներ, արձակը՝ տեսածին, լսածին արձանագրութիւնը, գրական տարրերով միայն շատացող, բարութեամբ օծուն:

Վահրամ Մավեանի արձակ էջերը կեանքէն եկած արժանիքը ունին, բայց դժուար է անոնց մէջ հաստատել այն միւս կեանքը, որ կը կոչուի հեղինակային նպաստ, ա՛յն՝ որ կ'աւելնայ կեանքին վրայ եւ նոր որակով մը կը շնչաւորէ տեսանելիին պատկերը եւ անտեսանելիին յոյզը: Ան ժամանակ չունեցաւ այս մասին մտածելու, բաւարարուեցաւ նիւթերուն տեսանելի հրապոյրներով, առանց խորանալու անոնց պէրուն, առանց բիրեղացնելու անոնց շարժիչ լծակները: Բայց, այո՛, բայց...

Որքան ալ խիստ ըլլան գրական մեր չափանիշները, զուտ գրականութեան կարօտը տանջէ մեր հոգին, մերժենք իրականութեան արձանագրութիւնը շփոթել ստեղծումին հետ, մեր կացութիւնը անձնաւորող տիպարներ փնտռենք մատուցուած էջերուն մէջ, կու գայ պահ մը, որ անխուսափելի պիջումներ կ'ընենք ժամանակին, շահուածին դիմաց կը մոռնանք խտապահանջ ամէն չափանիշ: Ըստ այդ հրամայականին, մեր հարցերով, տագնապներով, կարօտներով, մտատանջութիւններով, անկումներով ու խոյանքներով բազմութիւնները կարենալ շահագրգռելու փաստը որա՛կ է ինքնին, ու Վահրամ Մավեան նուաճեց այդ արժանիքը, կարդացուելու արժանիքը:

Վ. Մ Ա Վ Ե Ա Ն

Լ Ի Ջ Պ Ո Ն, Մ Ա Յ Ի Ս 17.

Եթ շարաթ տեսող շրջապատյալ մը վերադարձայ այս գիշեր ուշ տունն: Բաւական երկար ճամբայ կարած էի առաւելն է վեր եւ յողնած: Երբ պայուսակները հասան օգտնուէն, վերցուցի իմ, դրի գոյն խելօջ մը միւսներուն շարքին, ուսէս կախուած, ճամբորդական ընկերութեան մը նշանը կրող պղտիկ, կապոյտ պայուսակս անպարտեղի վրան, եւ սպասեցի իմ կերթիս, որպէսզի մաքատան համազգեստաւոր պաշտօնեան մօտենայ, քննէ եւ ձեռքի մաշած կաւիճին կատրով նշան մը դնելէ ետք՝ արձակէ գանձը:

Այս խուզարկութիւնները ընդհանրապէս պարզ ձեւակերպութեան վերածուած են եւրոպական քաղաքներու մաքատուներուն մէջ, ուր ներկայացուած մէկ-երկու սօվորական կարգումներուն տէրեւորութեան պատասխանները առկէ ետք՝ կ'անկէ պայուսակները եւ կ'անցնիք, պայմանաւ անշուշտ, որ ձեր արտաքին երեւոյթն ու շարժումները անտեղի կոտորածներ արթնցուցած չըլլան պաշտօնեաներուն մօտ:

Կան սակայն պաշտօնեաներ ալ, որոնք զործին մէջ ապրումի մը վայելքը կը գտնեն, գոհուածութիւն մը, երբ անմեղ ճամբորդներու պայուսակները տակնուվրայ կ'ընեն՝ առանց մտնաւոր որեւէ պատճառի:

Ճամբորդական արհամարհելի փորձառութիւն մը չէ իմօ, եւ սակայն ամէն անգամ, որ մաքատան համազգեստաւոր պաշտօնեաներէն մէկն ու մէկը նայի ուղեւորուս եւ ուզէ քննել պայուսակս, ինձի այնպէս կը թուի, թէ այնտեղ անպայման պիտի գտնէ զոյութիւն չունեցող՝ իր փնտաած արգիլեալ առարկաները: Այս հոգեվիճակին որպէս բնական անդրադարձ կարծէք, անմիջապէս պարտաճանաչօրէն դրդանէս կը հանեմ բանախիներս կրկնակի հաճոյակատարութեամբ մը ու, պայուսակիս վերի շրթունքը կոտորելի վրայ բանալէ ետք, կը հրեմ գոյն կամայ մը դէպի առաջ, շարժումներու լուս կետեւող համազգեստաւոր պաշտօնեային կողմը, արտայայտութիւնով մը, որ ըսելի կ'ուզէ — «Հրամեցէ՛ք պարոն, ձեր արտադրութեան ստակն է, առաջաւ քոյն տակնուվրայ ընելու, բայց վստահ եղէք, որ յուսախար պիտի ըլլաք, որովհետեւ անձամբ պիտի հաստատէք, թէ ձեր ենթադրած ժողովրդէն չեմ ես»:

Նկատած եմ, որ այս նրբութիւնները ընդհանրապէս կը յաջողին ակընկալուած յաջողութիւնը գործելու դիմացինին վրայ, դոնէ եւ կ'ուզեմ կարծել այդպէս, որովհետեւ հազիւ պայուսակիս առարկաներուն մտածութիւնը հրապարակաւ ցուցադրած, համազգեստաւոր պաշտօնեան՝ առանց խուզար-

կելու, կը գոցէ զայն ետ, քաղաքաւարօրէն ժպտելով, ու կ'անցնի յաջորդ ճամբորդին:

Այլեւս սովորական դարձած այս կացութիւնը անգամի մը համար այս գիշեր առաւ քոյրովին տարբեր, անակնկալ ուղղութիւն:

— Յայտարարելիք որեւէ առարկայ ունի՞ք միտօն, — հարցուց պաշտօնեան եւ միեւնոյն ասան ձեռքը երկարեց կապոյտ պայուսակիտ, ու պարտականութիւնը խզմտանքով կտատարդի մը բծախնդրութեամբ, կ'երեւի, ուղեց զայն խուզարկած ըլլալ գոնէ . . . արտաքննապէս շօշափելով:

Մարդուն դէմքին արտայայտութիւնը իմաստ առաւ հետզհետէ. ձեռքը պահեց այնտեղ, կապոյտ պայուսակիտ վարի անկիւնը եւ խնդրեց, որ բանամ զայն:

Եւ զարմացայ պահ մը, թէ ի՞նչ կրնար եղած ըլլալ իր կասկածին առիթ առևող առարկան, երբ անկաստ, անձնական առարկաներէն զատ ոչինչ ունէի այնտեղ, մաքրասան օրէնքները խախտող եւ պաշտօնեային ուշադրութեան արժանի:

Ինքնազտաւ շարժումով մը սահեցուցի զնմին գլուխը մէկ ծայրէն միւրը եւ պայուսակը երկարեցի իրեն:

Մարդուկին յոգնած, ձանձրացած աչքերը փայլեցան եւ քունքերը դիժեր փոխեցին, երբ պայուսակիտ կապոյտ մտերմութեան մէջ թաղուած իր խոշոր ձեռքը երկվայրիկան մը ետք պզտիկ ծրար մը դուրս բերաւ անկէ: Բացառ զայն, ու պարտակութիւնը — խաչերու հին, մանգոսած կտորներ — սեղանին վրայ պարզելէ ետք, ինծի զարձաւ՝ բացատրութիւն պահանջող նայածքով մը:

Համազդեասաւոր պաշտօնեային փորձեցի բացատրել, թէ նիւթական արժէք ներկայացնող առարկաներ չէին անոնք՝ հակառակ կտորներուն վրայ դասուող քանի մը քարերուն. թէ՛ պարզապէս անձնական, զգացական կապ մըն էր անոնց կարեւորութիւնը տուողը: Այլ խօսքով, հասարակ առարկաներ էին՝ խորտակուած խաչերու այդ կտորները, որոնք արժէք մը կը ներկայացընէին ինծի՛ համար միայն:

Պատասխանաւ չգոհացուց զինք: Իր կտորած անգլիերէնով հարկե հակըցաւ ըսածս՝ առանց ասկայն զայն շոբոնի կարենալու: Ըսաւ, որ սպասեմ պահ մը, իսկ ինք՝ լուրջ կացութեան մը առջեւ դանտուղ մէկու մը փայլերով, դնաց անդին, պատին տակ, պաշտօնակիցներու խումբի մը մէջ կեցած իր պատասխանատուն կանչելու:

Նոյն օգանաւէն ինծի հետ իջած միւս ճամբորդները մեկնած էին բաւլորն ալ: Մաքրասան արահին մէջ մնացած էի եւ, միս-միսակ, բաց պայուսակիտ եւ սեղանին վրայ փռուած խաչի կտորներուն առջեւ, մեծ մաքրասնեպի մը տպաւորութիւնը ձգելով հեռուէն՝ անձանօթ դիտողին վրայ:

Պատասխանատուն, որ իր համազդեասին ուսին վրայ արծաթէ նշան մըն ալ կը կրէր, խորհրդաւոր երեւոյթ մը առաւ, երբ իրեն յայտնուեցաւ, թէ այդ կտորները, հաւանաբար թանկարժէք հնութիւններ, գտնուած էին պայուսակիտ մէջ:

— Կը հանի՞ք ըսել, թէ ինչ են ասոնք, — հարցաքննութիւնը ձեռք առաւ պատասխանատուն:

- Ռորտակուած խաչերու կտորներ:
- Որո՞ւ սեփականութիւնն են, ձե՞ր:
- Այո, ի՛մ:
- Չեղի պատկանած ըլլալը ցոյց տուող որեւէ հաստատագիր կամ սպացոյց ունի՞ք:

- Ո՛չ, որովհետեւ չեմ գնած գանձը. յիշատակ են պարգաւէս:
- Այս ժանդոտած խաչի կտորնե՞րը:
- Այո:
- Յիշատակ որձէ՞:
- Հօրձէս:
- Ձեր հայրը ժանդոտած այս խաչի կտորնե՞րը ձզեց ձեզի որպէս յիշատակ:

— Այո, եկեղեցական էր հայրս եւ ուրիշ ոչինչ ունէր ինծի ձգելիք:

— Ըսել կ'ուզէք եկեղեցականի՞ զաւակ էք դուք:

Հարցումը կու դար զարմացախառն կատկածով ժը այս անգամ: Ձէ՞ որ իրենց, կաթսիիկ, եկեղեցականները շէին տուտնտնար:

Յայանի էր, թէ մարդուն հետաքրքրութիւնը անցած էր անդին իր պաշտօնին պահանջած սահմանէն: Հեղինակն շեշտ ժը կար ձայնին մէջ, որ կ'ուզէր զգացնել ինծի, թէ ըսուածներուն հաւատարու չափ միամիտ չէր ինք:

— Ըսել է այդպէ՞ս, ձեր հայրը որպէս եկեղեցական այս կտորած, ժանդոտած խաչի կտորնե՞րը ձզեց ձեզի յիշատակ:

— Ո՛չ, այդպէս չէ, տոնք տոնօք կը պատկանէին հօրս եւ իր մահէն յետոյ մեացին ինծի: Անոնք ունէին զգացական արժէք իրեն համար, եւ այնօր գանձը նոյնքան եւ դուցէ աւելի կը դժահատեմ ե՛ս:

Բացուած ծրարին շուրջ հիմա հաւաքուած էին նաեւ անդին կեցած միւս պաշտօնեաները եւ հետաքրքիր կը հետեւէին մեր խօսակցութեան: Ինչպէս աւելի ետք յայտնի պիտի ըլլար, ասիկա ձեռով ժը կը լեցնէր իրենց ձանձրալի կէս ժամը՝ մինչեւ յաջորդ օդանաւին հասնելը:

Կացութիւնը դարձած էր ակնկալածէս աւելի լուրջ: Կասկած չկար սակայն, թէ գոյն հետաքրքրական կը դանէի նաեւ ե՛ս հիմա:

— Գիտե՞ք արդեօք, թէ ձեր հայրը ուրիշ ձեռք ձգած է գանձը, կամ որեւէ ապացոյց ունի՞ք իրեն պատկանած ըլլալը հաստատող:

Ձունէի անշուշտ: Իսկ եթէ երբօրեւէ այս մարդիկը գիտնային, թէ հայրս ուրիշ եւ ինչպէ՞ս ձեռք անցուցած էր այդ ծրարը, իրե՛նք ալ պիտի անգրագանային երկրորդ հարցումին ծիծաղելի ըլլալուն: Պահ ժը փորձուեցայ քանի ժը բուռնով պատճել իրողութիւնը. չբրի սակայն, ենթադրելով, թէ կրնար անհաւատալի թուել անիկա եւ կացութիւնը բարդացնել աւելի:

Պէտք ալ չմնաց տար, որովհետեւ սրահին մթնոլորտն ու պաշտօնեաներուն արածադրութիւնները փոխուեցան խկոյն, երբ բարձրախօսէն իզական քաղցր ձայն ժը յայտարարեց, թէ հասած էր յաջորդ օդանաւը:

Քանի ժը վայրկեան շանցած՝ հարիւրէ աւելի ճամբորդներ լեցուցին մաքսասան սրահը: Վերջին հաշուով, խաչի ժը ժանդոտած կտորներով աւելի գրազիլ չ'արժեր, մտածեց երեւի պատասխանատուն: Ի՛նչպի իմ կողմս հրեց ծրարը, կաւիճին կտորով զծեց երկու պայուսակներս ալ ու դնաց միացաւ իր միւս պաշտօնակիցներուն, որոնք արգէն ցրուած էին սրահին մէջ, իրենց դիրքերուն վրայ, պատրաստ՝ նոր հասած ճամբորդները ընդունելու:

Չստբած խաչերուն հետ, նոյն պայուսակին մէջ, այսօր միասին բերի նաեւ հօրս՝ աւելի քան քառասուն տարիներու կեանք ունեցող նիւար, դուռնատած յուշատետրը, ուր քանի ժը սեղմ էջերու մէջ հետեւեալ նկարագրութիւնը կայ մաքսասան եւրոպացի պաշտօնեաներուն անըմբռնելի թուող խաչի կտորներուն մասին:

«Փորթ Սայիտի այրիանոցը եւս պարպուեցաւ շատ շանցած, երբ աւաւոր ու նախընթացը շունկոց փոթորիկէն ետք, 1919 Հոկտեմբերին, ողջ մնացողները հաւաքեցին իրենց քայքայուած հրազեններն ու կտարած սիրտերը եւ նոր յոյսերով ինկան ճամբայ դէպի Կիլիկիա, դէպի հրկիր: Վէրքերը կը կապուէին կամաց-կամաց: Երկիր կը վերադառնային: Այրիներէն ոմանք զըտած էին իրենց ազգականները, ուրիշներ՝ իրենց կորուսած, սպաննուած աւուրիներուն աեզ՝ նորեր:

«Քուշի ճամբան, ուրկէ անցած էինք նախորդ շորս տարիներու ընթացքին, բուսական եղան էր որոշելու համար, թէ կարելի չէր այլևս վստահիլ տրուած խոստումներու եւ սպրիլ զարձեայ կողք կողքի մարդոց հետ, որոնք ջարդած էին ազգականներս, սիրելիներս ամբողջ:

«Հակառակ սակայն ինձի անբեկանելի թուող այս որոշումիս, Տէօրթ-հոյէն սասցուած հրաւերներուն եւ Դաւիթի տաղանդաբանի պնդումներուն տեղի տալով, ասրուան վերջերը ճամբայ ելայ դէպի Տէօրթեոյ: Ձնայած Փըրումսական իշխանութեան ներկայութեան, դիտէի, թէ այնտեղ պիտի հանդիպէի նորէն այն միւս օտարիներուն, ժողովուրդին, որոնք քանի մը տարի տառաջ տակաւին, հարիւրաւոր, հազարաւոր անմեղ կիներէ, այրերէ, մահուակներէ բազկացած մեր կարուանները կը քշէին սպառնալին, դէպի ստոյգ մահ:

«Այնպէս էր ծովը, երբ հասանք Մերսին: Ամբողջ օր մը պէտք եղաւ սպասել նաւուն վրայ՝ ցամաք հլլելու համար: Այստեղ էր Սահակ կաթողի-կոսը, որուն ներկայացայ եւ անդեկազրելէ ետք Փորթ Սայիտի այրիանոցին ու որբանոցին կացութեան մասին, յայտնեցի դէպի Տէօրթեոյ եւ Էօզէրի ուղևորութեանս ծրարքը: Վեհափառը մանրամասնութեամբ հետաքրքրուելէ ետք, խորհուրդ տուաւ, որ մեկնիմ Ատանայի ճամբով՝ տեղեակ պահելով միեւնոյն ատեն տաղանդաբանը:

«Քանի մը օր ետք, երբ շոգեկառքը կանգ առաւ Ատանայի կայարանը, մեծ զարմանքով տեսայ, թէ այնտեղ, պաշտօնի վրայ գտնուող ոտարկան-դիւրուորներուն մէջ հայեր կային: Հայ ոտարկան... Դժուար եղաւ հաւատալ աչքերուս: Մտնեցայ ասոնցմէ մէկուն եւ հարցուցի Ազգային Միութեան տեղը: Բացատրեց՝ անկցնելով:

«Մէյ մը օր հոն հասնիք, չէնքը գտնելու զժուարութիւն չէք ունենար, տէր հայր, անմիջապէս կը տեսնէք չէնքին զազաթին ծածանող հայկական Եռագոյն դրոշմը:

«Երբ կանգ առի Ազգային Միութեան շէնքին առջեւ, երկար ատեն էի վեր մտոցուած ապահովութեան, ազգային արժանապատուութեան, հպարտութեան զգացում մըն էր, որ ունեցայ առաջին առիթով: Ուրեմն ո՞ղջ էինք, չէինք մեռած ուրեմն, հակառակ հարիւր հազարաւոր անփոխարինելի կորուսաներուն: Հաւատքս, մեր ժողովուրդին յարութեան ուժին, անմահութեան հանդէպ ունեցած հաւատքս զիս չէր խաբած ըսել է:

«Առաջին օրուան այս խոնդափառութեանս լեղի տրամադրութիւն մը պիտի խաւնուէր շատ շանցած՝ քաղաքին մէջ տեսնելով միեւնոյն ատեն, կախ պեխերով, ոճրազորի նայուածքներով այն միւս օտարիները, որոնք հայ չէին, եւ որոնց ազգած սարսափը զազանի դող մը կ'անցընէր տակաւին մարմիններէն:

«Դեկտեմբերի սկիզբը Էօզէրլի եմ արդէն, պաշտօնիս գլուխը: Ողջ մըրնացող ժողովուրդը վերադարձած է անկէ ամիսներ առաջ եւ առաջին օրէն



խնայողական էր իր քաղաքանդ եղած հայրենիքը վերաշինելու, լքուած նարնխատանները վերստին ծաղկեցնելու աշխատանքին :

«Այս բոլորը երկայն շին տեւեր սակայն : Հապի քանի մը ամիս անցած , Իսկէնտէրունի նամբուն վրայ չէթէներու կողմէ Քրանտացի դինուորներու վրայ կատարուած յարձակումներուն , կոզոպուտներուն ու սպանութեան լուրերը կը սկսին հասնիլ եւ խոր վրդովումի մատնել ժողովուրդը՝ պատրանքի , յուսախաբանութեան տրուելով միտուորտ մը ստեղծելով զարձեալ ամէն կողմ : Միսա՛լ ըրած էին արդեօք ես գալով , վերագառնալով իրենց հողերուն : Բայց ինչպէ՞ս կարիքի էր ապրիլ օտարութեան մէջ : Դժուար էր քացատրել հողի շունկոտ մարդոց , թէ կարիքի չէր այսպէս անտէր ու լքուած մէկ թաղման հարեւր նարնխները , որոնք առանց իրենց հարազատ տէրերուն , կարծես կը զուգէին , կը խեղդէին իրենց բոյրի ու ծաղիկը անգամ , սպասելով անոնց դարձին , անոնց դուրսդրանքին ու սիրոյն :

«Հետզհետէ անոց սարսափի , սպազայ անորոշութեան այս միտուորտին մէջ է , որ կը հասնին լուրերը Մարաշի մէջ տեղի ունեցող շարդերուն .

«1920 Մարտ 20ին , սպասած ուժերով , ժառանգները զոհեր տալէ ետք , Տէօրթեու կ'ապաստանի մէկ մասը Լափաշլը , Պաղշայ եւ Խանը զիւզերու մեր ժողովուրդին՝ երեք շաբաթ բարբարոսներու յարձակումներուն դիմադրելէ , զիմանալէ ետք : Պէյլանցիները նախ կ'անցնին Ամանուս , ուր իրենց ահաբեկ զիրքերուն վրայ մնայի ետք մինչեւ Յուլիս , կը քաշուին ի վերջոյ Տէօրթեու , ուրիշ , հետզհետէ պրկուող կացութեան հետ՝ թուրք բնակիչները արդէն փոխադրուած էին Երզնի :

«Անաղձայի զիրքի մէջ էր Տէօրթեու , շրջապատուած Ղարահասան , Տոսպուրուի եւ Բարանըղլու չէթէյապեաներու խումբերով : Սկզբնական շրջանի պատահական հրացանաձուլութիւնները սկսան հետզհետէ յաճախակի եւ աւելի ետք սովորական դառնալ : Ժողովուրդը այլեւս կորսնցուցած էր իր հանգիստը , առաջին օրերու խաղաղութեան իր յոյսը անգամ :

«Քաղաքին , գիւղին շուրջը հերթով հսկող պահակախումբեր կազմուեցան : Ճրանասցիները : Անոնք գրազած էին խրամատներ փորելով , ցանցաթելեր ամբարջնելով . . . իրենց զօրանոցներուն շուրջ , իրենց հո՛գն իսկ չէր կացութիւնը : Էօզէրիի ընտանիքներն ալ հիմա փոխադրուած էին Տէօրթեու : Գիւղին մէջ կը մնային երիտասարդները միայն , որոնք զէն ի ձեռին կը հրակէին տիւ եւ գիւղեր : Գիւղին ղեկավարներուն հետ կանոնաւոր կերպով կ'արշայելինք ասոնց զիրքերը , յորդորելու , խրախուսելու համար :

«Ապաման անորոշ այս վիճակը տեւեց աւելի քան ամիս մը , մինչեւ որ բաղաքին մէջ թնամի դնդակի մը զոհ զնաց մեր երիտասարդներէն մէկը : Ժողովուրդին համար ազդանշան մը եղաւ ասիկա : Ետտ շանցած՝ կազմակերպչական անհրաժեշտ քայիներ առնուեցան յարձակումի ծրարիք մը կազմելու : Ժողովուրդը մտադրած էր այս անգամ , եւ պատրաստ՝ ամէն զինով կըրակին կրակո՛ւմ պատասխանելու :

«Երկար խորհրդակցութենէ ետք , որոշուեցաւ յիսունական երիտասարդներով , երկու թիւերու վրայ , առաջին հերթին յարձակիլ Օճազլը գիւղին թուրք բնակիչներուն տուններուն մէջ պատասպանուած Ղարահասանի խումբին վրայ :

«Մտադիրը իրագործելը եղաւ մեր ակնկալածէն աւելի դիւրին : Անընտան փնտկան քայլը պատճառ եղաւ , որ կարճատեւ դիմադրութենէ մը ետք , Ղարահասանի մարդիկը , մօտաւորապէս յիսուն զոհեր տալէ ետք , փախուստան եւ սպաստանին մերձակայ կիրիտլի գիւղը : Մեր տղաքը մտան գիւղ եւ կրակի տուին ռոբէրը : Երեկոյեան , գիւղին շուրջ պահակներ ձգելէ ետք ,

խումբը վերադարձաւ Տէօրթեոյ՝ հանդիմու եւ յարորդ առաւօտ նոր յարձա-
կութի մը մեռնարկիւս համար :

«Արշալոյսին, ծագող առաջին արեւին հետ, Կիրիտիսն պաշարած էինք
արդէն, մէկ ժամ տեւող կատաղի ընդհարումէ մը ետք: Օճադլըյի բախտին
արժանացաւ նաեւ Կիրիտիսն, ուրիշ փախուստ տուողները ազատասանեցան
Տէօրթեոյէն ժամ մը հետաւ գտնուող Գուզայուճու գիւղը: Որոշուեցաւ, եր-
կու ժամուան հանդիսով մը ետք ...լմացնել նաեւ այս գործը:

«Ըստ երեւոյթին, կայսրութիւնը նախորդ երկու գիւղերէն տարբեր էր
այստեղ, ուր անսովի գիրքերու մէջ կեդրոնացած էին զգրատուած գիւղու-
րէն փախուստ տուած ուժերը:

«Քանի մը ժամուան հանդիսաբ զգուշացէա կազդուրեց աղաքը, որոնք
չառ աւելի զգոյշ էին հիմա: Նախքան երկու թեւերու բաժնուիլը, ծոցս պահ-
ւած խառնով օրհնեցի գիրքնք թողորը, ու վերջին երկու օրերու յողթանակնե-
րով խանդավառ՝ ելանք ճամբայ:

«Քուրքերը տակաւին կը գտնուէին հողերանակն ազդեցութեանը տակ
իրենց կրած պարտութիւններուն: Հազիւ երկու ժամ տեւող զիժաղբութենէ
մը ետք, խուճաղուհար, առանց նոյնիսկ միտքին թան մը վերցնելու, լքեցին
գիւղը եւ քունեցին փախուստի ճամբան՝ գէղի էրդին: Քանի մը ուշ մնացած
սերտխաներ, որոնք անխոհեմութիւնը ունեցած էին անանալու, մեր սղոց
ձեռքը ինկան: Ասոնցմէ չորսը, մինչև ակոսները գիտուած ժարդիկ, գիժա-
ղբութեան զուր փորձէ մը ետք, զնդակահարուեցան տեղն ու տեղը: Մնաց-
աւել կիներ էին, որոնք կու լային, կ'աղերտէին, որ կեանքը խնայուի իրենց:

«— Աման, էվլաղըմ, խնայեցէք մեզի:

«Ոտչիկ հրամայեց, որ շղպին տոնց եւ թոյլ տան, որ անձիջապէս
հետանան գիւղէն եւ հասնին իրենց փախչող ամուսիններուն, այրերուն ետե-
ւէն: Յետոյ կիներուն զատնալով, աչքերուն մէջ աշխարհ մը վիշու աւ դայ-
բոյթ՝ պոռթկաց:

«— Մի՛ վախճաք, մենք անգէն մարդոց վրայ, մանաւանդ կիներու
չննք կրակիր: Մի՛ մոռնաք սակայն, որ մեր հարիւրաւոր մայրերը, կիները
զեռ քանի մը տարի առաջ զնդակահարուեցան, խողխողուեցան, անպատ-
ւրեցան մեր նախ էվլաաներուն կողմէ: Գացէ՛ք, կորտուեցէ՛ք, եւ լռէք մեր
էվլաաներուն, որ մեր մայրերուն զլացուած արե՛ւն է, որ կը շնորհենք ձեզի:

«Յետոյ, վստահ ըլլալու համար, որ տուններուն մէջ թակարդներ չկա-
յին լարուած՝ սկսանք խուզարկութեան: Մեզմէ ոմանք կը յուսային քանի
մը գէնքեր գանել գանէ:

«Տուններէն մէկուն մէջ ուշադրութիւնս գրուեց գունաւոր, սիրուն
զորդի կտորով մը պատրաստուած եւ երկու զրպաններ ունեցող տապրակ մը,
որ կախուած էր պատէն, երկար, սեւ պիտիք ունեցող փաթթոցաւոր մարդու
մը նկարին տակ: Մարթինիս ծայրով վար սուի գոյն: Մանր էր: Տուրակին
աչքերէն մէկուն մէջէն ելան ջախջախուած խաչի կտորներ, իսկ միւսին մէ-
ջէն՝ սուրճ ազալիք կլոր, սոկեզոյն Վրազաք» մը: Պային կեդրոնը եւ թեւ-
ւերուն ծայրերը գանուող քանի մը քարերը ողջ էին տակաւին: Վրայի հայե-
րէն արձանադրութիւնները կ'ըսէին, թէ անոնք օր մը պատկանած էին Օճադ-
լըյի Սուրբ Աստուածածին եկեղեցիին: Աւարէ մը մնացած յիշատակներ էին
յայտնապէս:

«Անտանման էր սրախութիւնս: Չայն սուի տղոց, եկան, հաւաքուե-
ցան եւ հերթով համբուրեցին խաչին կտորած թեւերը: Մեր խաչը, մեր հա-
ւատքը՝ փրկած էինք, ազատազրած օտարին, անհաւատին ձեռքէն:

«Հակառակ մեր մղած պայքարին, կոիւններուն արդար ըլլալուն մասին
ունեցած համոզումիս, անցնող մէկ-երկու օրերու ընթացքին միշտ ալ զաղա-

նի կասկած չը, չփոթ չը կար միտքին մէջ, խեղճիս վրայ՝ որպէս Աստուծոյ պաշտօնեայ, խաղաղութեան ու սիրոյ զարոզիչ: Նոյն լըջանին քանի՜ անգամներ յիշեցի Սուրբ Գիրքին զժի՛ սպանները: Բայց չէ՞ որ Սուրբ Գիրքը ոչ մէկ տեղ կը թելադրէր զսպաննուիչ ատանց նպատակի, ատանց ազնի՛ւ նպատակի, պարզապէս արեան ծորաւը ունեցող մարդոց բարբարոս անորժանեարուն գոհացում տալու համար: Մեր կոխը՝ մեր գոյութեան կոխն էր. կ'ուզէինք որջ մնայ զԱստուած պաշտելու, Աստուծոյ արգար արեգակին տակ խաղաղ սպրելու, այգիներ մշակելու եւ նարնջատաններ ծաղկեցնելու համար: Մարդիկ ինչո՞ւ կ'ուզէին զրկել մեզ այդ քուրթն՝ նոյնիսկ մեր սեփական սան մէջ:

«Եւ հիմա մեր տարագրուած խաչին կտորները:

«Ջանոնք զերութենէ ազատազրելը խորհրդածնական բան չը սենէր իր մէջ: Երկու-երեք օրէ ի վեր կը կոռւէինք մեր հաւատքին, մեր խեղճին, մեր հոգեկան ու Ֆիզիքական ազատութեան, ազաւոյութեան համար: Մենք ազատազրած էինք խաչը, եւ խաչը, իր կարգին, մե՛զ պիտի փրկէր:

«Գոյնզգոյն խորհրդի նեակցի ուսու ելայ դուրս:

«Տղաքը տուները կրակի տուած էին արգէն ու պարպուած գիւղին ամայի լռութեան մէջ՝ այրուող զերաններու, ճիւղերու ճարճատիւնն էր, որ կը լռուէր միայն:



Մաքստան արաւը լեցնող նոր հասած ճամբորդներուն մէջ կորուսած էի: Անցնող կէս ժամուան ընթացքին ինծի հանդէպ ցոյց արուած հետաքրքրութենէն ոչինչ մնացած էր այլեւս: Հաւաքեցի խաչին կտորները, լեցուցի պանոնք ետ՝ կաւիճով դծուած պայտասակիս մէջ, ու արտաքին դրան առջեւ կանգնած ստիկանին կասկածաւ նայուածքին տակ ելայ դուրս:

Օճաղը Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ խաչերուն կտորները ազատազրուած՝ բայց տարագրութեան մէջ էին տակաւին յիսուն տարիներէ ի վեր:

ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ

Ա. Գ Ա Ր Ի Է Լ Ե Ա Ն

Ա Ն Պ Ա Ր Տ . . .

Ու այդ էր պակաս, որ քեզ հրածեշտի խօսքեր առէի: Այդ դու՛ է, որ գնում ես, իմֆը էլ առա, ինչ որ հարկն է ու պատշաճ կտմ ինչ որ անհոգան-
րիկ է համարի (արևուզ գուարձայի թափանցիկութիւնն է սալիս անանջներինդ,
երեւի, հետք կատակում է), կամ՝ «ի մարդոց հանութիւն» — սաս՛, այդ
ո՞ր բառերն են, որ կարողացել են քեզնի յիշողութիւնը կամ սաստեղ սի-
րուն: Դու այսօրուանից չեղեալ ես համարում ինձ, բայց չէ՞ որ, ահաւասիկ,
ես կամ: Եւ այս պահից հանգստի ես կոչում քո անըն՝ այդ խեղճ, շփոթանար
բանասրկեալի ուրուականին, բայց ես — ի՞նչ հեշտ ու պարզ, քեզ սիրում եմ:
Անա քեզ եւ կամուրջ՝ շփոթուած միւրից, որ չես կարող այրել: Այդ ի՞նչ
բառեր ես գտնելու, որ կացնեն այդ կամուրջ-ծիածանի թէկուզ մէկ շերտը:

Ու դեռ այդ էր պակաս, որ ես տիրէի գնալուդ համար: Գիտե՛ս, որ իմ
ճամբաները չկան քաղաքի յատակագծի վրայ, ոչ էլ ստեղծ են չափում, այն-
պէս որ — ի՞նչ արած, այդ մտեկանացու բոցը ու ճշգրիտ համակարգը (Աստ-
ւած իմ, միակ, թա՛նկը ինձ համար), ուր որ ուզում ես տեղափոխել: Ինձ
կը մնայ շնչառութիւնդ, որի կշռոյթով կարող եմ անծայր ճանապարհներ
կարել հենց քեզ հետ, հասկանա՛ւմ ես, քեզ հետ միասին, մինչ քեզ կը բուայ,
թէ... հեռացե՛լ ես:

Դ՛եմֆիդ ստեղծութեան գաղտնիքն պահուած գարնանի եմ տեսնում,
Յիշդ երեխայի պէս, որ գուրաքը կտարել ու չի պատժուած: Ոչինչ չես կու-
րել, իսկ քեզ թուում է, թէ ինչ-որ կազ (ինձ համար չեղեալ) արձակեցիր ու
կիմա ազատութեան աւարդ տաւ՝ ստանալու ես: Ինչ լա՛ւ է, որ կը սանես ա-
մէնօրեայ հանդիպումների սովորականութեան յանգը, առօրեականութեան
սոսաւյնը, որ խննել էր քեզ: Ինչ լա՛ւ է, որ տանում ես թիւրիմացութիւնների
անհոգի բառերը ու դրանց փշտա բազաւայններից ծնունդ անբացատրելի չա-
րութիւնը:

Միանիւսուած մատներն էլ բանտ են, յատկապէս կիմա, երբ դառնում
եմ քո թողած յուշերի, գանձի միակ ժառանգը: Այս քո կշռադատումն ու հան-
դիսարար հեղանայն իսկ հրաշք է: Դու ցուցադրաբար նայում ես թեւիդ ժա-
մացոյցին, իսկ ես տեսնում եմ դատարարի մէջ անփոփոած գարկերակդ, որի
տրտփով կը չափուի այն անոթային, որին մարդիկ՝ խեղճ, անէր մակեանա-
ցունելը, «աչախոզմեան դասի» ստեղծութեան անուն են տաւել՝
«ժամ», «բապէ», «գար»: Գեղ ստե՛մ, որ ժամանակն ինձ իր գիրկն է առել ու
արտօմել, որ նիրհեմ յուշերիդ թողած ու դեռ անկասար երազանքների պահե-
րից հիւսուած ճօճանակի մէջ: Ոչինչ չեմ առի, որովհետեւ դու իսկոյն կը
կրկնես, որ միշտ եղել եմ անպարտաճանաչ ու կ'աւելացնես, որ ժամանակը
պէտք է յարել: Եւ ժամանակին աչքով եմ անում, դու խօսիր: Դու այրպէս
խօսիր, եւ մի քիչ մտածմ — յոռու ու հասուն կեռասի պէս ժայնիդ մեկնած

ուկանց, հոգի, էութի՛ւն: Այնքա՛ն եմ ուզում շօշափել ձայնիչ խոնու մակե-
րեքը, որ կարողանում եմ գգալ ելեւէջները երակներս մէջ՝ գլխապտալտի
պէս յանկարծ:

Կ'ուզէի՞ր քո գեւեան բարձունքից նայել արցունքներս ու կիրակեօր-
եայ քարոզի պատշաճ միտքարական յորդորներ սփռել...: Բայց ակամջներս,
է՛, ուրիշ բառերիչ քափանցիկ հնչիւններն են բամսել ու դրա համար բոլո-
րովին էլ լացս չի գալիս:

Ուզում էիր, որ խոհեմ լինեմ, իսկ հիմա, տե՛ս, հենց նրա համար, որ
շեմքին ուզուած ռաբիբիչ համբոյրներով շղթայ չեմ կապում, նորից կար-
ծում ես, որ չարոհնի խազ է արածս: Իմ լուսիւնը կարդա՛. «Տէրն ընդ ինք»,
քանի չեմ լացել քա անօգնական կուրաբեան համար կամ չեմ ծիծաղել հենց
դրա վրայ: Մարդու հոգի՞ն էլ աչկեր չունենայ՝ սուգուելու համար մի ուրիշ
հոգու խորում իրեն, միշտ իրեն գտնելու ու յայտնաբերելու համար: Ուզում
եմ հարցնել, քէ ի՞նչ ես գտնում սաղրիկ լների մակերեսներին, բայց վախե-
նում եմ, որ բառերդ... քզքից կտրած մարդուկների պէս պար բռնեմ առ-
ջես եւ ես ուզեմամ ծխախոտովս նրանց աչկերը մի քիչ լայն բացել ու դու
գայրաւառ...: Լարբ բծիշկները (արդեօք իրենց գիտելիքների սակաւութիւ-
նի՞ց է, որ ամաչելով քիթ-քերան կապկպում են), վաղուց են տեսլ, որ ծխա-
խոտը մանաբեր բոյն է ու դու կրկնում ես: Ամէ՛ն, բայր առածներդ: Եւ
ծին կը սասնի մէկ ծխախոտից: Բայց դեռ ոչ մի ծխոզ ձեռ չեմ հանդիպել,
ուրեմն՝ «պրոստուէ՛...»: Ուրիշ ի՞նչ խորհուրդ ունես, մէկ գառան հովիւ,
որ չկարողացար սրինգ նստազել:

Ես հիմա բարձրաձայն կ'անեմ ամենակարեւոր ազօքը ինձ համար, ու-
րովինտու դրամ խոյերը եզրիւրներ ունեն, շներն՝ աստամներ, կրակը, որին
սովոր չես բնու՛ շատ անհնազանդ կայծեր ունի, ու բոցը՝ խաղկանք: Բարձր
եմ սուսեմ «վասն ճանապարհորդաց»ը, այն էլ երկարը, ամենաբնկարը, որ
յիշում եմ, իսկ դու... վերջին մի վիրաւորանք կուլ տալու տեսով դուրը
փակում ես:

Կամս'ց փակիր այդ դուրը, որ քամին չխուծի, չփախցնի մաշկիդ բայ-
րը, որ դեռ կախուած է գլանիկիս ծխի մէջ, թրթուս է շրթունքներս ու ծը-
խի հետ:

Կամս'ց ծածկելիւր այդ դուրը, որ դրսի ազմուկը չյափշտակէր ձայնիդ
վերջին ծուկը, որ դեռ օրօրում է գլանիկիս քուլանքում:

Դեռ խօսք չդառած ազօքներդ բայր բառերը ինձ եմ նուիրում, իսկ
դու միայն «պահպանիչ» գիտես...: Պտուղանիչ՝ առանց որ շարունակեմ ես
ե՛ս, մնալ ու բայրովին չտարրալուծուեմ գայականների անվերջ շարքում:

Լա՛է՛, անցեալի ձայնը, քոզ մեծակ շշուկները մնան: Փակէ՛ք ձեր աչ-
կերը, պատերին կառչած պատերից գունատ արեւի քնար-քոյքեր — այստեղ
էլ հիմա նորին վստուքիւն ինքը՝ Սէրն է յարութիւն առնում: Ես խոստա-
նում եմ նորից ծնուել, այս անգամ միայն ինձ սիրելու համար...

Այդպէ՛ս, հրաշալի կենսափոխութեամբ, երկու հոգեզննից մէկ Հոգու
վերածուած՝ համբարձուի՞ր, սաւառի՞ր, ո՛վ մաքրամաքուր... ո՛վ անդդ-
ծելի...

ԱՐՆԻԻԿ ԳԱՐՐԻԷԼ ԵԱՆ

1982, Նիւ Եորք

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

Ս Ա Հ Ա Կ Պ Ա Ր Գ Ե Ի Ե Ա Ն

Մ Վ .

«*առ Մինաս Մարանը, որուն մականունը, սուրբական ծաղու-
մին կասկանելի մթութեամբը, էլ ճը շքեղ արժիւն է որժամ Սահակ
Պարզեւեանին.*»

— «*Մինչորս, «էջ», «կաւար», «կողորդիլոս» ու աւելի ան-
սելի վերադիրներով ակնակուռ այդ է՛ջը, որ պարտաւարճակ ճը
եղաւ զբաղէտին համար, զայն ընդժիշտ կապող աշխարհիկ շատաբ-
եալին»:*

Այս պատմութեան սկսած պտուռն, անիկա սէր ու սիրտինն է
Գահիրէի նորագոյն *fin de siècle* պատարկութեամբ օժտուած հիւր-
նայներէն մէկուն:

Տարի՛քը:

— Չուրից ունենալ:

Յարգելաւ համար իր պատճառները, կը զգուշանամ ճշդելէ:
Բայց պարտք կը զգամ յայտարարելու, թէ ներկ կը գործածէ: Մարդ
չի հասկնար, առաջին ակնարկով, թէ ինչո՞ւ բախտէն այսքան շոյ-
ւած այդ «պատուական» ու «պատուարեք» սղալիներ անիծէր բախ-
տը, որ զարկած էր դիմը իր ամէնէն կենսական մարզին, մարդ-
բէն: Ճերմակ մարդը զժողով տախտակներն են մեր ասորիքն: Աւելի
զժողով, վասնզի պարտաւոր ենք մեր գանկին հիւսած պարտքնի
անբազմալի բաներ: Մասն հաշուեյարդա՛ր, անկանգնելի սնանկու-
թեան ճը, որով ընդժիշտ կ'արդիւուինք երևայէ շատ ճը սեղեր: Ու
խորհի, որ մարդոց համար այդ սեղերը զսոսթեան պարտէզը եղան:

Ուսոց ու աղբոց: Շատ են անոր սազանդին սանդները: Արագ՝
պիտի մտանամ հիմականներուն:

Մտնազէ՛ա՝ եզիպտական խնոյքներու, որոնք իր մանրիկ
կեանքն փոխադրուեցան ամուսնական յարկին սակ ու տարիներով
կազմեցին ասոր բարձրը: Բայց՝ մտնազէտ յարդարիչ, կազմ-
կերպական հրաշալի կարիքութեամբ ճը այն բացատիկ ուլ գիշերնե-
րուն, որոնք պիտի շլուսան Նեղոսի ափերուն, արեւադարձային բու-
սականութեան ճը քաղակներէն պարագրիւան ու պամպուններու կե-
րտներէն հսկուած հեշտանաւերու վրայ, որոնց թաւաքող կամըր-
ջակներուն, հոս ու հոն, ճարտար գիտութեամբ ճը կորադիմերու,
բաշխուած ըլլան պիտի անդրիններ կիներուն, կերպագրիլու համար
վայելաւոր «հնազանդութեան» աչքին՝ ինչ որ պատմութիւնը կ'աւանդէ
հասովայեցի կեանքներէն, երբ ասանք կիներուն մարմարը կը փռն
իրենց արժու թաթերուն: Ամէն ձեւերով, ծերագիր, թճաւ օճերէ
հիւսած իրենց ճերմակ դիտերը, սաքի՛ յունական անփորներու զըր-
խանոց ճը իրենց գլխուն վրայ, մօրէ՛ մերկ, վազրասանու շուներու
կարմիր լեզուին յանձնած իրենց միտերուն թիտրակ մասերը: Ուրիշ-
ներ, իրարու հիւսուած, թերաշարժ ու կարճանումի հակած, բայց
ցայտեցնող՝ կորութիւններուն զազփազփուն դիտութիւնը: Կիներու
այս փխտտիէր հանելի սեղոր մըն է, որ կը փոխուի թատրոնի ճը
վազազայրին նման ժամէ՛ ժամ, երբ վճարողը «յուշուածական»

նախընտրուհի Համար բայց թուզթ ստորագրէ: Ով գիտէ քանի՞ տարիէ ի վեր կրակէ հետք չզգացած ծիծեկոյզներուն ու կամբջաղիբ Համակ սպիտակ գլաններուն կոթնին պիտի հսկամարմին սեւեր, երկարական լամպիկներու գոյնզգոյն ու խնամուած շողերուն ներքեւ: Մինաս Մարան հին ու նոր աշխարհի դրամի կետարներու ճաշակին ու պահանջին համեմատ, տարիքի, մանուսանդ՝ կիրքի տիպագոթին վրայ չափելով կ'ընէր այդ սեւերուն դիրքը մեհեաններէ վերցուած արձաններու հանգոյց, բայց հոգ աննելով սեռական պաշարքին ու գարծարաններուն լրիւ հոլացումին: Արձաններ, այդպէս ստատած ու ցուցլուծ, որոնք, խուչ ու արտում եղիպտական ջութակի մը հեծքովը յանկարծ հոգի աննէին ու քաշէին, բզկտելու, մին իրենց ստատներով ու ազատ իրենց ներաններով, մարմինները փոքրատէ աղջիկներու, բոզանոցներէն թափուած հոն: Սանկ պիտի հիւսէին ներհուն իրենց ներմակութիւնը, անապատէն նոր հանուած օծերու նման սեւ ըստակներուն ու ճուային, ճուային անգամայն ու կարտող իրենց լացը, մտապատկերը թելազրելու համար վայրագ յօշոտումին, ինքզնիքն կը հանգուածէին կանգններու եւ լորտերու ջիղերը այս դժնդակ տանջանքին: Սահակ Պարզեւեան, ձեւի մեծ խուզարկու, անորակելի տիրութեամբ կը Համակուէր այս անասնութիւններուն գէճ ու կը պոցէր աչքերը, տոտնց գիտնալու, թէ կը գթար իրեն, իրեն թէ այդ թշուառական աղջիկներուն: Անիկա այս խորշերուն ծանօթացումէ էր ըրած դեռ արդէ Նշիպատտէն, երբ Մինաս Մարանը այդ փորթիները կը կազմակերպէր լայնոց ի Հաշիւ, թափանցիկ այլեր, Նշիպատտէն, մեծահարուստ աղաւթներ, ժառանգորդ մքի նարուած, այդ օր սուկիի վերածուած հողերու, անհուն աղարակներու, ինչպէս՝ զեռուն, փոքրացու մեղքերու: Պարզեւեանէն տուալ աւազանիները անշուշտ կ'ախորժէին այս բարբերէն: Բայց գործի մէջ գրամ չինող հեշա ամառիներ, կիլիկիոյ կողմերէն, պահանջը կը գնէին այդ սարքումներուն, ասպանդաւոր, լաշտրէն վարձատրուած հեշախոյզ ու կիսակար փաշաներէ, գիւղերու սեպհակնատէր վաշխատուններէ:

Տաղանդաւոր մասնագէտ, Մինաս Մարանը դարձեալ անապակի փորթիներու, կազմակերպուած՝ աշխարհի հինգ մասերէն, դրամի ու նորութեան մեծ իշխաններու զգայարաններուն Համար: Մեծ հոգեբան, այդ Մինաս Մարանը, հազիւ դպրոցի մը քովէն անցած, իր ասպարէզին բերումով, կը զատէր մարդոց կիրքերը անմրէկ ըստուպութեամբ: Անիկա իր ճիշդ իմաստին մէջ կը հասկնար անխոստովանելի զուպանակները, որոնք գրոտալըջիկի տարազով մարդերը կը նետեն ասպականութեան ու նորախոյզ վայելքներու գուպարին: Հարիւր օտարէ տասը չգտաւ անիկա, որոնք ձգած ըլլային իրենց քաղաքներուն ալ ստատփցած մանճրոյթը ու չվազէին սո հեշտանքի պարտէզները, հեռութենէ զատ ամէն բան աննելու: Կայ տարիք մը, որմէ նաք աչքը կը կանչուի լատ մը ուրիշ զգայարաններ փոխարինելու: Մերերու անտախտուութեանը չէ որ կ'ակնարկէ: Այլ՝ տարիներու, տասնով-քսանով տարիներու մերձադրումէն կրացած, բորբոսած զգուսնքը, որով կը սկսի մեր անկարողութիւնը ու զայն դարձանելու մեր հերոսական անապարանքը: Այդ անկիւնէն աննուած՝ գրոտալըջիկը, հոգեկան արթրիթի մըն է, որ ճանաչայինս տեսարաններ, արձաններ, քարայրներ ու նաւեր կը փնտռէ իր կիրքը թափելու: Թափառակա՛նը, վաշխատունը, անապատայի՛նը Մինաս Մարանի կարծիքով, որ կը յանէր այդ դուքս-

բուն, սեմնորեն, միլիտանտներն Երուսաղեմը կուրծքին տակ Կրեն՝ բըլ, Հարկա՛ւ, Վերու եւ էդ արար զնոսա՛, կ'ընէ Մենդոց գերբըր: — Կգերբը՛ այդ իշխաններուն, իրենց ամլայած կամ խաւար արգանդները ախտելու ի խնդիր: Աւերակեն՝ բըլ, թանդարանն՝ բըլ: Վերին Յղիգատ՝ սըլ: Բուրգե՛ բըլ: Լուզո՛ բըլ: Անշուշու: Եղիգատս ամէնէն գեղեցիկ գիրքն է, որ կենդանի պատկերով մը ունայնութիւնը կը սեւեռէ մեր ուղեղին: Բայց ասոր համար նախ ուղեղ է կտրուոր: Գոտն հաղարին մէջ, որոնք տարուէ տարի կը թափին նեղուտ հովիտը, քանի՛ հաս են անոնք, որ նոթ սանելու համար գունէ մատիտ ունենան: Միւսները: — Կամ՝ իրենց երկիրներուն կերբերը Եղգարիգ՝ մով պղզեղեղու հետամուտ յիմարներ, կամ՝ նոր մեղքերու խուլ մտքիտովը քաշուած հաս: Մինաս Մարան կեանքը սկսու քարափէն: Ու, աւաջին ակնարկով, շէք կրնար իր ճիշդ արժէքին մէջ դասել սահագին նշանակութիւնը այդ սկիզբին: ... Տարիներ յետոյ, ասէր եւ անորէն համբաւեալ Հիւրանոցի մը, անկա, շատ մը բաներ ըլլալուն հետ՝ մասնազէտ յարգարիշն էր անապատային փարթիներու: Զրատող որուն յաջորդ, լուսնայնոյ գիշերներուն, անիկա անաղատ կը թափէր իր շրջիկները, խնամով շնորուած ու ժոտակնի, կաշտակէ ետքը բուրգերու պահակները մէյ-մէկ սիկաւով: Բնիկ, նախնական նուագարաններու հանճարային բաշխումով մը, ուր գերբըրէն ձայնի արգիւններու բացառիկ հանաչողութիւն մը, հետաւորութիւն, հաջի ծփանք, արձագանդ ու հովի ուղղութիւն, անիկա կ'աղչէր արեւմտեան ուղեղներուն վրայ անկշունի, բայց միտի պէս կողուն տիրութեամբ մը, շնո գետեր ինչպէս ճարտած, աւազին թէ սիրտերէն, այնքան ոչ ոք կար մէջնադ, բայց կ'իտամութը՝ այնքան բնակուած, սկստուած բերտուր շրթներէ: Չայներու այս ղէժընդ-գիմումը անիկա սորվիր էր անպայմանքէ: Իսկ անապատէն յառնող ձայնական արամութիւնն ալ՝ պատահակի: Բուրգերէն անգին, Լուսնի լոյս: Ու աւազ: Փոթորիկէ մը յետոյ, որուն աղը, մրուրը գետ կը ծածանի, հանգչած հովին թեւերէն թափթփուն: Ով որ չէ եղած այդ գիշերներուն, դժուար պիտի մտապատկերէ, թէ ի՞նչ մտպական խաղարկութիւն կը բանի լուսնայնոյ այդ գեղեցակար արամութիւններուն վրայ, որոնք սաքիգ ասիկը կը միտն մեղմ կամ կը բունկին, կապատուն, փսփորուն, թաթախուն, ստաղբու փուշի մը շամանգաղելով քայլերու գետէն: Ու ճարակներ, հեղեղատի փեռնկաւումներ, որոնց յարգարուն մէկ խորշին մէջ, Մինաս Մարանի ճարած կիները — ամէն ազգէ — պիտի ընկողմանէին ու լային, միամիտ, բայց արիւնի թեղի պէս ականջներդ ի վար սլորուող նուագին դաշնակութեանը ասկ իրենց ծիծերուն ողկոյցները յանձնած արփին ու ճշլումին, ամէնազգի ճհախոյզներու...-

Մինաս Մարանը եղիգատական փարթիներու մասնազէտ շէ միայն: Անիկա շահեկան տիպար մըն է, արեւելեան քաղաքներու մէջ մեր հայրենակիցներէն սմանց ցոյց բերած սուրբերուն իբր յայտարար Մարգն է, որ առանց նեղուելու, կրցաւ, տարիներով, պաշտօնական իր կնիկէն գատ, պահել սարիչ շորտ-հինգ ալ: Կանոնաւոր, հաստատարի վճարումով, սուսիկ-փուսիկ, անոնց այրերը կամ եղբայրները օգտադրածելով իր ընդարձակ ձեռնարկներուն մէջ: Ձէ անիկա խանութագանի հարեանութեամբ թրծուած փերեղակը, որ շատ շատ պիտի սաղէ իր կրպակը ու Աստուծոյ փառք սալով պիտի մեծընէր իր զուակները՝ ո՛չ աղքատ, ո՛չ հարուստ: Ձէ անիկա անհուն

ախորժակներով ըզմուտք միւս տիպարը, որ բախտին հետ պատեմար-
 աութիւնով կը սկսի իր ասպարէզը ու իյնալով-ելլելով, որին մէկը
 ինքզինքը կը գտնէ զեզան կամ գերեզման: Անոր բնարանը եզաւ վա-
 աւելիլ զրոտը, բայց ոչ շատերուն նման անոր գեղին երեսին սիրուն,
 այլ այն գաւազի հանոյթին համար, զոր կը հանէ անիկա սա ազա-
 ցուն, սուտ կաւէն, որ մարդկային մարմին կը կոչուի: Ու կը վա-
 աւելի, գոնէ վերջին շրջանին, տառաութեամբ մը, որուն ինքն ալ
 չէր հաւատար երբեմն: Բարեպա՛շա, ինչպէս պէտք է ըլլան մերին-
 ները օտար ստաղիրու սակ, իրենց պապերուն տուրքին չգտահե-
 լով, արտադրելի պահելու համար ուրիշ ազդեւորներ, երկիրքէն
 Բարեպա՛շա, չմտածը, ժամէն չբարձած՝ հակաէն թոցուցածն այդ
 լուն ծնունդը, ինչպէս կ'որակէր զայն մեծատաղանդ արձակագիրը
 զուարթ հեղուութեան իր պահերուն, ակնարկելով անոր անթու-
 թեան, երբ տունի աղջիկներ, զուտ արու շտապած, անիկա կը բերէր
 այդ խնճարներուն ու կը վաճառէր՝ մէկ կողմէ նմարին արծաթ գե-
 ակողմ: Ատուտած ինք է գիտնալու: — Անիկա, Գահիրէի եւ Ալեք-
 սանդրիոյ եկեղեցիներուն զպատահական նուիրատուն, կ'ընէր մեծ
 ժեթեր, առանց նեղուելու: Ան էր, որ «հետանաւէ» մը օձիքը փր-
 կելու պահուն ըրած ուխտը զորժադրեց, յաջորդ ցերեկն իսկ, Պէյնի
 Սուրէնի հայոց եկեղեցիին նստարանները վերէն վար նորագելով ու
 հինգած Զահին տեղ նոր մը նուիրելով, արժանանալով հրատարակու-
 յին գրուածքի, առաջարկին օրհնութիւնը գիրին: Ողորմա՛ծ թէ՛
 զազա, թէ՛ յայտ ձեւերով: Երբեք շմբոթեց իրեն երկարող որեւէ
 ձեռք: Անիկա, ամէն առաւ, սուսէն դուրս սաքը չըբած՝ կը հանէր
 երեք խաշ, կը կրկնէր աղանձին ու մըջիւնին առակը, անոր ամբողջ
 սարվածը ընթերցումի գիրքէն ու կը կրկնէր անոր փոփոխակ տարի-
 ծին ու մուկին միւս առակը: Տուտաւ, նոյնիսկ երբ ոչինչ ունէր: Ա-
 նոր համար առաւ հոմանիշ էր սերմանելու: Այս արտաբարանութիւնն
 է, որ կը վարէր անոր ազգաս երիտասարդութիւնը ու հարուստ հա-
 սունութիւնը: Օգտակար եզաւ քուր ինկածներուն, զորքի ձախոր-
 ցութեամբ ազքատացած արհեստաւորներուն, անոնց մանուկներուն
 զպրոցական ծախքերը, կիսօրեայ սնունդը ստանձնելու ասան սքա-
 դելով ապիշցուցիչ արատեսութիւն, աւելի ճիշդ՝ հետապետութիւն,
 Աղպային Առաջնորդարանի մարդահամարի պաշտօնեաց Արամայիս Է-
 ֆլնտինն աւելի կատարեալ կը ճանչնար Գահիրէի հայութիւնը, զոր-
 մանաւէ իր յիշողութեանը շտրկի, որ բացառիկ ընկալչութիւն ու-
 նէր ձայնն ու գիծէ: Այս տուրքերուն ու անոնցմով հետապետուած
 հաշիւներուն միջոցով էր, որ երկար ասան իր բարերարութիւնները
 վերծ եզան թափանցումէ: Մեր ժողովուրդը մարդերը կը գտնէ ի-
 րենց ձեռքին բացէն կամ գոցէն: Այս հնարքներով էր, որ անոր վար-
 կը մնաց անխախտ ու խնայեց իրեն, ինչպէս հանրութեան խղճմտան-
 ըին՝ դառնալոյն պատկերը ներքին իրականութեան: Բայց այսքան
 պոռչութեամբ պահպանուած քարոքական սա կազմակերպութիւնը
 պիտի քայքայուէր մէկ-երկու օրուան մէջ: Անիկա զպատեց տանա-
 րին վարազոյրը, իր իսկ ձեռքովը, յիմարութեան նոպայի մը, վը-
 ուլնուելով իր կինը, օր տարիներէ ի վեր հանդուրժեց էր սուսէն
 դուրս անոր կինը, բայց համարձակեց էր, հասուն աղջիկներուն
 պատիւովը տաղնապուն, գիտողութիւն ներկայելու: Արագայն կար-
 գադարութեան մը համար: Միտա՞ Մարանը մարդը եղաւ, որ ընդդի-
 մութիւնը չճանչցաւ: Կինը, վրձնուած ու զրկուած իր աղջիկներէն,

հրապարակ գրու, իր կարգին, յիմարութեան նուայի մը, նորագգի
 րարերարք, որ սանկ ու նանկ ձեւերով, թուշթերով, Պոլսոյ պատ-
 րիարքարանէն ձեռք ձուռած վկայութիւններով ճարեր էր ազգական-
 ներ, Պոլսէն բերել տա ով ընտանիք մը, երեք աղջիկներով: Հօրեղ-
 րա՞յր, ժօրեղրա՞յր, դրած էր անուն մը ինքնիրեն ու անոնց մէջտեղը
 անցնող: Մինչեւ հոս, Մինաս Մարանը հաշտ էր իր անցեալին: Բայց
 ահա յիմարականք: Անիկա, օտարուելով աղջիկներուն մէկուն խընդ-
 րանքէն, բացաւ իր տունը՝ խուժրին: Անոնց մայրը՝ չքուտրութեամբ
 դատարարական, աւելի ճիշդ՝ երեք աղջիկներուն գեղեցկութեամ-
 քը ուժուար, անցաւ իր դերին: Աւելին երկու կիները առաւ մը
 իրենք զիրենք գտան իրարու գէժ: Տիկին Մարանը պարանք չունէր
 իր մարդուն պայտուսներէն: Անիկա զգուշացուց իր գէժի մայրը, որ
 չտնչը առաւ ճօրեղրայրին սենեակը: Մինչ տա առաւուն, ամիս էր
 անցեր: Կնամուտն, հազուաւ ու փայլած էին երկատարուհիները,
 ոյրոյտական նրութիւն ու հով սփռելով ու Սփլանտիս Փարսին փար-
 թիներուն մէջ հայկական աժան հրապար մը բանալ կրնայով բազ-
 մազգի աղիներու խաղաղ փաղանգին դիմաց: Հանրային դնահասու-
 մի խուր բաժին մը չէր ուշացած շարտուական ազգայինին հաս-
 ցէին: Օրհնակցաւ անոր սեղանը եղիսկոպունէն, որ կիները կ'առէր,
 բայց մեղքով կը հետաքրքրուէր, իմացական սփռուքէ, ճանչնալու
 ոչաբէ մը բանավար: Զարգացած այս եկեղեցական կիներուն գոր-
 ծած աւերները հաւաքելու մենամուտիւնն ունէր, ի հա:իւ մեծ իր
 գիրքին, որ մեր ժողովուրդին բարոյական շարժողութիւնը պիտի
 համապատկերէր ու այս հետաքրքրութեան սիրոյն կը շփուէր անիկա
 մարդոց ամէնէն հարուստներուն, գուք հասցէէ՞ք՝ Նիղերով հարուստ-
 ներուն: Գիտութեան, գիտնալու այս ոչաբն էր, որ զայն կը շեղե-
 ցնէր իր պատկառելի հարաբարութիւնն ու կը ժօռեցնէր զայն ամէն
 կարգի Մարաններու: Եղիսկոպունէն զսա՞՞ն ահա այն ազգային կազմա-
 կերպութիւնները փութացին շարժաւորել այս անգամ յայտնի գրա-
 րերարութիւնը: Մինչեւ որ, կինը տունէն ներս ենթարկուած իր նա-
 խտանքին չկրնայով հանգուրծել՝ ծառայաւ այս նորատեսիլ, անի-
 մաստ կարգադրութեան գէժ: Ծուն չէր պակեր Մինաս էֆէնտիին:
 Բայց յամաութիւնը գերազանցն էր Մարանին կիրքերուն: Հոս պրդ-
 տիկ փակագին մը, փանջի այս սողերը գրողը կը կարծէ, թէ մեր
 զեղային գօրծարութեան մեծագոյն գործուարը այդ կիրքը եղած է:
 Մեր պատմութիւնը անուշաւ մտաբ չի գնիր ճիշդ վերջին վրայ:
 Բայց գեւ Օդոտտոսի գարէն հայ նախարարներու պատկերած ան-
 միարանութիւնը իրողութեան մէջ շատ չի արբերի չիմակուան
 մեր հակամարտութիւններէն: Աթոսի մը համար մենք չենք փարանիր
 գտել մեր ցեղին: Աւելի սխալքը, ոչ մէկ հզօր զգացում կ'չիւ-
 ունի այդ գունչի կիրքին գէժ: Մեր բոլոր մեծարկիները ճակատա-
 դրուած են անփառունակ վիժումի, փանջի մեր ամէնուն մէջ լերան
 ոչէս կանգուն է հակամարտութիւնը, ուրիշ խօսքով՝ իր գիտցած ու
 խորհածին վրայ կառչած միայն յամաութիւնը: Տիկին Մարան,
 պօրթ ու գլտտա, երեւան բերաւ իսկական գէժըը շարտուական ազ-
 գայինին: Պարզուեցաւ անոր չիմական մասնազխտութիւնը (նեղու-
 կան ու սփինքան կազմակերպութիւնները քիչ մը հասարակ, այ-
 սինքն՝ շատ անգական կը մնան, երբ ժօռեցունն սա անսովոր, դրժ-
 տար բարանելի հեշտարտութեան) — աղջիկներ պարտասել, աղ-
 ջատիկ տուներէ, անոնց խնամակալ-պաշտպանութիւնը ղեկավարե-

լով շատ հետունքին, առանց երեսալու, խնամքով վարագուրած
 էր հետահիւս նպատակները, ընտրելով զկտորըս պզտիկուց, գուշա-
 կելէ յետոյ անոր զեւ անկազմ գիմազիծին վրայ պատանութեան ու
 տուրի հասունութեան, արքունիքին յաջորդ արագօրէն բողբոջող հը-
 բապոյրին խորութիւնը, այգբան կանուխէն: Դնելով զայն զպրոց,
 մի:առ առանց երեսալու, ընելէ ետքը շրջանաւարտ ազգային վարժա-
 րաններէն, հասնելով եւրոպական գլորոցներու մէջ անոնց ստանալից
 լիզուական ջարակին, ազատելով շարժուց համբերութեամբ անոնց
 լրիւ, հրաշխտան փթթումին, որ աղջիկներունը կ'ըլլայ ասանըն-
 թին եւ քանին մէջտեղերը: Այդ շրջանին էր, որ անիկա զգալի կ'ը-
 նէր ինքզինքը, ասնելով օրիորդը, իբր բարկղակալ, պիւրոյնի մէջ
 ճնասուածին հակիչ ու իւրահար ուրիշ պաշտաններով, մի:առ ան-
 տարբեր, շտանելով խուչ ու վարանտա խտովքները, օրոնք կը յա-
 նեն աղջիկներուն կուրծքին, այգպէս մուշտ հաստատութեանց խ-
 որը, մտանցնելով անոր տարեկից երիտասարդներ, լռին հաւանու-
 թիւն մը, նոյնիսկ քաջաբն մը գուշակելի ընելով, մինչեւ որ բարե-
 կամ աղջկան զէմ բանար իր իսկական զէմքը: Վրիպ՝: — Չու-
 նեցաւ զրեթէ: Վասնչի կազմակերպող անոր տաղանդը կը հակեր ա-
 մէն բանի, մանաւանդ փախուստի ճամբաներուն: Անոր մեռքին առկ,
 պատրաստ՝ բանակը իր արարածներուն, որոնք կամուս"ր, թէ իս-
 կական անգիտութեամբ մը կը փութային, զրեթէ առանց աղմուկի
 իրենց անունին կապելու այդ աղջիկները, զարգացած, կոկիկ գը-
 բամբոխով, գեղանի ու տօրեայ շփումով արդէն իրենց սիրտին
 վրայ հեղինակութիւն վայլող (մեր զգացական կեանքը կը զեկա-
 վարուի այդ հետուր ետին շուքմունքովը: Այնչ'նչ այնքան հզօր է սե-
 աային մաղնիտին վրայ, որքան ամէնօրեայ շփումը): Վերտ անը-
 ւած այդ օրիորդները, հաւատարիմ բարեկամուհիներ, իրենց քոր-
 տուղար, զործակատար, յանձնակատար, մտքուան, վաճառորդ,
 շրջիկ ու հնութեանց մտանալէս ամուսիններով կը կազմէին Մինաս
 Մարանի պահեստի այգոմը: Անոնք զործածելի ալ էին ուրիշ, ցած-
 ցած փարթիկներու, բայց երբ ճնովափ իջնէին, արտայայտիչ բա-
 ցարտութիւն, այնինքն՝ իրենց սորվածը ճանկնէին, անցնելով ան-
 դին մարանեան օրինադիրքին յողուածներէն: Անշուշտ այս մասնա-
 ղիտութիւնը իր ճփայլուն տառաւիտութեանց մօտ ունի նաեւ իր փու-
 շերը: Մինաս Մարան էֆէնտին երեք-չորս յարկերէ, ինկաւ գեարն,
 բոյց կատուի պէս, ոտքերուն վրայ ու փրկից հեաքը: Այնքան՝ որ
 տարիներով ճիւրտին նետած նահատակ ու գերի անոր կէնը վաքնա-
 լեցաւ իր բոյրը զիմուններուն մէջ: Անիկ՝: Պատմուեցաւ իբր ան-
 հաւատարիմ ամուսնական սուրբ յարկին, ուր երեք որբաուուն որբու-
 հիներ աղքատութեան իրենց դատակնիքին կ'ազատուէին, զարգացած
 հայուհիներ ըլլայ պատրաստուելով եւ որոնց բախտին ճաշաղկոտ
 զրպարտիչ մըն էր անարժան կի'նը: Էրանուեցաւ իրենց պատկը: Չըր-
 կեցին զայն ամուսնական իրաւունքէ: Վտաթեր համար իրենց հոգին
 սեւողներ պաշտօնապէս, գրուար (ստամբոլդը իզմասանքները ա-
 պահով ընելու եւ ապառայ պատակաւ աւաթումներու ապարդիւն
 ձգելու համար չէր բաւականանար վկաներու ունկնդրութիւնը ընդ-
 լայնելով շատերու շրջանակին, ալ կը ստիպէր զանոնք գրաւոր,
 ճատրոգովի, վաւերացնել իրենց հաւատարմութիւնը, ինչպէս նաեւ
 ճլուղի, ճլատներ զաստատանական ժողովոյն հաստատեցին Տիկին
 Մարանի անհաւատարմութիւնը, անհերքելի՝ փաստերով, հանուած



իրենց իսկ առաջակէն: Արդարութեան այս եղերակառակը ամէնէն տիրուր ու փռած մասն է արդի քաղաքակրթութեան ու աւելի պճաւորի, քան միջնադարեան Հասարակական անհնարեթ մեկերը: Այդ իսկ վճիռով՝ անոր կերպ կը գրկուէր ազնկաներէն, որոնք Փրանսական ու անգլիական միջնակարգ վարժարաններու մէջ արունակեցին զարգանալ, արձակուրդներուն, իրենց ուսուցչուհիներուն հետ, Եւրոպա կամ Ամերիկա գրտական եւ ուսումնական պատյաի մէջ անցընելով զարտադուրդի շրջանը ու, հիւրի պէտ, այցովէ, շարժումն ճը լափ հազիւ երեւնայով հայրենի վիլլայի մէջ: Գիտէի՞ն անոնք ազգականներու, հետաւոր գուզկաններու ուղեգրութիւնը: Բաներ կան, որոնց անձանթ մասը կը փոխարինէ ծանօթացումին անկանգնելի խորտակումը: Անոնք, նման ամէն աղջկէ, որ օտար վարժարանի մէջ գիշերօթիկ կ'ապրէ քանի ճը ասրէ, օտար էին գրեթէ իրենց հորր, որքան ճորր: Հաւատացի՞ն վճիռին: Հանրային կարծիքը սերտ ուղտաներու մէջ կ:իւրի կ'ելլէ: Մեծ քաղաքներու մէջ կեանքը այնքան արագ ու նոր է, որ ասաներու պղտիկ ուղեգրութիւնները ասան յունին շատ անանալու թառերարեմին վրայ: Մոպուեցա՞ւ անիրաւութիւնը, երբ Միտա Մարտը պետական զնահասութեան արժանացաւ, սեզացի բարեկամներուն խաղաղակալը, իրր գրտաշրջիկները իր ազգանդովը Եզիպտոս քաղաք ազատկար անհետարութիւն: Իրազութիւն էր, որ մոպուեմ էր անոր հետու անցեալը, այսինքն մա՞րդը՝ երբ հարուստ չէր:

Տրագիկանքի թէ Մամսնի կողմերէն (անիկա ինձաճով պահեց հորնական քաղաքին իսկական տնունը: Ամէն գաւառացիի նման, անիկա պալտեցի կը ծախէր ինքզինքը) Չուան Միտաը — աչգէր կը կոչուէր ջիթին սանտարիան ազմուկին համար — աչքը բաց, հանան-վարան ազայ մըն էր, որ կանուի լսեց ծովկերեայ իր քաղաքիկը ու բախա փորձեց Պալտայ մէջ: Պանդուկէ ճը, ուր մասն էր ան իրր սենեկապան, անիկա թացուց դրամապանակ ճը ու շունչը առաւ շողանաւ, որ զինք նետեց Պէլլայութի: Հան ըրաւ բուսական մութ գործեր, որոնց վրայէն կ'անցնիմ, ու կը ծանրանամ առաջին մեծ արարքին — ստամարայթի աշկերտ, զիտէ հանեց Եսզզատի իր վարդապետի ազնկիւր ու լսեց ան ալ, վտանգի հայրը շրտարկեցաւ անհրաժեշտ դրամախար ջնձալու: Արտական բարբերու տեսլին այս շփումը զինքը ըրաւ աւելի յանգուզն: ... Աղեքանդարիտ, ազնկի հայթայթուզ՝ համաշխարհիկ արիկաներուն: Պատերազմի՞ հարուստ, թէ մեծ հարուստի հերտ: Անիկա Գահիթի վաղեց, Սփլանախա մթնէն առաջ, երկաթի մեծ վանտառուանը ասրէքը ասած, բայց իսկուպի հաստուի մը: Տարիէն ընկեր: Երկրորդին՝ աէ՛ր, վանտառուանին յանկարծաւառ մահովը, որ բուսական ազա հոսեցուց թերաններէ, բայց չհասեցաւ: Ազգային առաջնորդարանը հազիւ ազատեց զոյրերուն մէկ մասը անոր երթաններէն ու պատաղարեց անոր այրի՞ն, որուն սիրտն էր կղած հարտար ոսմունցին, առաջին իսկ ամիսէն ու Տարի մը ետքը անցաւ անիկա մեծ անձնաւորութիւն: Եզիպտոսին յատուկ է ճարգերը այսքան շուտ ընդարձակել:

Պարզեւեանը կը ճանչնար Աղեքանդարիտայէն, զիգմիւրցի՞ անոր սիրուհիին հովէն ասնուած: Հարուստ պէշիբու, փաշաներու հաշուայն անիկա աշխատեցաւ այդ հայալէն կնիկը քաւել իր ցանցին, փորձ, կահուզ, զմեքաքա լարերով հիւսուած, ինչպէս կը պարծնանար: Անոր սուրբերէն մէկն ալ այրերու ճանաչումն էր անվրէպ սկ-

նարկով: Առաջին իսկ տեսութեան, ճշգից պատահարին տարողութիւնը: Ոչ մէկ բանի ահիս կապող սա ճե՛րը, այդ ապաւորութիւնը անոր չէր խարիք զինքը, առանց զժուարութեան պիտի քաշէր ձեռքը ետ, քանի որ բունի առած էին այդ ձեռքը արդէն սա զգիտւածին մէջ — քա՛ն՝ սրով որակեց մեծաազանգ զբազէալը զոյգ սղիւթութիւնները, Գոհարեան Արասէն էֆէնտի կործանումի ու աղքատահամի ապրանք պատրաստող անոր կնոջը ապագայ թշուառութիւնը: Մինտ Մարան զժուար հաւատաց իր ակամօջներուն, երբ յոնց, գարիջուրի սեղանի մը դիտուն, զբազէտին արածութիւնն ու խոստովանութիւնը՝ իր զկանակին այդպէս բունի Հեծած կնիկէն: Ու արագ, անցաւ զբո՛րի: Ձէ՛ր խարիքը կնիկերուն սիրտին: Իրողութիւն էր, որ անիկա թեթեւ, հանցախնդիր, ու զբազուտ ընտարութեամբը իր զէ՛մ էր ունեցեր զգիտածառայց՝ ապրանքներ: Իր առաջին յարձակողակոնը, յեզուական սանձարձակութիւն, շատաւ իր նպատակին: Տիկին Գոհարեան մտիկ չէ՛ր ըրած: Այն ստին, անիկա կործնուց իր համարձակութիւնը, զբաժով շտցնելու կին մը, որ մականունը արդարացնող պիտութիւն մը մզեր էր հոսին: Եղաւ խորամանկ, թափանցելու համար զսպանակներուն, որոնցմէ մղուած իջեր էր Տիկինը սա խենթութեան՝ զանկուտիւն մը հետ փոխելու պարտան ու սակին: Գարգ այս զճանկանութիւնը, բաւական փա՛ստ էր հողերան Մինտ Մարանին, արզէտի ան ընէր զիջումներ կնիկերը դասելու իր սկզբունքներէն, տարբէն նման զբազէտին պաշտպաններուն, ու քաշէր զգուշուար: Հարուստ տիկիններ (Մինտ Մարան մարտամանորէն տարվեր էր պատահարը, անոր իմաստը, իր միջի սարողներէ, հարուստի աղաք, որոնք զեղեցիկ այդ թաղաքին կործանումէն առաջ կը պարտէին աշխարհներ, սեւ ու գեղին հանցանքներ համաեւելու, ու միտերու պազարին մէջ լիարուստ վտանելու ինչ որ իրենց հայրերը զիգած էին յանախ աշխարհ անդթութեամբ մէջնուն, բայց մանաւանդ իրենց անձին զէ՛մ): Գրագէտին գիծէն սիրող մը կուրծքի միայ վարդի պէս կարող էին պահել, առան զայսին անպատահանութեան, ապրելով իրենց պաշտպանի գնացքը, վայելելով զբաժին ու գեղեցկութեան բոլոր տարբերը ու պահելով մանաւանդ թանկագին հարստութիւնը, մանձրոյթի կամ յազնախտի պարագային փոխելու սիրողը, անըն առնելու համար նորը, թերեւ՝ աւելի թարմ, աւելի կրակոտ, աւելի զբոլորս: Այն սաս՞ն: Ձգացում: Լրջութիւն: Մէ՛կը այն խորունկ յիմարութիւններէն, որոնք վեպերու մէջ կ'երգուին ու կը մեծցուին: Անիկա զժուարաւ հրաժարեցաւ պատահարին խոռվոցէն ու ըրաւ մէկը իր դասնագոյն զիջումներէն՝ զարձար տեթի յետմզելով՝ Տիկին Գոհարեանին զինչորոք ու անոր զլուծումը: Սեռային այնպիսի ունի առանկ արժատաներու հարց: Աւելի ճիշդ պիտի ըլլար անոր զսպանակները կապուած կարծել նկարագրին միւս հետառես գիծերուն, աղջիկներու սուկաններէն, որոնց մէջ անիկա դրած էր նախախրութիւնը, փոռախրութիւնը իր կեանքին: Ատ էր պատճառը, որ չխցեց կապը գրագէտին հետ, խորապէս արհամարհելով զայն հողիէն: Գործի, զբաժի հասունող մարդիկ սչինչ կ'ատեն այս աստիճան ուժգնութեամբ, որքան մակարուծային սա արարածները: Ատիկա անձնական դերակառութեան միայ իրենց հաւատքը ամբապնդող պատրանք մը չէ միտակ իրենց մօտ, այլեւ՝ աշխատանքին կոյր մղումը: Ձխցեց կապը, արուստագէտի յարաբերութիւնները ո՛չ թէ արժեւորելուն, այլ՝ միշտ

իր հաշիւներուն համեմատ, քաջելով իր խորունկ համբան: Միշտ տեսիլ խելացի բան է լրագրող մը բարեկամ ունենալ, քան թէ թշնամի: Տրուած ըլլալով մեր բարձրուն ամբողջական ազգայնականները, թերթի մը սիրնակը միշտ կ'ըլլա ունի: Սահակ Պարզեւեան, իշխանը մեր լրագրողներուն, տուած էր այսպէս յայտարարելով: Յետոյ պարագ սեղը չէ, որ մարդ կ'ըլլայ հարուստ, կազմակերպող, ու քարտփին վրայ աշխատութեամբ ու զողովեամբ սկսած կեանք մը կ'առաջնորդէ բարձրագոյն, եւրոպական գոյնով ու կատարելութեամբ հիւրանոցի մը գազաթը մինչեւ Անիկա, հակառակ խոր իր ասելութեան, պաշտպանեց զբողոքներն վարկն ալ, գովելով անոր գրիչը, որ մէ սխնչ կը հասկնար ու չէր կորցնար տող մը բան: Թափանցող անոր նայուածքը չափած էր զարմեալ վառութիւնը անոր հոգիին, այն անպարակելի մեւով թոյլ լարուածքը, որով կարգ մը մարդեր երբեք պիտի չըլլան ինչ որ կ'ուզեն, այլ պիտի ըլլան ինչ որ գուրսէն, դէպքերէն, կիրքերէն ժառ ու մղում թելադրեն իրենց: Ստորերկրեայ հանայնեցու հետամուտ արարածները գոյնիցներ են: Սահակ Պարզեւեան, երբեք երիտասարդ, հոգեկան ծերութեան ալ սա մուտքին, սկսած քանի մը սորիէ ի վեր, պիտի կործանէր եւ պարտական գիշարանն այն երիտասարդներուն վրայ, որոնք կրակի պէս կ'աշխատին միտին ու սուկին վրայ: Այդ ս'ըրը: Դուք կը հասկընաք անոր վառակը, Օրիորդ Սոնա Գունարեանը: Աւ արդէն մեզի նախ թր ճամբերութեամբքն անիկա եղաւ հուստարիմ սպասողը: Անշուտինդիր, նեղ սրբաւ հասնող, միշտ մեռքը բաց, հանոյքի եւ զբոսանքի իր բազմազնի միջոցներով ու ճարտանք սիրտով բարեկամ էր անիկա Սահակ Պարզեւեանին, որ աշխարհը գտնելով իր անմէն, անոր բարի մէն երեւոյթ կը վերածէր այս վերադիւրներուն անկեղծ փոսրին: Իր հարստութեան մեծամը զեղեցիկ շուրջ'ա մը, որուն տակ թաղուեցաւ վանտուած կնոջը ողբերգութիւնը: Վերաւունջը զորուորինն է՝ ս' ճխայն ազգերու կրկնէն, այլ մ'անուանող բարձրու կրկնէն: Մեծ քաղաքները կը նպաստեն այս անարարութիւններուն ու կ'ուրանան մինչեւ իսկ մեղքը, չեմ ըսեր բարիքը: Բաց էին Միմաս Մարտինն առջեւ մեծատրուստ բոյսը սրահները: Հիւր կ'ընդունէր այցովի Եղիպատս իջած կղերականները, խոնարհներէն մինչեւ արքայիկոպտը, գրադէանները, արուեստագէտները, երգչուհիները, երաժիշտները, մեծապատիւ ժուրնակազմութեան հանդէպ պահելով խոզ գայրոյթ, բայց գուարճանալով այդ ճեղքիկին խմբակին ճարտուկոտորք գծրախոսութեան: Կը փրկէր անոնց ներկայացումները իր գործակատարներուն բանակովը, զետեղելով մերժըած ամսակները իր անմահական այցեքարտիկովը: Ակրոր պէտք էր առաջնորդին հետ, որ խորունկ փրիխոսփայ, մարդոց տիրութիւնները կանուխէն բնորոշած, յուսկնութիւն կը գնէր այդ ակարութիւններէն հանկու կարելի զեղեցիկութիւն ու պատանքի մուէն իսկ շուտենալով հիւրանոցի վարիչ, պատուական ազգային Միմաս Մարտինի ներքին արժէքին վրայ, չէր արհամարհեր զի մեզս ծնեալ ու սընեայ անոր բարիքները ու կը գործածէր անոր առատաձեռնութիւնը ստեղծական կարիքներ, նեղութիւններ գիմաւորելու: Ո՛ր ծաղիկը ազը շուէր իր արժաններուն ճթաքնաթաղուրք ուրբերուն: Այսպէս կը մասնէր ճեղքէ ու բարիքէ՝ վեր կենալ դիտող ու ամբողջ աւազանին՝ ինչպէս մեծապատիւ մուրաքիանները խառնակի պէտ խաղցնող սրբազանը ու կ'ուտէր անոր հացը գարշապին ծածոց մը բա-

նի նման, բայց կ'ուսէր: Եկեղեցիի պետին այս բարեացակամ շէգո-
 բութիւնը շարժարարաց աշուշտ անոր ճեղքերը, բայց պահեց զայն
 գոնէ իր ցեղի ծոցին: Անիկա մարդն էր, որ որ ցերեկով կրնար իս-
 լամանայ, կնիկի կամ աւելի քան չարքի մը համար հակառակու-
 թեան հանդիպելուն: Տիպարին այս կողմերը գծած աստեղ, նկատի
 շունիմ անոր բարոյական կէտը: Սրբազանին թելադրութեամբը ա-
 նիկա ձեռքը ըրաւ բայ զպառ աղբատներուն: Օգնեց, հետուէ հետու,
 օտար զաղաքներու մէջ ուսանողներու, հայրենակցական ժողովու-
 ներու, ասմկազարներու, հնչակեաններու, գաշնակցականներու, ա-
 սոնց վարչներուն հետ բարեկամ, հաճոյակատար: Բայց, ամէն բա-
 նէ աւելի, անիկա մնաց հանգոյցը այն հանոյախոյզ խմբակին, որ
 իտրապէս ապակեանած, հելաութիւնը կը հալածէր իր ամէնէն նոր-
 ինչպէս ստորնազոյն ձեւերուն մէջ, զորհէ զորհ, ու ապարանքէ ա-
 պարանք, օճառի շրջիւն նման կիները — ըտողներ եղան՝ յեղհակա-
 ները — ձեռքէ ձեռք ստեղծելով: Պէտք է կարճ ըլլալ...: Աներես,
 յամառ, բազմահար: Մայր աստիճան ճարտար, հետզհետէ շար-
 ւած՝ իր փորձառութեան զոպանակներէն: Զեռնթափ՝ Տիկին Գա-
 հարեանէն իր հաշուոյն, բայց յուսալից անկէ՝ աղջկանը հաշուին,
 որ անբարոյ սրբաւարի մը ու զժրատ մօր մը հետ ամէնօրեայ ճա-
 կատումէն, ժանդէն ստանար պիտի հողեկան համակերպ բարեխօսու-
 թիւն: Անոր փորձառութիւնը շունէր վրիպած այդ կարգի զաղապա-
 րակամ ընդհանրացումներուն մէջ: Գործի մարդիկ սարբեր կը դա-
 տեն, քան դիրքերու հերոսները ու կը դատեն որութեամբ ու արագ:
 Անիկա որոշած էր խաղալ այդ աղջկան վրայ: Ան խաղալը ամբողջ
 ծրագիր մըն է Մինաս Մարանի կազմակերպող ուղեղին համար: Զե-
 րի շրտի տակաւին, թէ ներմտկներու առուտուրը անիկա վերածեց
 բարձրագոյն իր սարաղին ու հասարակ աղջիկներու շարժաններուն
 մէջ մարդուած իր ռազմավարութիւնը գործածեց բարձր դիւանագի-
 տութեան վայել սարազումով: Աղջկան մը վրայ խաղալը զուք կը
 հասկնաք քիչ մը: Բայց ատիկա պղտիկ երեսն է գործին: Արեւելքի
 մէջ դրամը, բարձրը, քիչ մը ցեղային պայմաններ տարբեր կը հըն-
 շին այդ առուտուրին վրայ: Ան մեծահարուստ աւագանին, տեղա-
 կան ազնուականութիւնը այցովի իշխանագուն սրիկայութիւնները
 Գահիրէ կը քանն ամէն կարգի զվանտեղի տոմսակներ: Պէշեք
 կան, փաշաներ կան, որոնք տուլթաններու դրամը ունին ու անոնց
 կանանոցային ողնայարները: Մինաս Մարան օտար շրջանակներուն
 ալ միջնորդը եղաւ: Ինքնատիպ, փորձ իր խաղարկութիւնը: Որուն
 օրէնքները կու պային իրեն իբր հողեբանական անհերքելի Փալթեր,
 փրցում՝ թարմ-թարմ, հարուստ իր անցեալէն: Գիտէք զաշխակին
 դրուաղը: Բայց չէք գիտեր անոր ուրիշ մէկ արհեստը, սակերչու-
 թիւնը, ուրիշ կը հասկնար այնքան, որքան պարտաւոր է հասկնալ
 ամէն հարուստ հայ, ակնցի կամ ոչ, ծուղակի շգալու համար վա-
 տերուն խարդախ գիտութեան առջեւ, բայց որուն փառաւոր ապա-
 ցոյցները կու տար անիկա, երբ հետզհետէ դրամով նեղ, բայց խո-
 րապէս հպարտ ու անմատչելի Տիկին Գահարեանին մատնեներն ու
 մանեակները ճներքեւ ձեռացը կը հանէր ծախու ամերիկացի հա-
 րուստներու Պան-Պալիի (սակերչական շուկայ) Գահիրէին) անսխալ
 սակէն միշտ վեր գիներով: Իրականին մէջ միշտ վար, վճարելով
 տարբերութիւնը քոսակէն: Գիտցաք ասիկա: Բայց չէք գիտեր անոր
 շարտառու՝ զրատութիւնը, ինչպէս որակեց օր մը Մահակ Պար-

գեւեանը անոր ճակատը կամրուրելով, — իրականին մէջ փառահեղ ՊԱՐՓ, բայց այնքան յաջողակ տարուած, որ խաբած էր նոյնիսկ ամէն պատրանքէն զուրկող սրբուածն ու մինակ գրականին դերի Սահակ Պարզեւեանը: Վերադառնալն է պարզաբանութեան սա շափը այս գրողին վրայ, որ զուցէ բռնի ինքզինքը խաբելու պահանջէ մը տակ օրորած է իր զպատրուիլը ու չէ՛ կասկածած աստատանունութեանը վրայ իր բարեկամին, ինչպէս ասեմին մաքէն չէ անցուցած կասկածի ենթարկել շողեքոս հիացումը գրական խմբակի մը, զեկա-վարուած լուծալուփոխութենէ շտանարն ապաստանած, իր օրին զսահմայապետ, այսօր վարժապետ ու փետրաթափ պոռնկագրէ մը: Անիկա ամէն տարի տասնով-քսանով կը դէնր Վնդսեմեան տարեցոյցաները ու կը ջրուէր ձրի կամ կը վառէր: Գիտցաք աս ալ, Բայց չէք դիտեր անոր սիրուն, փոքր, անվրէպ, երիցս սուրբ ու երախտիք հարկադրող բարեմասնութիւնները, ծանր, սրատուչ փութկոտութիւնները, Կապանդի, Զատիկ, անուան տարեգործներու արժեքով անոր հարած ու թաքթով շարժադրած անակնկալ նուէրները, որոնք տարաբախտ գրողներին զբազակովս իսկ ապելու չէին, քանի որ Տիկինը եւ Օրիորդը աս լքումին իսկ մէջը, զեռ չէին պարզուած իրենց իզմիրեան կերպերէն, մնալի խաւերէն: Ամբողջ այս ասպարհափութիւնը կը հպասակէր մարդկային հոգիի խոր ճանաչողութեան: Վե՛ն՛ միլիոնով բարեքները աւելի չեն արժեք, քան դաւաթ մը սուրճը՝ աս՛ք, համոզուած, բարձրաբարբա՛ն: Ու ինչպէս ամէն բան մէջ, Հոս ալ իրն էր իրաւունքը: Պետականութենէ զուրկ ժողովուրդներու մէջ բարեքի զազափարը ենթակայ է այս կարգէ այլ լայնումներու: Այսպէս, Պոլսոյ մէջ, զարէ մը ի վեր, Ազգային Հեւանդանոցը այդ զազափարը զարկած է որսչ կազապարի: Երբ մեր գաւառները կային, անոնց ալ եկեղեցիները զարու ուրիշ կնիքէ մը ստացած էին իրենց խոնարհ, բայց անուն ու զիմացկուն նկարագրերը, ինչպէս է մեր ժողովուրդը ինքնին: Եզրապատի մէջ բարեքը զգացած է ազգայական, անհասական նկարագիր: Ընկ, ինչպէս ասեմի՛ ելած են իրենց կազապարէն ու վերածուած այդ փերուան կարելի անհնթութեան մը: Մինաս Մարանը օրինակելի, պատուական, պատուարներ ազգային մըն է Հոն, ինչպէս ան միւսը, որ իր կինը կը զործածէ իր փառքին իբր սանդուխի աչք, ձեռքովը հրելով զայն պետական շրջանակէ բողոքեան ու երկրորդ յարկ բարձրանալէ յետոյ կը լուծուի անկէ, գաստասանական պատկանելի ժողովին վճիռովը, պետական իր պաշտօնը հաղնելով իբր շուրջառ սրբութեան: Ու կուտայ տարին քանի մը Հեղ: Գարձեալ Հոն մարդիկ չեն նեղուի երբ խանութի, զործի, պանքան պահեստի տէր, իրենց գաւառներուն ազգային գպրոցէն ձրի ճալ մը հայթայթելու համար վկայականի մը ետեւէն քաստուս զուռ կը ծեծեն: Չէ՛ որ ազգը ունի ու ազգին մն իրենք ալ, Իրաւ է, թէ շտալը՝ չէ վերածուած ժողովրդական այն միայազաղ ձեւին, որով աչքի կը զարնեն զտանելուսն ծալքերը երբեմն տխուր որդերէ բնակուած: Այդ է պատճառը, որ Հոն ըլլան Հանդիպելի բազմաբազէտ այդ տիպարները, որոնց վրայէն իշխանստ-սիրտ անուններ կապուին փոքրոզի արարածներու, ազգին դիւզիքը նը-ւիրող ազաներ մօտիկը գրուին ժամուն վարապոյր մը կամ պանդակ կախողին:

(Շար. 11)

Յ. ՕՇԱԿԱՆ

Մեծ ԹԱՏՐՈՆԸ...

Մեծ Թատրոնը հիմա շկայ,
 Մեծ Թատրոնը շնչուած է
 յիշողութենէն —
 Հիմ կառայց մ'է,
 ուր շատ ածամ
 շարժանկարներ կը ցուցադրուին...


Գուցէ եւ սեղ մը պէտք էր ջնջուէր
 այդ շրջանը, ուր
 նման պերճամբներ տրտմուած էին —
 Սէրեր մեծ ու վիպապաշտ,
 գարդախուցներ,
 քառերադասներ մեծ *սեփեր*ներով,
 կենցաղավար շարժումներ,
 միշտ խօսուած բառեր,
 շեշտուած շարժով կիներ, նայուածքներ
 եւ համդերձանքներ, վարդեր կարմրագոյն...

Եւ հաւանաբար մոյմ արուեստական
 բառերն կու գային
 հնչել որսինն եւ բնին վրայ,
 իսկ արարները, միշտ անիրական,
 կը շարունակուէին...

Մեծ կիրճերու, սկնկալութեանց
 դարէն աւանդուած,
 այդ հակասական,
 արդէն անհետք
 էի'ն, Թատրոնը Մեծ,
 ինկած դի ինչպէս
 մոռցուած, քանդուած թագամտերուն
 կը մնայ անթալ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Տ. Ն. ԼՈՐԵՆՍ

Ազգերն լեզուով, շեղծիքս և՛ եւ շեղծիքս 20 խորագրով հրատարակուած են սնդիկա՜յի գրուէտ, զէյտի ճարտրիչի սիրածորքս գիրքն ծածօթ ճգրեակին՝ Յէյլիս Ներպրթ Լորենսի կարգ մը գրութիւնները, որոնք իր գրած ջանի մը յառաջարկներն կամ այլ գրութիւններն առնուած իր ճառերումներն են եւ կը ձեւորուին իր գրական ըմբռումներուն եւ իրեն կամ մեղադրանքներուն:

Այդ գիրքերն առնուելով, ֆրանսերն լեզուով լոյս ընծայուած է 'Հասար մը' շերտ է ինչի՞նն խորագրով:

Ստորեւ արուած գրութիւնները այդ Հասարին քաղուած Հասարներն են:



Բ. Փ.

«ԲԱՍԻՐՈՒՆ ՎԱՆԸ»

Ամէնէն գնդեցիկ ծաղիկներն անգամ Հողի ու աղբիւրի մէջ տարածուող արմատներ ունին: Մենք եւս, բոլորս, արմատներ ունինք Հողին մէջ: Մեր արմատները մեր գրաչարաններն են, բնազդները, նախազգացումները, մեր մարմինը՝ ընդհանրապէս: Եւ այս բաժնին մէջ ա՛նա, մենք զրկուած ենք մարուր օդէ, անկաշկանդ գիտակցութենէ եւ բաց խիղճէ մը:

Մեզ կերտող սասուածը, ո՛վ ալ ըլլա՛յ ան, չի կրնար կանգ առած ըլլալ պորտին վրայ, սասանային ձգելով իր սկսած աշխատանքը աւարտելու պարտաւորութիւնը՝ պորտէն վարի մասերուն համար:



Բառերը, որ ներկայիս ամօթ կը համարուին եւ որոնց գործածութիւնը արդիւնի կ'ուզուի, ըստ ինքեան ո՛չ ամօթալի են, ոչ ալ ազատաւ: Անոնք նոյնքան պարզ բառեր են, որքան, օրինակ, դէժք բառը, որ ամօթալի չի համարուիր: Այդ բառերը ազատաւ են ժայռի յարակցութենէրով, ժամանակի նամարով: Այդ ժամանակներն ալ յարակցութենէն են, որ ազատաւ են եւ ոչ թէ բառերը իրենք: Մաքերն է, որ պէտք է ժառելի եւ ոչ թէ բառերը:

«ՍԻՐԱՀԱՐՈՒԱԾ ԿԻՆԵՐ»

Այլեւս պէտք չէ վարանիլ ըսելու, թէ զգայական կիրքերն ալ խորհուրդները նայեքան որբազան են, որքան հոգեղէն խորհուրդներն ալ կիրքերը: Ո՛վ կրնայ այլեւս աւելի երկար ասան մերժել այս հիմարութիւնը:

Միակ անընդունելի բանը, մեր մէջ ապրող խորհուրդներուն նուազատացումն է, անոնց անարդուժը, անոնց բողոքումը: Կը բաւէ, որ մարդը իր սեփական էութեան ճանկայ խոր յարգանքով. եւ մինչեւ անգամ մեծարելով՝ խորհուրդ Աստուծոյ կողմէ մեր մէջ տեղաւարտած ստեղծագործ հոգիին ծընունդ տուածը: Այն ասան ամէնքս պիտի ըլլանք ազատ եւ առողջ:



Ստեղծարար հոգին մեր մէջ ինքնեկ ձեւով կ'առաջացնէ ցանկութիւններ, ժողովներ, ձգտումներ, որոնք մեր իրական նակատագիրն են. աւ մենք պարտինք հետեւիլ անոնց:

Դուրսէն թելադրուած նակատագիր մը՝ տեսութիւններու կամ կացութեան նակատագիրն է, որ սխալ նակատագիր մըն է:

«ԱՐՈՒԵՍ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

Բնագրը առաւելաբար վարժութիւն մըն է: Փողոցի մարդուն բարոյական բնագրը մեծ մասով հնամենի վարժութեամբ մեռք բերուած յուզական ինքնապաշտպանութիւն մըն է միայն:



Իրական արուեստագէտը ո՛չ թէ բարոյականին տեղ անբարոյութիւն կը բերէ, այլ, ընդհակառակն, միշտ ալ, աւելի նուրբ բարոյականութիւն մը՝ կոպիտ բարոյականի մը տեղ: Եւ այն պահուն իսկ, երբ կը նշմարենք նուրբ բարոյականութիւն մը, կոպիտ բարոյականը մեզի համար կը դառնայ, յարմարաբար, անբարոյութիւն:



Ըստ ներքին հոսանքին եւ իւրաքանչիւրը ըստ իր սեփական յարմարութեան՝ իւրաքանչիւրը տարբեր ձեւով, ահա՛ թէ ինչպէս պէտք է մարդ անցնի կեանքին մէջէն:

«ԱՆՊ ՈՒ ԱԳԱՑՈՒՄՆԵՐ»

Մեր գաղտնարարութիւնը, աւա՛ղ, մեզի համար նոյնքան արտաքին բան մըն է, որքան մեր կօշիկները. եւ շատ աւելի նուազ սզատկար: Յամե- նայից պէս, անիկա ամբողջովին արտաքին գաղտնարարութիւն մըն է:

Ի՞նչ եմ ես ուրեմն ընականին մէջ. արամարանութիւն ունեցող մարդ- կային էակ մը. այդպէս կը կարծուի:

Սէ. սակայն, զիտուս վրայ կը կրեմ դադարներու եւ մասնուններու թուղթէ զամբիւղ մը: Իսկ իմ մարմնին մէջ տեղ մը, այլուր, իմ անձնական էութեան մթին ցամաքաստին վրայ, դոյռութիւն ունի զզգացումներու. փո- թորկոս ու աղմկոս ամբողջ քառոս մը: Անոնցմէ ոմանք ստիւծներու պէս կը մոնչեն, ուրիշներ՝ կ'այլեքաւորուին օձերու պէս. ուրիշներ՝ մաքրամաքուր գառնակներու նման կը մայեն. ուրիշներ՝ կը ճուռողեն ճեղքակներու նման. ուրիշներ՝ բոլորովին լուս կը մնան, սակայն ճկուն են եւ արագաշարժ՝ ճու- կի նման. ուրիշներ՝ սասրէի նման են, կրքեմ-կրքեմ կը բացուին: Սէ. ա- հա, այս պահուս, ես ալ թուղթէ զամբիւղին մէջ էջ մը ունեցնելու վրայ եմ, յուսալով, որ այս ձեւով լուծան կ'ըլլամ հարցը:

Ատի՛ճը վրաս կը շարձակի. ես ալ մտածում մը կը նեւեմ իր դիտուն:

Օձը սպաննական նայուածք մը կը նեւէ. ես ալ բանաստեղծութեանց հատոր մը կ'երկարեմ իրեն. եւ կացութիւնը աւելի կը վտաթարանայ:

Չգացումներու վերաբերող մեր գաղտնարարութիւնը հոս կանգ կ'առ- նէ, որովհետեւ տանց համար յատուկ լեզու մը չունինք. մեզի համար իսկ դոյռութիւն չունի այդ լեզուն:



Մարդը միակ արարածն է, որ կամովին ինքզինք կ'ընտանեցնէ կամ կամովին կը փորձէ ընտանեցնել: Սէ. աւա՛ղ, յաջողած է. այդ ընթացքը սա- կայն սահման չի ճանչնար:



Ներկայիս մարդը ընտանեցուած է. սակայն այդ ընտանեցումը կը պո- բունակէ հակակշիռի կարողութեան մէկ մասին կորուստը: Անոնք, որոնք ըն- տանեցած են, միշտ ալ կը գեկավարուին անոնց կողմէ, որոնք ընտանեցած չեն: Ինքզինք ընտանեցնելով՝ մարդը կորսնցուցած է հակակշիռի իր կարու- ղութիւնը, ինքզինքին հրամայելու կարողութիւնը. այլեւս ընտրութեան ա- դատութիւն չունի, ընտանեցած է այնպէս՝ ինչպէս ձին վարժուած է իր սան- ձերուն:

Սեթազբինք բոլոր ձիերը յանկարծ ազատ արձակուած. ի՞նչ պիտի ը- նէին...: Պիտի դառնային վայրի ձիեր: Սեթազբինք բոլորը հաւաքուած ու շրջափակուած են իրենց յատուկ գաշաովայրի մը մէջ. ի՞նչ պիտի ընէին. պիտի խենթանային:



Անխուսափելի է. մարդը չի կրնար ինքզինք ընտանեցնել եւ ապա մնալ այնպէս՝ ինչպէս որ ինք է: Այն բոպէնն իսկ, երբ ան կը փորձէ ընտանեցած մնալ, կը սկսի իշանալ եւ կը յանդի վայրենութեան մէկ այլ վիճակին, խոր- սակման, փշրումի վիճակին, քան մը, որ պահ մը գգեմու աշխան գեղնած տերեւներուն գեղեցիկ գոյները, սակայն այդ տերեւներուն պէս գաղտնարար- ւած է իյնալու, փտելու:

Մարդը ինքզինք կ'ընտանեցնէ, ինքզինք ընտանեցնելը սորվելու համար: Քաղաքակրթութեան ըլլալու համար՝ մեր զգացումները ուրանալու, գանձոք որբելու ու վերացնելու կարիքը չկայ: Ընտանեցումը քաղաքակրթութեան չէ: Ատիկա հողը հերկելը, գոյն կարդալը չէ: Մեր քաղաքակրթութիւնը չէ ըմբռնած կամ լու չէ ըմբռնած, թէ անհրաժեշտ է հերկել հողին, նախ հերկել պէտք է. հետագային կը ցանենք:

Սակայն ներկայիս մենք շնուած ենք հին ու վնասարկ խոտերը արժատախիլ ընելու ախտաանքին: Մեր քաղաքակրթութիւնը հողին հանդէպ ցարդ եղած է պարզապէս խորտակող երևոյթ մը: Մեր հողին արժէ կը ներկայանայ սեւցած անապատի մը պէտ՝ այրած արժատեղիուն պատճառով. ու կանաչ ճահիճով մը, մետաղէ խցիկով եւ երկաթէ կրակարանով մը:

«ՐԱՐՈՅԱԿԱՆՆ ՈՒ ՎԷՊԸ»

Արուեստի նպատակը, տուեալ պահուն, մարդուն ու զինք շրջապատող տիեզերքին միջև գոյութիւն ունեցող յարաբերութեանց յայտնաբերումն է: Եւ որովհետեւ մարդկութիւնը միշտ ալ հին յարաբերութիւններու ցանցին մէջ ստեղծուելու վրայ է, արուեստը, միշտ ալ, «մամանակաշրջանէն ջրայ մը տառն» է: Փամանակաշրջանն ալ, իր կարգին, ներկայ պահէն միշտ բուսական մը եւ մնացած է:

Երբ Վան Կոկ արեւածաղիկ մը կը նկարէ, կը յայտնաբերէ կամ կ'իրականացնէ ապրող այն յարաբերութիւնները, որոնք գոյութիւն ունին իր եւ տրեւածաղիկին միջև, տուեալ պահու մը:

Իր դժած նկարը արեւածաղիկը չէ, որ կը ներկայացնէ, այնպէս՝ ինչպէս արեւածաղիկն է՝ ինքն իր մէջ տառն: Մենք երբեք պիտի չզիտանաք, թէ ինքն իր մէջ ի՞նչ է արեւածաղիկը: Իսկ լուսանկարչական մեքենան շատ աւելի ճշգրտօրէն կրնայ արձանագրել արեւածաղիկին պատկերը:

Պատասխին վրայ նկարուածը երբորդ իրականութիւն մըն է, որ ամբողջովին անշուշտիւր ու անբացատրելի է: Անիկա արդիւնքն է արեւածաղիկին ու Վան Կոկին յարաբերութեան: Պատասխին մատուցած նկարը կարելի չէ սահմանել պատասխի տարածութեամբ կամ գործածուած ներկերու քանակութեամբ. կամ Վան Կոկով՝ իրրեւ մարդկային օրգանիզմ. կամ արեւածաղիկով՝ իրրեւ բուսական օրգանիզմ մը: Վան Կոկի նկարը գոյութիւն անի այն շարքորդ տարածութեան մէջ, որուն մասին այնքան վէճ է եղած: Երեք կողմով տարածութեան մէջ անիկա գոյութիւն չունի:

Նկարը յայտնաբերումն է այն կատարեալ յարաբերութեան, որ տուեալ պահու մը գոյութիւն անի մարդուն եւ արեւածաղիկին միջև: Անիկա ո՛չ մարդն է՝ զիտուած հայելիին մէջ, ոչ ալ ծաղիկը՝ հայելիին մէջ: Անիկա ո՛չ այսինչ բանէն վեր է, ոչ ալ այնինչ բանէն վար, այլ մէջէն անցած է, եւ այլև... Անիկա կայ, ամէն ինչի միջև, չորրորդ տարածութեան վրայ:

Մարդուն եւ զինք շրջապատող տիեզերքին միջև տառնացող այդ կատարեալ յարաբերութիւնը մարդկութեան համար կենքն իսկ է: Անիկա իր մէջ կը պարփակէ չորրորդ տարածութեան յատկութիւնը, որակը, որ կատարելութեան եւ յաւիտենականութեան յատկութիւնն է: Եւ սակայն վաղանցուկ է անիկա. այդ երկվայրկեանին գոյութիւն անեցած յարաբերութիւնն է միայն:

Մ'որն ալ, ծաղիկն ալ կը հեռանան այդ պահէն, երբ հետզհետէ նորանոր յարաբերութիւններ կ'առաջանան:

Իրերու միջև յարաբերութիւնները օրէ օր կը փոխուին նրբօրէն եւ արագութեամբ: Ատոր համար է, որ արուեստը, որ ծնունդ կու տայ կատար-

եսլ ալլ յարարերութեան ժը, ժիշտ ալ նոր պիտի ըլլայ: Աւ նաեւ ա՛յն՝ որ գոյութիւն ունի մեր օսվորական, երեք կողմերով ճշգրտած տարածութենէն դուրս, որ անխառն յարարութիւններու տարածութիւնն է, ո՛չ կեանք դիտէ, ոչ ալ մտ՛ւ. անիկա է, որ յաւիտենական է: Այսինքն անիկա՝ որ մեզի կը բերէ կեանքէն ու մահէն անդին ըլլալու տպաւորութիւնը:



Եթէ այս մասին մտածենք, կը տեսնենք, թէ կեանքը կը կայանայ մեր եւ մեզ չըջապատող բարսխուն տիեզերքին միջեւ անխառն յարարութիւններ կառասանլուն մէջ: Այդ մեւով է, որ ես ճիշտագոյն իմ հոգիս, այսինքն՝ անխառն յարարութիւն ժը կառասանլով իմ եւ ալլ անճանալորութեան ժը կամ անճանալորութեանց միջեւ. իմ եւ երկրի ժը, ցեղի ժը, կենդանիի ժը, աստղերու, աստղիկներու, հողի, երկինքի, արեւին ու լուսնին միջեւ: Անճանալոր ու անխառն յարարութիւններ, մեծ ու պզտիկ, ասիպէս՝ ինչպէս երկինքի աստղերն են. ահա՛ այդ է մեզի իւրաքանչիւրին յաւիտենականութիւնը:

Բարոյականը՝ այս գծուարին կառասանլորութիւնն է. ժիշտ երեւուն, ժիշտ փոփոխական, որ գոյութիւն ունի իմ եւ չըջապատող տիեզերքին միջեւ, որ կը կանխէ ու կ'ընկերակցի բոլոր իրաւ յարարութեանց:



Հոս է, որ կարելի է նշմարել վէպին գեղեցկութիւնն ու հոկայական արժէքը: Փիլիսոփայութիւն, կրօնք ու դիտութիւն, բոլորն ալ կը ձգտին անշարժացնելու իրերը, որոշտիկ կարենան հասնիլ կայուն կառասանլորութեան ժը: Կրօնքը՝ իր միակ Աստուծով, որ լաւ ժը գամուած է իր տեղը, որ կ'ըսէ՝ «Պէտք է ընես», «Պէտք է ընես». եւ որ ամէն անգամ, երբ կը հարուածէ՝ արդարօրէն կը հարուածէ. փիլիսոփայութիւնը՝ իր լաւ ժը կառասանլոր գաղափարներով. դիտութիւնը՝ իր ճարտարներով. բոլորը, բոլորն ալ անարար կը ճզնին մեզ գամել այս կամ այն ծառին:

Վէպը՝ ոչ: Վէպը, փոխադարձ յարարութիւններու ամէնէն նուրբ ճեղարնականն է, զոր մարդը կրցած է գանձել: Ամէն ինչ իրաւ է, իրեն յատուկ վայրին, ժամանակին ու պայմաններուն մէջ. ու անհրժեշտ է կամ սխալ՝ անոնցմէ դուրս: Եթէ փորձուինք վէպին մէջ ամէն ինչ գամելու, կամ կը մեռցնենք վէպը կամ ալ վէպը ինք օտար կը կանգնի, թուցնելով բոլոր գամերը:

Վէպին բարոյականը կառասանլորութեան փխրուն ըլլալն է: Եթէ վիպասունը իր մատով ճնշէ նմարին թաթերէն միջին վրայ կամ մեւին, ադ պարագային կը սկսի անբարոյութիւնը:

Արդի վէպը հեղաշեւտէ աւելի անբարոյ կը դառնայ, որովհետեւ վիպասունը հեղաշեւտէ աւելի ու աւելի ծանրօրէն կը ճնշէ նմարի թաթերէն միջին վրայ, կամ ճարոյ՝ թաթին, կամ ալ ճարքերու տղատութեան թաթին:



Իր ժը կամ բան ժը, մէկու ժը կողմէ շինուած ըլլալուն իրողութեան բերումով՝ կեանք չի դառնար, «կեանք» չէ: Արուեստագէտը պէտք է լաւ գիտնայ ասիկա: Երբ գրամտասան պզտիկ պաշտօնեայ ժը յարդէ դիտարկ ժը կը զնէ, ադ իրողութիւն կեանք չէ, ալլ՝ պարզ գոյութիւն, ասիպէս՝ ինչպէս ամէնօրեայ նախաճաշը:

Կեանք ըսելով կը Հասկնանք ա՛յն՝ որ իւրայատուկ փայլ մը ունի: Եթէ դրամատան այդ պաշտօնեան իրապէս օրիփիմայ կը Համարէ իր գլխարկը, այն առն իր եւ այդ գլխարկին միջեւ ապրող յարաբերութիւն մը կը Հաստատուի եւ, յարզէ գլխարկը գլխուն դրած՝ խանութէն դուրս կ'ելլէ իրրեւրոյրովին տարբեր մարդ մը, կարծես գլխուն լուսապսակ դրած մէկը: Այն առն՝ այս՝ կեանքն է:

Նոյնն է պարագան բոզին: Եթէ մարդ տնոր Հետ իրական յարաբերութիւն մը կը Հաստատէ, Հոգ չէ թէ պահ մը միայն, կեանքն է: Հակառակ պարագային՝ դրամն է, արհեստն է. եւ երբեք՝ կեանքը. կեանքին դաւաճանումն է:

Եթէ վէպ մը ապրող, իրական յարաբերութիւններ կը յայնարբերէ՝ բարոյական դրած մըն է: եւ ոչ մէկ կարեւորութիւն ունի իր յայտնարբերած յարաբերութեանց տեսակը: Եթէ վիպասանը կարենայ յարաբերութիւնները պատուել իրենք իրենց Համար, իրենք իրենց մէջ՝ մեծ վէպ մը դրած պիտի ըլլայ:



Այս կամ այն բանին կամ էական Հետ նոր յարաբերութիւն մը Հաստատուելու առէն փորձ Հարկադրաբար քիչ մը կը վերաւորէ, որովհետեւ, պարզ է, իր մէջ կը պարունակէ Հին յարաբերութեանց գէժ պայծառ մը, բա՛ն մը, որ ընդհանրապէս Հաճելի չէ:



Մարդկութեան Համար, յարաբերութեանց մեծագոյնը միշտ ալ աղաժարուել եւ կնոջ միջեւ առաջացող յարաբերութիւնը պիտի ըլլայ:

Տղամարդու մը եւ աղամարդու մը, կամ կնոջ մը եւ կնոջ մը միջեւ, ծընողքի ու զուակնեւոր միջեւ առաջացող յարաբերութիւնները միշտ ալ երկրորդական պիտի ըլլան: Տղամարդոց ու կանանց միջեւ յարաբերութիւնները միշտ ալ կը փոխուին եւ միշտ ալ պիտի ըլլան մարդկային կեանքի առէնէն կարեւոր բանային:

Այդ յարաբերութիւնները այնպէս՝ ինչպէս որ են, ըստ ինքեան կեանքի ջիղն ու բանալին են եւ ոչ թէ մարդը կամ կինը, կամ անոնց յարաբերութեանց պատահական արդիւնքը եղող զուակնեւոր:

«ՎէՊԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԸ»

Անճրեւին տակ գտնուող կաղամբն անգամ ապրող կաղամբ մըն է: Ապրող առէն ինչ՝ զարմանք մըն է. եւ առէն ինչ, որ մեռած է՝ կողմնակի արժէք է միայն, Համեմատան ապրողին: Ապրող շուն մը աւելի կ'արժէ, քան մեռած առիւծ մը: Սակայն ապրող առիւծ մը աւելի կ'արժէ, քան ապրող շուն մը: Այսպէս է կեանքը: Այս է կեանքը:

Ու կը թուի, թէ անկարելի է պիտութեան մարդ մը, սուրբ մը կամ փիլիսոփայ մը այս Համոզումին բերել: Անոնք, բոլորն ալ, որոշ իմաստով՝ ուրացողներ են:

Սուրբը կը ձգտի ինքզինք իրրեւ ունեղէն անունը մատուցել բազմութիւններուն: Մինչեւ անգամ Ծրանտուա ԹԱԻՊ տեսակ մը Հրեշտակային կարկանդակէ կը փոխակերպուի, որուն մէջ բոլորը կրնան իրենց ակրանները մխրճել՝ պատառ մը առնելու Համար: Սակայն Հրեշտակային կարկանդակ

ժը նուազ արժէքաւոր է, քան ապրող մարդ ժը: Թեղծ Ֆրանսուա տ'Ասիզը լաւ կ'ընէր, եթէ ձեռնհաս պահուն ներողութիւն խնդրէր իր մարմինէն՝ շնորհ իմծի, իմ ամբմիս, այս ամբողջ տարիներուն ընթացքին քնի պատճառած չարիքն Խամարս: արժենաւ իր մարմինը ուրիշներուն ասլիք հաղորդութիւն չէր:

Փիլիսոփան ալ, իր կարգին, կրնայ կարծել, թէ մասնաւորօրէն դուրս ոչ մէկ բան արժէք ունի, կը նմանի ճաշարի ժը, որ մասնելով, թէ ինք պընթելի կղկղանք կրնայ արտադրել, կը վնասէ, որ ոչ մէկ բան աւելի կարելոր է, քան իր արտադրած այդ կղկղանքը:

Գալով գիտութեան մարդուն, որքան ասին, որ ես ողջ եմ, ան ոչ մէկ սպառ ունի ինծի: Որովհետեւ գիտութեան մարդուն համար ես ձեռած եմ: Իմ ձեռած անձնաւորութեան մէկ պզտիկ պատասաը կը դնէ իր մանրոգէտին տակ եւ կը յայտարարէ, թէ ես ասիկա եմ: Ձիւ կտոր-կտոր կը կտրէ եւ կը սէ, թէ այդ կտորը, այս՝ միւս կտորը ես եմ: Իմ սիրտս, լիտարդս, ստամոքսս, բոյնքն ալ ես եղած եմ ըստ գիտնականներուն: Եւ այսօր՝ կա՛մ ուղեղ ժըն եմ, կա՛մ իրիւր, կա՛մ զեղծեր, կա՛մ աւելի արդիական բան ժը՝ հիւսկէններու մէջ:

Արդ, կը մերժեմ, քաղաքականապէ՛ս կը մերժեմ մարմին ժը եւ հոգի ժը ըլլալ: Կամ միտք, իմացականութիւն, ուղեղ, ջղային կապը, զեղծերու դըրոյթ ժը, կա՛մ մարմնի մաս ժը: Ամբողջութիւնը աւելի մեծ է, քան մասը: Եւ ես, ապրող մարդ ժը, աւելի մեծ եմ, քան հոգիս, միտքս կամ մարմինս, ինչո՞ւ, ուղեղս, զիտակցութիւնս կամ ինչ որ ալ ըլլայ, որ մէկ մասնիկն է միայն հոսիւնս:

Մարդ ժըն եմ, ապրող մարդ ժը, եւ նպատակադրած եմ այդպէս ալ մնալ, որքան ասին որ կրնամ: Ատոր համար ալ վիպասան եմ: Եւ վիպասան ըլլալով՝ ինչպիսիք աւելի բարձրարժէք կը համարեմ, քան սուրբը, փիլիսոփան կամ գիտնականը կամ բանաստեղծը, որոնք բոլորն ալ մեծ վարպետներ են ապրող մարդուն գոնազան մասերուն մէջ, սակայն չեն հասնիր ամբողջութեան:

Վէպը կեանքի միակ աղուր գիւրջն է: Գիրքերը կեանք չեն: Անոնք եթէրին թրթրացումներն են միայն: Արդ, վէպը թրթրացում ժըն է, որ կրնայ ապրող մարդը ամբողջութեամբ թրթրուացնել, ինչ որ աւելի է, քան բանաստեղծութիւնը, փիլիսոփայութիւնը, գիտութիւնը: աւելի՛ քան որեւէ՛ այլ թրթրացում-գիրք կրնայ ըլլալ:

Վէպը կեանքին գիրքն է: Այս իմաստով է, որ Ատաւածայունչը մեծ, խառնափոթ վէպ ժըն է: Կրնանք ըսել, թէ անիկա կը խօսի Ատաւածայ մասին, սակայն այն՝ ինչի մասին իրապէ՛ս կը խօսի՝ մարդն է: Ո՛վքե՛ր են Ազաժը, Եւան, Ստասն, Արբաւամը, Իսաւակը, Յակոբը, Սամուէլը, Դաւիթը, Ինթաբէն, Թուրքը, Եսթերը, Սողոմոնը, Յորը, Եսային, Յիսուսը, Մարկոսը, Յուզան, Պողոսն ու Պետրոսը, եթէ ոչ՝ ապրող մարդիկ, բոլորն ալ: Ապրող մարդիկ եւ ոչ թէ մարդու մասեր: Ատաւած ինքն իսկ ուրիշ ապրող մարդ ժըն է, որ այրող թուփերուն մէջէն Մովսէսի գլխուն կը նետէր օրէնքի տախտակները:

ԵՊՈՒՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՍԻՈՒԹԻՒՆ

Ոչ ոք գիտէ, թէ ի՞նչ կը նշանակէ չլիտի՞ք բառը: Ըստ սովորականին, պոստիպարութիւն եւ լիտի բառերուն սահմանումը ամբողջութեամբ կախում ունի անհատէն: Ինչ որ մէկուն համար պոստիպարութիւն է, միւսին համար հանճարին ինչպէ՞ս է:



Օրէնքը շորցնող բան մըն է: Կարծիքները ո՛չ մէկ կապ ունին կեանքին հետ:

Թատերակ մը էթէ կայծակնահար կ'ընէ ասաք Հոգի՛ առանց նեղութիւն պատահուելու մնացեալ հինգ հարիւրին, լիտի կը համարուի այդ սասը Հոգիին կողմէ եւ լիտի չի համարուիր մնացեալ հինգ հարիւրին կողմէ: Համէթ, իր ասեներն, կայծակնահար կ'ընէր իրեն ժամանակակից մաքրակրօնները. այսօր ան ոչ ոքի նեղութիւն կը պատճառէ:

Մարդը փոփոխուող կենդանի մըն է. մարդուն փոփոխուելուն հետ բաներն ալ կը փոխեն իրենց իմաստը:



Ձեռ գիտեր, թէ ինչո՞ւ մարդիկ պէտք է յանցաւոր համարուին իրենց պիտակից մղումներուն համար, եւ անեղձ՝ անգիտակից մղումներուն համար, երբ անոնց իւրաքանչիւրը կազմուած է աւելի անգիտակից մտազբութիւններով, քան գիտակից: Ես եմ ո՛յն՝ ինչ որ եմ. եւ ոչ թէ միայն ո՛յն՝ որ կը մասնեմ, որ եմ:



Գեղեցկութիւնը անխա-ափիլով թաթառուած է, ամբողջովին:



Սենը շատ ուժեղ խթանող մըն է. օգտակար եւ անհրաժեշտ՝ մարդուն համար. եւ մենք բոլորս ալ երախտազիտութեամբ կը լեցուինք, երբ մեր մէջ կը զգանք անոր տաք ու քնական հոսքը, արեւի նման տարածուիլը մեր մէջ:



Ոչ մէկ վաս բան կայ սեռային յուզումներուն մէջ, որքան ասեմ որ անոնք անկեղծ են, ծածկուած չեն, սմեղուկ չեն: Սեռային առողջ զրգիւքը թանկարժէք է մարդկային ամէնօրեայ կեանքին համար: Առանց անոր՝ աշխարհը մթին ու անբազէմ կը դառնայ:



Պոռնիագրութիւնը կը փորձէ անարդել սեռը, զայն ցեխով ծածկելով. ու ահա ատիկա աններելի է:

Առէք ամէնէն պարզ օրինակը, դադանի վաճառուող նկարները. ինչ որ տեսած եմ, լսց պատճառելու աստիճան տղեղ էին, անարդանք էին մարդկային մարմինին հանդէպ. անարդանք մը՝ մարդկային ամենահամական յարաբերութեանց հանդէպ: Անոնք մերկութիւնը կը տղեղցնէին, կը զարժեռնէին ամօթալի. սեռային արարքը կը վերածէին վարկարեկիչ, տղեղ, հասարակ ու ստորին բանի մը:



Ինծի կը թուի, թէ պոռնկագրութեան ամբողջ հարցը կ'առաջանայ արարքը ծածուկ պահելու ձգտումէն:

Ամբիթածութիւն ու արարքը ծածուկ պահելու ձգտումը երկու տարբեր բաներ են: Մտնկամտութեան մէջ միշտ ալ վախի տարր մը կայ, որ յաճախ միջնեւ առեւտրութիւն կը հասնի: Մինչ ամբիթածութիւնը մեղմ է, վերապահ է:

Այսօր ամբիթածութիւնը նեաւամբ է շոր հոգեւորուն եւ կը քաղաքացիութիւնը, որ ըստ ինքեան մոլութիւն մըն է:

«ԵՐԱԺՇՏՈՒԹԻԱՆ ՍԷՐԸ»

Տարբերակ եւ հետաքրքրական երեւոյթ է, բայց այդ այդպէս է. սերունդի մը մտածումները կը գտնան յաջորդող սերունդին բնազդները:

Եթէ մտածումներու աշխարհին մէջ արագ փոփոխութիւն մը առաջանայ, մարդկութեան մէջ եւս կ'առաջանայ նոյնքան արագ փոփոխութիւն մը:

Մենք կը գտնանք ա՛յն՝ որ կը մտածենք:

Աւելի վաաջ՝ մենք դարձած ենք ա՛յն՝ ինչ որ մեր մեծ մայրերը կը մտածէին: Եւ մեր թոռները պիտի գտնան այն խղճալի բանը, որ մենք հիմա ենք:



Մենք մեր նախնայրերուն մտածումներուն մարմնաւորումն ենք. եւ, մեծ մասով՝ անոնց զաղանի մտածումներուն մարմնաւորումը, ա՛յն մտածումներուն, որոնց դրսևորումը արդիւնած էր եւ որոնք իբրև բնազդական ձգումներ կը փոխանցուին, իբրև ուժական մղիչ տարր, նոյնիսկ միջնեւ երբորդ սերունդ: Մենք մեր մեծ մայրերուն գաղանօրէն սիրածն ենք հիմա:

Ի՞նչ կը բաղձային անոնք: Որոշ է մէկ բան՝ կը բաղձային, որ երաժշտութեամբ զարդաւէին, սիրաբանէին իրենց հետ: Չէին ուզեր, որ մարդը կոպիտ արարած մը ըլլայ, ուղղակի նպատակին դիմէ: Կ'ուզէին, որ մեզիդիներու թաւալումով ու զարդացումով ընթանար անոնց սիրոյ եւ ցանկութեանց արտայայտութիւնը:

«ՄԵՆՔ ԻՐԱՐՈՒ ՊԵՏՔ ՈՒՆԻՆՆԵՅ»

Գաբիէ չէ շնորհունիլ, որ աղամարդիկ ու կանայք իրարու պէտք ունին: Մեր բոլոր մերժումներէն, ըմբոստացումներէն, քէներէն հտք, անհրաժեշտ է, որ ընդունինք այս իրողութիւնը. եւ սիրով ընդունինք:

Ամէնքս ալ անհասարկանք, ետատէրներ ենք: Ամէնքս ալ, մեր բոլոր ուժերով կը հաւատանք ազատութեան. մեր արարքներուն ազատ ըլլալուն: Ամէնքս ալ կ'ուզենք բացարձակ ըլլալ, բաւել մենք մեզի: Այն պարզ իրողութիւնն անդամ, թէ մենք մարդկային այլ էակի մը կարիքը ունինք. մեծ ու ծանր հարուած մըն է մեր ինքնասիրութեան: Մենք կ'ընդունինք, սիրով կ'ընդունինք թեթևօրէն ընտրութիւն մը կատարել կանանց մէջ, եթէ տղամարդ ենք, եւ աղամարդաց մէջ՝ եթէ կին ենք: Սակայն ստիպուիլ յանգիլ ցուպին իրականութեան, եւ ընդունիլ ընտրուած իմ, չեմ կրնար ապրիլ տառնց արանջացող կեանք: Եւս՝ իրողութիւն մը, որ մեծապէս նուստացուցիչ կը թուի մեր ունայնամտութեան:

Եւ երբ կ'ըսեմ «Էլիեն», չեմ խօսիր սիրուհիի մը մասին կամ, Փրանսա-

կան իմաստով՝ սեռային յարաբերութեանց իմաստով. այլ կը խօսիմ կնոջ մասին, կնոջ հետ յարաբերութեան մասին:

Չկայ մարդ մը, որ կարենայ իրազէս երջանիկ ապրիլ, առանց մասնաւոր կնոջ մը հետ յարաբերութիւն ունենալու, բացի այն պարագայէն, անշուշտ, երբ կնոջ դերը տղամարդու մը տրուած կ'ըլլայ: Նոյնն է պարագան կանանց համար:



Մեր անհասականութիւնը մեր յարաբերութեանց մէջ կը գտնուի. պէտք է ընդունինք այս իրողութիւնը: Այլոց հետ մեր ունեցած յարաբերութիւններէն դուրս՝ մենք անարժէք անհասներ ենք միայն: Այլ էակներու, այլ կենսաբանութեան հետ հասաստուող մեր յարաբերութիւններն են, որ կը կազմեն մեր շրջապատը, մեր գոյութեան իմաստը:

Եթէ արեւուն սակ գոյութիւն չունենած կենդանական աշխարհին ու մարդոց հետ մեր յարաբերութիւնները, մենք կը վերածուինք օդապարիկներու, եւ մեր անհասականութիւնը կը կորսնցնէ ամէն իմաստ: Կղզիի մը մէջ գոյութիւն ունեցող միայնակ արատյա մը զրկուած պիտի ըլլայ իր երգէն, կորսնցուցած պիտի ըլլայ իր իմաստը, անհասականութիւն պիտի չունենայ: Եւ եթէ իր էջը ներկայ ըլլայ իր կողքին, ան պիտի վերադառնէ իր անհասականութիւնը ու պիտի օգտի երգի:

Նոյնն է տղամարդոց ու կանանց պարագային: Իրենց միջեւ հաստատուող յարաբերութեանց համարով է, որ կը գտնեն անոնք իրենց անհասականութիւնը, իբր յատուկ էութիւնը: Թարաբերութեան մէջ, եւ ոչ՝ անկէ դուրս: Հիմնականը, եթէ կ'ուզէք, սեռն է, սակայն այնքան ու այնպէս՝ ինչպէս խոսին վրայ արեւուն իշխալու իրողութիւնը. կենդանի յարաբերութիւնն է, կենսաթրթիւն հպումը, փոխանակումը, մեծտփառ եւ նրբին յարաբերութիւնը՝ մարդուն եւ կնոջ միջեւ: Կնոջ մէջն է, կնոջմով է, որ մենք կը գտնանք իրական անհատներ: Առանց անոր, առանց այդ իրական հպումին, մենք կը մնանք առանց կամ նուազ շարժով ոչնչական վիճակի մէջ:

Անհրաժեշտ է սակայն, որ այդ հպումը, յարաբերութիւնը ըլլայ ապրող, փոփոխուող: Հարցը բաժանանցիք կնոջ մը հետ ու վերջացուող չէ, բան մը, որ յարաբերութիւնն ու հպումը մերժելու, անկէ խուսափելու յիմարական մէկ ձեւն է:

Իրական Գնճախքը մերժելու եւ իրական քոնթրաքթէն խուսափելու մէկէ աւելի ձեւեր կան: Օրինակ, կինը տեղաւորել պատուանդանի մը վրայ կամ, ընդհակառակն, որեւէ կարեւորութիւն, որեւէ արժէք չընծայել անոր: Չայն վերանել ճորինակելի տանտիկինոյի մը, ճորինակելի մօրն մը կամ ճորինակելի կնոջ մը: Ատոնք բոլորն ալ իրական հպումէն խուսափելու ձեւեր են: Կին մը ճորինակելի բան» մը չէ, ոչ իսկ որոշակի եւ առանձնակի անձնաորութիւն մը: Ատենն է մերքազատուելու սովորութիւն դարձած, ընդունուած այդ բարոնտմենքէն:

Կին մը կենդանի ազրիւր մըն է, որմէ ժայթրող թեթեւ փրփուրը կը սփռուի դինք շրջապատող ամէն ինչի կամ իրեն մօտեցող ամէն իրի ու անձի վրայ: Կին մը օդի մեղմ ու տարօրինակ թրթռացում մըն է, որ կ'առաջանայ տնդիտակցարար եւ անպիտացուած՝ փնտրելով իր թրթռացումին համապատասխան թրթռացում մը: Եւ կամ ցաւալին, անհասնոյ, անհամաչափ թրթռոցում մըն է ան, որ կ'առաջանայ՝ վերադրելով բոլոր անոնք, որոնք իր հասողութեան սահմանին մէջ կը գտնուին:

Նոյնն է իրականութիւնը տղամարդու պարագային: Գոյութիւն ունեցող, ապրող ու շարժող տղամարդ մը ակունք է ապրող թրթռացումներու,

ուզգուած գէպի մէկը կամ գէպի բան մը, որ սասնալով իրմէ եկող հոսքը, պէտք է պատասխանէ իրեն՝ վերադարձնելով ի՛ր հոսքը, որով պէտք է ամբողջանայ շրջադիւր, փակուի շրջանակը ու հաստատուի խաղաղութիւնը: Եւ կամ, ազամարդն ալ՝ աղբիւր է իր զայնութեան, անհասկացողութեանց, ասուպանքի, որ կը վերաւարէ իրեն ժամեցող ամէն ինչ:



Եթէ մենք սոսոյզ ենք ու չիմարտ, աւերար կը ձգտինք մարդկային այլ էակներու հետ իրական յարաբերութիւններ հաստատելու: Այդ յարաբերութիւնները սակայն պէտք է հաստատուին ինքնարարար, անզիտակցարար: Մենք կամովին ազգեցութիւն չունինք մեր յարաբերութեանց վրայ, բացառելով այն պարագան, երբ կ'ուզենք փշուլ գանձը, բան մը, որ դժուար չէ ընդհանրապէս: Գրական անկիւններէն՝ մենք միայն կրնանք ձգել, որ կապերը կապակցուին որքան կարելի է զդուշութեամբ՝ սոսնց միջամտելու, սոսնց սրելէ բան պարտագրելու:



Տղամարդ թէ կին՝ իւրաքանչիւր էակ հոսք մըն է, կեանքի հոսք մը: Եւ սոսնց մէկուն կամ միւսին՝ այդ հոսքը չի կրնար իրականանալ, հոսիլ: Ինչպէս ինչպէս գիտք չի կրնար հոսիլ սոսնց իր հունին ու արեւելուն: Կին մըն է իմ գեախն արեւելէն մէկը, աշխարհն ալ՝ միւսը: Ասանց այդ երկու արեւելուն՝ կեանքս ճարձախուս մը պիտի ըլլար: Կնոջ հետ ու իմ նմաններու հետ յարաբերութիւններն են, որ զիս կը վերածեն հոսող գեախի մը: Մինչեւ անգամ անոնք է, որ ինձի կու սան իմ հոգիս: Մարդ մը, որ մարդկային այլ էակի մը հետ յարաբերութիւններ չէ ունեցած, իրապէս հոգիի տէր չէ:



Մենք խաղաղութիւն չունինք, որովհետեւ լրիւ չենք: Եւ լրիւ չենք, որովհետեւ մէկ ասանորդն ենք սոսնցած այն էական յարաբերութիւններուն, զորս պէտք է ունենայինք: Կ'ապրինք այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, որ կը հաւատայ մարդկային յարաբերութեանց կեդրուելուն: Կեդրուեցէք այդ յարաբերութիւնները, սոխի մը պէս, մինչև որ հասնիք զուս եւ ամբողջական անզոյութեան մը՝ պարտադրութեան: Ահա՛ թէ ինչ բանի հասած է այսօր մարդոց մեծ մասը. առեւտր հասած են իրենց սեփական գատարկութեան ծանոթութեան: Այնքան կը բողբոջին շինքիներէն ըլլալը, բայց որ վերածուած են ոչինչի, գրեթէ ոչինչի:

Գրեթէ ոչինչ ըլլալը ուրախալի բան մը չէ: Կեանքը պէտք է ուրախ ըլլայ. աշխարհի ամէնէն ուրախ բանը պէտք է ըլլայ: Ոչ թէ ինքզինքէն փախչելու համար ուրախ ժամանակ պէտք է անցընել, այլ կեանքը ուրախ պէտք է ըլլայ, ինքն իր մէջ, ինքնիրմով:



Տղամարդուն եւ կնոջ միջեւ յարաբերութիւնները մարդկային իրական կեանքի հիմնական կէտերն են: Ապա կու գայ տղամարդոց միջեւ յարաբերութիւնը. եւ ապա, հետուն, շատ հետուն՝ ծնողքին, եղբայրներուն, քոյրերուն հետ յարաբերութիւնը, բարեկամներու հետ յարաբերութիւնը:



Եւ ի՞նչ է սեռը ի վերջոյ, եթէ ոչ ազամարդու եւ կնոջ միջեւ յարաբերութեանց խորհրդանիշը: Այդ յարաբերութիւնները նոյնքան ընդարձակ են, որքան կեանքը: Այդ յարաբերութիւնները կը կայանան սարբեր, մինչեւ իսկ իբարու հակասող, անսահման հոսքերու մէջ, որոնք կ'առաջանան մարդկային երկու կանկնիւ միջեւ: Զգաստ վիճակը նոյնքան մաս կը կազմէ այդ հոսքին, որքան մարմնական հրայրքոտ վիճակը: Եւ ասոնց վրայ դեռ կարելի է աւելցնել անհուն փոփոխակները նրբին յարաբերութեանց, որոնց մասին ոչինչ գիտենք:



Կ'ըսեմ, թէ այդ եւ կնոջ միջեւ, ամուսնոյն եւ կնոջ միջեւ, իրական այդ ու կնոջ միջեւ յարաբերութիւններ, արտինքու ընթացքին, կ'ենթարկուին խոր փոփոխութեանց, յաճախ աւանց ենթականերուն անդրադարձին, հակառակ անոր, որ իւրաքանչիւր փոփոխութիւն տառապանք մը կ'ըլլայ, մինչեւ անգամ եթէ որոշ շափոյ ուրախութիւն պարունակէ: Ամուսնութեան երկար ճամբան, տեւական փոփոխութեանց մնայուն շարան մըն է, որուն ընթացքին այդ մը եւ կին մը իրենց հողիները կը կերտեն եւ իրենց լիութիւնը կը գտնեն: Անոնք կը նմանին երկու գետերու, որոնք կը հոսին միշտ նոր, միշտ անձանոթ երկիրներու մէջէն:

Սակայն մենք այնքան յիմար ենք... այնքան սուճանափակուած՝ մեր կազմապարուստ մտածումներով եւ ըմբռնումներով...: Տգամարդ մը կը յայտարարէ. «Ա՛յ շեմ սիրիք կինս, հետը պատկելու փափաք չունիմ այլեւայ: Սակայն մի՞թէ պէտք է միշտ պահանջ անենայ անոր հետ պառկելու: Զի՞ պիտե՞ր, թէ այն ժամանակ, երբ ինք չի փափաքիր կնոջ հետ պառկել, նրբին փոփոխութիւն մըն է, որ տեղի կ'ունենայ իրենց միջեւ:

Եւ կինը, փոխանակ ընդձգելու եւ ըսելու՝ «Ա՛մէն ինչ վերջացաւ, թէ պէտք է ուրիշ մէկը գտնէ, կամ թէ՛ պէտք է ամուսնալուծուի, ինչո՞ւ պահ մը կանգ չ'առնե՞ր՝ իր հողիին մէջ գտնելու համար նոր կշտոյթ մը, դիտելու համար ազամարդուն մէջ կատարուող նոր հոլովոյթը: Իւրաքանչիւր փոփոխութեան նոր էակ մը երեւան կու գայ, նոր կշտոյթ մը կ'առաջանայ: Մեր կեանքը ծերանալով կը վերանորոգուի եւ կը գտնէ իրական խաղաղութիւնը: Ինչո՞ւ, Ատառած իմ, ինչո՞ւ կ'ուզենք մնալ նոյնը, նման՝ մենք մեզի. նոյնը, անփոփոխելի՛՛ ճաշացուցակի մը պէս...»



Երբեմն, սեռային ցանկութիւնը ամբողջութեամբ կը մարի, սակայն մարդկային յարաբերութեանց մեն հոսքը կը շարունակուի, միշտ կենդանի, միշտ ապրող, եւ այդ հոսքն է, որ սեռով կ'ապրի. ազամարդուն եւ կնոջ յարաբերութիւններն են, որ կը տեսնեն ամբողջ կեանքի ընթացքին: Սեռային ցանկութիւնը այդ հոսքին ամենատեղ աբսալյալութիւնն է:

Տ. Հ. ԼՈՐԸՆՍ

Հայաստանի Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Մ. Ս. Հ Ր Ա Յ Ե Լ Ե Ա Ն

Ի ՄԷԼԻՐԱՅՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...



Հրաչ Թաշեան՝ իր աշխատասենյակում

«Ժամանակը կը չափուի երկվայրիմանե-
րով, ժամերով եւ օրերով, սակայն մարդ-
կային էակի մը կեանքը կը չափուի իր
կեանքի տեսչութեան մարդկութեան բե-
րած իր նպատակը»:

Հ Ր Ա Յ Ե Լ Ե Ա Ն

Մինաս Աւետիսեանի եւ ամերիկահայ
յայտնի գեղանկարիչ Հրաչ Թաշեանի
անուանեցող անըակտիօրէն կազուած են
իրարու ո՛չ միայն անոր համար, որ Մի-
նաս Աւետիսեանի անձին ու գործին ծա-
նօթանայէ ետք Թաշեանի արուեստին
մէջ յեղաշրջում տեղի ունեցաւ, այլեւ
անո՛ր համար, որ այս երկու արուեստա-

գէտներէն մէկուն կենսագրութիւնը կա-
րելի չէ գրել՝ առանց չլիշելու միւրը:

Հարցազրոյցի մը ընթացքին, Հրաչ
Թաշեան կը պատմէ.

«1969իմ, Երեւանի հիմնադրութեամբ
2750ամեակի տօնակատարութեամբ օրե-
րուն, առաջին անգամ ըլլալով այցելեցի
հայրենիքը: Միմչ այդ, ես բնաւ լուր

չունէի, թէ մեր ժողովուրդը տէր էր այդքան մեծ մշակոյթի մը: Հոն ներկայ եղայ հայ նկարիչներու միութեան որահին մէջ նոյն առիթով կազմակերպուած ցուցահանդէսին, ուր դիտեցի նկարները, որոնց մէջ ամէնէն աւելի աչքիս զարկաւ Միմասի մէկ նկարը: Մինչ այդ բնու ծանօթութիւն չունէի Միմասի մասին: Երբ յափշտակուած կը դիտէի վերայիշեալ նկարը, մէկը յանկարծ ձեռքը ուսիս դընելով բռաւ.

«— Տեսնու՞մ եմ, թէ շատ ես հայում այս նկարիմ եւ, հաւանաբար, նաեւ համու՞մ ես:

«— Անշուշտ,— բսի,— տարբեր գոյներ եւ աւելի կախարդական բան մը կայ ասոր մէջ: Շատ հետաքրքրական է:

«— Կա՛ւ,— բռաւ,— ես եմ հեղինակը: Եթէ ուզու՞մ ես, կարգ ես գալ եւ տեսնել իմ բոլոր նկարները:

«Այդ վայրկեանէն սկսայ նանչնալ Միմասը եւ սկսաւ եզրայշարժիւն մը մեր միջիւ: Միասին ելանք դուրս ու Արսլեան փողոցէն մտանք Սայաթ-Նոպա, անկէ՛ թեփուեցանք դէպի Իրևնից բակը ու բարձրացանք մտակայ շէնքին բարձրագոյն յայկը, իր աշխատանոցը: Երկար բանալիով մը բացաւ դուռը: Հսն գտնուած բոլոր նկարները առանձին-առանձին ցոյց տուաւ ինձի ու ես, առիթէն օգտուելով՝ անոնց մեծ մասը լուսանկարեցի: Շարքիմ մէջ կը գտնուէին նաև «Ջաջուռ»ը, «Տէր-Ջօրը», «Գայիանէի դիմանկարը» եւ այլ այլառու նկարներ»:

Այսպէս, երկու հայ արուեստագէտները, մէկը Հայաստանէն, միւսը Ամերիկայէն, պատահաբար իրարու կը հանդիպին ու անմիջապէս կ'եղբայրանան, ինչպէս կը սիրէ բնւ Հրաչ Թաշճեան:

Եւ երկուքին համար ալ բախտորոշ կ'ըլլայ այս հանդիպումը, մասնաւորաբար հետեւեալ իմաստով.—

Հրաչ Թաշճեան ինքզինք կը վերագտնէ իրրեւ հայ, հետեւաբար նաեւ՝ իրրեւ հայ արուեստագէտ, իսկ Միմաս Աւետիսեանի պարագային՝ կը փրկուին իր գեղանկարներուն մեծ մասին լուսապատկերները (սլայտ), որովհետեւ երկու արուեստագէտներուն հանդիպումէն շուրջ եւ

րեք տարի ետք, 1972ին, Աւետիսեանի արուեստանոցը Հրոյ ճարակ կը գտնուայ, «Իսորհրդատուր պայմաններու տակ», ինչպէս կը գրէր արտասահմանի Թերթերէն Տէկը:

Այս աղէտին տեղը պահպանուի, Հրաչ Թաշճեան կ'ըսէ.

Միմաս Շատ չէր խօսեր այս տեսակ նիւքերու մասին, սակայն օր մը շայտեց, որ իմ կը կարծէ, թէ դիտումսը հրկիզած եմ իր գեղանկարները, որովհետեւ չորս կէտերէ կրակ առած է որուեստանոցը, իսկ հրկիզողները ո՛չ թէ պետական օրգանիքն են, ինչպէս կ'իմքարդրեն շատեր, այլ... նախամտղոներ»:

Միմաս Աւետիսեանի մտերմները կը վկայեն, որ այդ օրերուն անուանի արուեստագէտը Թէն իր գաւառիները կորստեցած հօր մը պէս ծանր տաղանջներու մէջ էր, սակայն շատով ինքզինք կը վերագտնէ ու այս անգամ կը սկսի աւելի ուժովին թափով մը աշխատի՝ ժառանգը դարձանելու համար ահա ուր կուրուարը: Բարեբախտաբար, մեծաշնորհ արուեստագէտը կ'արտագրէ այնպիսի կրթողային երկնագրեր, որոնց մասին Ռոյիթը Մէյլենտ պիտի թէր.

«Եր Ալարչուքեան ծագկուն մրգատանը զարնալային բարումմուէտ մըրգատան մըն է, որ մեզի կը պարզուէ ամմահական պտուղներ»:

Միմաս Աւետիսեանի զպտուղները իսկապէս անձահական են, սակայն, դժբախտաբար, քանակական առումով շուճեցան անոնք, որովհետեւ 1975ին, ինքնալարծի անհեթեթ արկածի մը հետեւանքով մահացաւ նկարիչը, սուգի մատնելով հայ գեղարուեստագէտ հասարակութեան հետ մեր ամբողջ ժողովուրդը:

Միմաս Աւետիսեանին պատահած այս արկածով ընդմիջու կ'անցաւ յարաւան ու լուսալուս տաղանդի մը ստեղծագործական հոսքը:



Դարերէ ի վեր հայ մանրանկարչութիւնը իրրեւ ներշնչարան ծառայած է թաղմաթիւ հայ, երբեմն նաեւ օտար գեղանկարիչներու համար, սակայն զիչեր



Խաչելուփիւն, գործ՝ Միհաս Աւետիսեանի

Ճիշտ կրցած են իրապէս ձիւրհուիլ հայ
 մանրանկարչութեան հուժեան մէջ,
 յայտնարեիլ անոր ինքնուրոյնութիւնը,
 զգալ անոր պիծերուն ու գոյնեղուն խոր-
 հուրըը, զբուսուրիլ զայն ըստ արժան-

ւոյն, տեղի եւ ժամանակի ուրիշ համա-
 ձայն:

Յիշելու համար այդ զիշերէն երկու-
 րը, տանք տնունները Արշիլ Կորթիի եւ
 Միհաս Աւետիսեանի, որոնց զբուսուրած

ունենում արհեստագիտական կապը (բազալա-տեի անոնց «Մայրեր»-ուն գիմանկարեն-ը) ո՛չ թէ փոխադրվածության հարց է, որ յաճախ կը պատահի արուեստագիտ-ներուն մաս, այլ ունի ընդունի ընտյթ: Անոնց ոճը նոյն հոգին ծնած ու հայ ման-րանկարչութեամբ սնած արուեստ մըն է, եւ որովհետեւ իստքը կը վերաբերի ու-ժեղ անհատականութեան տէր ու այդ պատճառով ալ չիսթարուած երկու գեղ-ընկերու խառնուածքին, աճէն ինչ հաս-կընայի կը գտնուայ:

Յասկանչական է այն փաստը, որ Մի-նաս Աւետիսեան, երբ 1969ին կը ծանո-թանայ Արշիլ Կորջի Առայեանի արուես-տին, չի կրնար զգուշի իր հիացումը: Ըստ թաշնհանի վկայութեան, Հայրենի ար-ւեստագէտը վեր գարմանար, թէ ինչպէ՛ս հայրենիէն հեռու եւ օտար ասիերու վը-րայ, Կորջի յաջողած է ստեղծել հայկա-կանութեամբ տոգորուած հստիկու ար-ւեստ մը:

Հրոյ թաշնհան կը շարունակէ.
«Մինաս Աւետիսեանի արուեստանոցի իրիկզումէն միակ փրկուած նկարը Կոր-ջիի յուսանկարն էր, գոր չզգաւար» ար-ւեստագէտը կը պակեր մտառնմի պէս, միտք մը կամ խորերդանյական հմայք մը տեսնելով ամար մէջ, իրեն ուժ տուող նոր տղիւր մը:

Մինաս Աւետիսեան բացատրիկ սեր ու հիացում ունէր թէ՛ Կորջիի անձին եւ թէ՛ անոր արուեստին հանդէպ: Ու, զարմա-նայի զուգադիպութեան, այս երկու ար-ւեստագէտներուն ճակատագիրը եզած է յրեթէ նոյնը:

Երկուքն ալ իրենց մանկութիւնը ան-ցուցած են հայրենի գիւղական միջավայ-րին մէջ:

Երկուքն ալ նկարած են իրենց ման-կութենէն մնացած տպաւորութիւններ, կերպարներ եւ ընտելութիւն տեսարան-ներ:

Երկուքին ալ արուեստանոցները հրոյ ճարակ զարման իրենց սազանդին լիու-թեանը մէջ:

Երկուքն ալ ունեցան երգուեստ թըշ-նամիներ:

Երկուքն ալ մահացան ոչ-ընական մա-

հով եւ գրեթէ նոյն տարիքին, Արշիլ Կոր-ջի 42 տարեկանին, Մինաս Աւետիսեան՝ 46:

Մինաս Աւետիսեան ծնած է Լենինա-կանի շրջանին մէջ, Զարու գիւղը, 1924ին: Նկարչական նախնական ուսումը Երևանի մէջ ստանալէ հաջ, կ'ընդունուի Լենինկրասի Ի. Ռեպինի անուան գեղար-ւեստի ակադեմիան, զոր մեծ յաջողու-թեամբ կ'աւարտէ 1960ին: Անհատական ցուցահանդէսներուն զուգահե՛ս՝ մասնակ-ցած է խմբային բազմաթիւ ցուցահան-դէսներու՝ թէ՛ Սորհրդային Միութեան եւ թէ՛ Եւրոպայի ու Ամերիկայի մէջ:

Արտայայտ է Մինաս Աւետիսեանի եւ Հրոյ թաշնհանի մտերմութիւնը: Ամերի-կահայ արուեստագէտը, Հայրենի ար-ւեստագէտին հետ ծանոթութիւն հաստա-տելէ հաջ, զանի ժր տարին անդամ մը կ'այցելէ Հայրենիք ու հետզհետէ աւելի հազորգակից կը գտնուայ արդի եւ, մա-նաւանդ՝ անցեալի հարուստ հայ մշա-կոյթին: Կ'այցելէ Հայրենի տեսարժան վայրերը, յաճախ հետեւում, միշտ բնկեր ունենալով Աւետիսեանի:

«Ունէ մէկը կրնայ երթալ ու դիտել մեր վաճառքը, սակայն երբ Մինասի պէս մէկը կ'ընկերանայ բնոյ, այն ատեն իրա-պէս կը զգաս, թէ ինչ է հայկական ու-գիմ» — կ'ըսէ թաշնհան:

Բնական է, որ Մինաս Աւետիսեանի պէս ուժեղ անհատականութեան տէր ար-ւեստագէտ մը (որուն հայկականութիւնը թէ՛ թեմայի եւ թէ՛ մա՛նաւանդ ոգիի ա-ռուժով շուայորէն զրտելորուած է իր գե-ղանկարներուն մէջ) պիտի բացմտէր արուեստագէտ այցելու, որ անմիջապէս պիտի հրաժարէր անցեալի իր ոճէն ու նկարէր Աւետիսեանի բարերար սազեցու-թեան տակ...:

Մինաս Աւետիսեանի եւ անոր միջնոր-դութեամբ հայրենիքէն ստացած Քաշ-ճեանի տպաւորութիւնները, որոնք հայ մշակոյթի ու հայ հողին հանդէպ պաշ-տամունքի աստիճանին հասած են, հե-տապային դրսեւորուեցան իր «Արարատ»-ներուն, «Միջնադարեան յուշարձաննե-րուն», «Եւրոպայի ըմա-նկարներուն», «Հայրենի ըմա-նկարներուն», «Հայրենիներուն եւ այլ





չարքերուն մէջ, որոնք նոր նրբերանդաներ, ջերմութիւն ու որակ հազարքեցին ամերիկական այս արուեստագէտին: Թաշճեանի գործերուն մէջ ասանձին խորք մը ու փայլ մը տնի Մինաս Աւետիսեանի ծննդավայրին նուիրուած «Ջազու» իզանկարը:

Թաշճեան հպարտութեամբ կը յայտարարէ, որ ինք ո՛չ միայն շատ բան սորվեցաւ Մինաս Աւետիսեանէն, այլև ինքը՝ Աւետիսեանն էր, որ իրեն սորվեցաւ հայերէն խօսիլ եւ հայրենի արտայայտելի կենսաբնի թէ արուեստին մէջ: Ան կը յայտարարէ.

«Նորապէս եւ ընդմիշտ երախտապարտ եմ իմ յաւերժական բարեկամիս՝ տարաբար Մինաս Կարապետի Աւետիսեանին, որ օգնեց ինձի ճանաչուիլ եւ սիրելու: Հայաստանի իսկական գեղեցկութիւնը: ... Հայաստանեան համայնապատկերներու գեղեցկութիւնը կ'ենտեփի դարերու խորհուրդին ընդմէջէն: Կոխարդական ու գոյլիծ բնոյթ մը ունի անկա, մա՛նա-

ւանդ հայ ժողովուրդի զաւակներուն համար: Անիկա կարծես այցելուները կը հրաւիրէ մագլցիլ իր բութներն ու լեռները՝ ինն աստուածներ փնտռելու»:

Հրաշ Թաշճեանի ծնողները «Տին աստուածներու» մէջ կեդրոնէն՝ Պարբերդէն գաղթած են Ամերիկա, 1900էն առաջ, Ան ծնած է Պոսթրի շրջանը, 1926ին: Գեղանկարչական ուսումը ստացած է Պոսթրիի Վեդարտեալից Թանգարանին կից ուսումնարանին մէջ, ունեցած է շարք մը անհատական ցուցանահղէտներ Ամերիկայի տարբեր քաղաքներուն մէջ եւ մասնակցած խմբային բազում ցուցանահղէտներու, որոնց ընթացքին ստացած է գեղանկարչական մրցանակներ: Հրաշ Թաշճեան միայն գեղանկարիչ մը չէ, այլ է՝ նաեւ մակութային գործիչ մը, որ թերթերու, ձայնասփիւռի եւ դաստիարակչական միջոցով լայնօրէն տարածած է հայ արուեստին հմայքը թէ՛ մեր եւ թէ՛ օտար շրջանակներուն մէջ: Ան իր նախաձեռնութեամբ եւ յամառ աշխատանքով 1973ին հիմնեց Ամերիկահայ կերպարուեստագէտներու միութիւնը, նպատակադրելով քաջալերել եւ տարածել հայ մակութային դանձերուն ուժն ու հմայքը: Թաշճեան ինքն էր դարձնել, որ Ամերիկայի տարբեր քաղաքներուն մէջ ընդհանրեց Մինաս Աւետիսեանի հրաշ ճարակ դարձած կտուներուն լուսազաւակները եւ եղբարարիտ իր արուեստակիցին մահէն ետք կազմակերպեց ցուցահանդէս մը՝ ի մասնաւորի օտար արուեստագէտներուն համար:

Հրաշ Թաշճեան կ'ըսէ.

«Ժամանակը կը չափուի երկվայրկեաններով, ժամերով եւ օրերով, սակայն մարդկային էակի մը կեանքը կը չափուի իր կեանքի տեւողութեան մարդկութեան բերած Բպաստով: Մինաս Աւետիսեանի Եպաստը ամասնման է՝ իր կենսալից գոյններուն փարբախտութեամբ եւ մարդասիրութեամբ: Մե՛նք չենք մոռցած զինք ու չենք կրնար մոռնալ»:

ՄՈՎՍԷՍ Ս. ՀՆԻԿԵԼԵԱՆ

Ա. Ի. Ի Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն

Գ.- ՆԱՄԱԿՆԵՐ՝
ՍԻՄՈՆ ԶԱԿՈՒԲԵԱՆԻՆ

Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի» (Հատ. 6, Երևան, 1980) և Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարան» (Հատ. Բ, Երևան, 1981)՝ Սիմոն Զակոբյանը (1880-1942 թթ.) ծնունդ է նախկինում Ելիզավետպոլ, այժմ Կիրովոպոլ քաղաքում: 1899 թ. աւարտել է Քիֆլիդի ներսիսեան դպրոցը, 1902-1907 թթ. Շիկյարիայում ստացել է բարձրագոյն ուսում (Երևանի պատմա-փիլիսոփայական կամ դրական): 1909-1913 թթ. աւարել է նոյն երկրում, Աւստրիայում և Բուլղարիայում՝ զբաղուելով գրականութեամբ: 1913 թ. վերադարձել է Կոնկաս, Բաբում խմբադրել է «Արեւ» թերթը: 1918 թ. հրատարակել է Դաշնակցութիւնից, Փարիզում զբաղուել է արեւմտահարոյական գրականութեամբ: 1922 թ. վիեննայում հիմնադրել ու խմբագրել է «Արեւ» գրական-գիտարուեստական (ըստ Գառ. Ստեփանյանի՝ գրական-գիտական) ամսագիրը, որը հետագայում դարձրել է երկարաթափերթ, տեղափոխել է Բեռլին, ապա՝ դարձեալ Վիեննա, և զաղարկեցրել է 1924 թ., երբ անվերադարձ ձեկնել է Սոփ: Հայաստան: Երևանի պետական համալսարանում դասաւանդել է արեւմտահարոյական գրականութիւն, 1929 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: Գրականագիտական ուսումնասիրութիւնների հեղինակ է:

Աւ. Իսահակեանը նրա մասին արտասույտուել է Վարդգէս Ահարոնեանին գրած նամակներում, 1921 թ. Դեկ. 24՝ «Դաշնակցութեան մէջ մի գլուխ կար [որ քաղաքականութիւնից] նսակում եր — Ս. Յակոբեան, այն էլ հալածիցից» («Աւետիք Իսահակեանի նամակները... Վ. Ահարոնեանին», էջ 81): Վ. Ահարոնեանը էջ 85, ծան. 3-ում նկատել է սուել, որ Իսահակեանը «երազնահատու է Ս. Յակոբեանին իրրեւ հասարակական գործչի. նա դաշնակցական է եղել այնքան մամանակ, որքան դա նրան ձեռնուռ է եղել, և ապա աղատ կամքով է անցել միւս կողմը, որի քաղաքականութիւնը պաշտպանել է իր հանցւածում, որտեղ Իսահակեանը նկատել է սուել Վ. Ահարոնեանին՝ «Ս. Յակոբեանի ինդրանքի վրայ հանդանակութիւն է կազմակերպել և փողն ուղարկել Ս. Յակոբեանին 1922/23» «Աւանց հաշուի առնելու, թէ ի՞նչ բանի համար է գործածելու այդ դրամը Յակոբեանը: Այդ դրամով Ս. Յակոբեանը բաշխելիստեր և ևսկադաշնակցական ամսաթերթ հրատարակեց»: 1922 թ. Սեպտեմբերի 1ի նամակում Իսահակեանը նկատել է սուել Վ. Ահարոնեանին՝ «Ս. Յակոբեանի մասին գրածիդ համաձայն չեմ. նա հազուադիւր լաւ մարդ է, ազնիւ, քարի. բայց շատ իդէոլոգ է և հաւատացող բոլշեւիկ. Փրագներին» (Ն. տ., էջ 95): Բայց 1937 թ. Մայիսի 10ին Երևանում իր կնոջը գրած մի նամակում Իսահակեանը դանդաղուել է. «Սիմոն Յակոբեանը իմ դէմ կատաղի կրիւ է սկսել, բայց տակը պիտի մնայ: Կը գաւ կ'իմանա» («Նամակներ», էջ 329, Երևան, 1979): Հետեանքը մեզ յայտնի չէ, բայց Ս. Յակոբեանը աքաղուել է, որի մասին լուս է «Հայկ. Սով. Հանրագիտարան»ը:

Մ. Մ.

1

24 Նոյեմ. [19]19. Ժընև

Սիրելի Սիմոն,

Մօտ 20 օր է վերադարձել եմ Գերմանիայից. շատ տպաստութիւններ ունիմ ասելու, բայց հաւաս չկայ գրելու. հայոց հարցի լուծման այս սրտմաշուք ձգձգումը մեղսում է ամէն եռանդ ու աշխոյժ. ձեռքս ոչ մի բանի տաք չէ, նոյնիսկ իմ սիրած նիւթերի (գրական) վրայ: Զապում եմ ինձ նստել-պարսպել, բայց բռնիօրէն բան դուրս չի գալ:

Լաւ, անցնենք՝ մի-երկու բան ունիմ ասելու: Ճակատդ կը պայելմ, թէ մի գրես ինձ մի քանի տողով թէ ի՞նչ դրական հաւաստիացումներ ունիք մեր բախտի տնօրինման մասին. մի՞թէ Ամերիկայից աւելի որոշ բան չ'ունիք. չէ՞ որ հանրապետականները իրենց պարագլխով՝ Լաճով՝ (Lodge, 1850-1924) մեր բարեկամն են, եւ մի՞թէ բարեկամներից պիտի հարած ուտենք. եւ արդէն այս երկարատեւ ձգձգումը ասպետութիւն չէր Ամերիկայի կողմից. ուղղակի հարեց մեր խեղճ ժողովուրդը:

Լսեցի, թէ Ամերիկական կառավարութիւնը մեր պետութեանը 50 միլիոն դօլար փոխառութիւն է տուել, չ'հաւատացի, բայց ուզում եմ ստուգել. ի՞նչ բան է դա:

Համօյին (1) նամակ ուղարկեցի տիկ. Զատաֆեանի միջոցով, արդեօք ստացաւ. գրել էի, թէ Չիլիկարեան-Սեւակի (2) կի՛նը (3) ամսական 300 Շվեյցարական ֆրանկ էր խնդրել որբերի համար, [Ա.] Ահարոնեանից. նրան ուղարկել են կարծեմ, միայն 220 ֆր. խնդրում է լրացնեմ մնացածը. նամակս կարողա եւ հոգս տաք:

Ռերիշ մի խնդիր. մի ուսանող կայ այստեղ, թուրքահայ, Յարութիւն Բողճալեան. ուզում է Երեւան գնալ. փող չունի. նրա անունը այն ցուցակի մէջն էր, որ զարնանը կապմած էր, նա չկարողացաւ գնալ, որովհետեւ աւարտման քննութիւններն էր տալիս, եւ նրան հասանելիք փողը գնացողները իրար մէջ բաժնեցին. հիմա սա փող չունի վերադառնալու եւ նոյնիսկ ապրելու այստեղ. Նովրուզը (4) առաջարկում է նրան միայն ֆրանսական 500 ֆր. մտածի՛ր, սրանով ո՞ր կարելի է գնալ. նա խնդրում է Հայաստանի պատերազմութիւնից, որ իրեն գրնէ մի 500 Շվեյցարական ֆրանկ տաք, որ կարողանայ գրնէ իրեն Պօլիս նետել. վրան էլ իսկի հազուատ չունի:

Ես էլ խնդրում եմ իմ կողմից մի բան անէք եւ փողը տեղափոխէք կամ իմ անունով նրան յանձնելու, կամ տ. Անտօնի. բայց գրել ինձ, որ ես յայտնեմ նրան, եւ պատրաստի գնալ:

Յետոյ իմ մասին: Ես մնացի անորոշ վիճակի մէջ. գրեթէ ապրելու փող չունեմ, հապիւ մի ամիս քաշքշեմ. յետոյ չգիտեմ ի՞նչ պիտի անեմ. Կովկասից գրել եմ, որ փող գայ. բայց ո՛չ մի լուր:

Վահան Փափապետնը գրել էր ինձ իր մեկնելուց առաջ, թէ քեզ (ինձ) ճանապարհածախս կը դրկեն Փառիպից. արդ, մի տեղեկացի՛ր թէ այդ ի՞նչ խօսք է եւ ի՞նչքան կարող են ուղարկել. այնպէս լինի, որ մի քանի ամսայ ապրելու փող թողնեմ կնոջս, ու ես էլ գնամ, թերեւս այնտեղից կարողանամ կնոջս փող դրկել. չ'գիտեմ այս անելք դրութիւնից ի՞նչպէս պիտի դուրս գամ: Խնդրում եմ տեղեկացիր եւ ինձ գրիր: Ամէն բան մեր սպասածին հակառակ եղաւ. կարծում

էինք, թէ ամառը կը վերջանայ Հայկական խնդիրը, եւ աշնանը բոլորս էլ ապառ Հայաստանում կը լինինք. սակայն հիմա ստիպուած ենք թէ՛ մայր-Հայրենիքում թէ՛ այստեղ սովի դէմ կռուել:

Վերջապէ՛ս, բարեւներով եւ համբոյրներով.

մնամ Գ. Ս. ԱՒԵՏԻ-Ք.

Adresse:

A. Isohakian,
rue Prévost Martin, 53,
Genève. (5)

- (1) Յրեմի Լալի. Հանրագիտութեան կառավարութեան անդամ Հոմո Յնանդանեան:
- (2) Քո. Յ. Չիլիկիբեան կամ Յուրի Յեւակ (1885-1915), գրող, եղեսկի զ-ն:
- (3) Գեորգիանի:
- (4) Յակոբ Նազար (1866-1947), Հասարակական գործիչ:
- (5) 1920 թ. Մ. Յակոբեանին գրած նամակներէ նշանակուած էն եղել Փարիզ, տեղեւ Ազգային դատաւարութեան Հասցեով, բայց նախ անձին. ուստի՝ այս քուակներն Մ. Յակոբեանը սպասելու է եղել Փարիզում եւ Հասարակական դատաւարութեան անկողինը պատահականութեան գործերում:

2

3 դեկտ. [1919]. (1) ժընեւ:

Սիրելի Սիմոն,

Սուսգայ նամակդ. նկարածդ կացութիւնը վիստեցուցիչ է: Անգլիական (2) պօլիտիկի (3) մասին կովկասի մէջ, ես այն կասեմ, որ նրանք ուզում են կովկասի Հայաստանը տալ թիրքո-թաթարներին, իսկ հայերին թիրքա-Հայաստանից մի-երկու նահանգ. որովհետեւ թիրքախայերի միջապային հարց գոյութիւն ունի եւ Անգլիան խոստումներ է տւել: Մեր մարմնի վրայ առեւտուր է անում:

Այսօր վրացի Զիցերիայի Դելեգատիոնից ինձ ասացին, թէ հայերի եւ վրացիների միջեւ համաձայնութիւն է կայացել արդէն եւ երեք տարով մի պայմանագիր են ստորագրել: Ո՞րքան ճիշդ է, չգիտեմ:

Գրի՛ր թէ՛ Անգլիան ո՞ւմ եւ ի՞նչ կերպ, եւ որքա՞ն հաստատօրէն, ար-սել է թէ՛ Հայաստան երկիր կայ: Դու գրում ես թէ՛՝ «բերե թէ Արտ. գործոց մինիստրութիւնը (4) «ընդունել է»: Մենք հանդիսաւոր խոստումներին չենք հաւատում, ո՞ր մնաց ասէ-կօսէներին:

Ռսանդո Բոլշակեանը երէկ մի կերպ գնաց... 500 ֆրանկով մինչեւ Պօլիս:

Գրեցի՛ր Հրուշեակո (5) առաջարկի մասին:

Գ. Ս. ԱՒԵՏԻ-Ք.

(1) Տարեթիւը՝ բացիկէ գրաստանի կնիքից: Հասցեագրուած է Mr. Simon Akopian, 27, Av. Marceau, 27, Paris.

(2) Բնագրում՝ վրիպակով՝ «Անգլիական»:

(3) Փառաբանութիւն:

(4) Նախարարութիւնը:

(5) Փուշէ Միխայիլ Սերգեւիչ Ֆրանկուզի (1866-1934), ակերական բուրժուական պատմաբան. 1919ին վարսակուել է Աւստրիա, Թեղրանիս եւ վերադարձել 1924ին:

3

30 դեկտ. [19]10, ժընել (1).

Սիրելի Սիմոն,

Խնդրեմ, ծուլութիւն չանես. մէկ-մէկ գրես, թէ ի՞նչ վիճակի մէջ է մեր հարցը. այս շաբթուս ի՞նչ լսեցիր [Ա.] Ահարոնեանը ի՞նչ է գրում Լօնդոնից, [Ա.] Գարօն — Ամերիկայից:

Այնպէս վատ պզգացումներով հեռացայ Փարիզից, որ մինչեւ օրս խելքս գլուխս չի եկել, եւ չեմ կարող եռանդով պարապել: Այստեղ նորութիւններ բնաւ չունենք. փող ունենայ [Ի] (2) մի քիչ եւ մնայի Փարիզ այս ծանր հոգեկան դրութիւն փարատելու (3). ո՛չ կարող եմ պարապել, ո՛չ հանգիստ սպասել մինչեւ մեր բախտի որոշումը:

Շուտ-շուտ գրի՛ր, սիրելի Սիմոն:

Բարեւներ քեզ եւ Սիւսակին:

Բո, ԱԻԵՏԻՔ.

(1) Այս բացիկն էլ հասցէազրուած է Լախոզգէ հասցէին, Փարիզ:

(2) Ինքնազրուած՝ ունեմայ:

(3) Եւրոպայի վաճառական շուկայի վերջին փուլը, չորսուսուս զնայու համար, բայց յետոյ գտած վաճառատ, վերապարտայ Յարից ժընել՝ զարմանք զնայու համար (ՇՆԱՄԱԿ-ԵՆՔ, էջ 176):

4

8 փետր. [1920, ժընել] (1)

Սիրելի Սիմոն,

Նամակիս չպատասխանեցիր, եւ, խռոված չե՞ս ինձէն: Լօպան էի, Խստափն գրած նամակդ կարդացի. Հայաստանի սահմանագծումը — մինչեւ Բալու — գրիր ինձի՝ էլ ի՞նչ բան է:

Ե՞րբ են վերապէս լուծելու մեր հարցը, մեռա՛նք: Գարօն ինչո՞ւ է հրաժարուել. ի՞նչ ելք ունեցաւ Նուբարի (2) պատգամաւորութիւնը Երեւանում, ինչո՞ւմն էին քապերը (3) բանակցութեան: Գերման. թերթերում կարդացի, թէ Թիֆլիսում վրաց կառավարութիւնը տապալել է, բոլշեւիկներն են տեղը. ի՞նչ գիտես դրա մասին: Էնվերը երեւացել է եւ պիտի արշաւէ Հայաստանի վրայ՝ Ադրբեյջանի հետ. ստո՞յգ է: Մի խօսքով մէկ-մէկ գրի՛ր. ամէն տողիդ կարօտ եմ: Լսեցի, որ Համօն գնացել է Երեւան, լաւ արեց. նա այնտեղ պէտք կու գայ, իսկ Փարիզ բոլորովին անելորդ էր. պո՛ւր ծախս:

Ես շա՛տ պատուած եմ. գրում եմ վեպս (4), բայց վերջերս ընդհատեցի, եւ գրում եմ հիմա Սասունցի Դաւթի որդու Միեղի պօեման (5). իմ վարիանտի (6) Միեղը, որը բոլշեւիկ է (7): Վարիանտի էութիւնն է հարապատ, ժողովրդից վերցրած, մնացածը եւ եմ հնարել. շուտով կը պրծնեմ, մեծ բան չէ, մի 100 տուն երեւի, այսինքն Թումանեանի Սասունցի Դաւթի կիսու չափ:

digitised by A.R.A.R.@

Սպասում եմ նամակիդ. մեռելներն են լուս, հօ, դու, փառք Աստծու, ողջ ես, խօսիր. ծառայ եմ ձայնիդ: Բարեւով

Քո, ԱՐԵՏԻՔ.

- (1) Տարեթիւը եւ գաղաթի տեսիլը՝ բացիկի փոստային կնիքից: Այս եւ 1920ի մեւ բացիկների ու նամակների (արոյց Երարիները չեն պահպանուել), Հասցեագրուած են Փարիզ, Տ. Ակոպլան. Délégation Arménienne. 27. Av. Marceau, 27.
- (2) Հասցեատար Փոզոս Կուլար փաշա:
- (3) Այսինքն՝ «Իմ քրոջ»:
- (4) «Մուսայ Կարո», որ լոյս չտեսաւ սոցալուսթեամբ:
- (5) «Մուսայ Մինք», որ լոյս տեսաւ նախ «Արեւիկ» սոցալուսթեամբ, ապա՝ առանձին, 1922 թ. Վրնանայում: Ի սոցալուսթեամբ գրականագիտական գրքի՝ ինչպէս կարգում ենք նամակում, վրդերքը 1920 թ. սկզբներին զեւ գրուելու շնորհում էր, մինչդեռ սոցալուսթեամբ է առի կարծիքը. թէ գրուել է 1919 թ.:
- (6) Այսինքն՝ «Սոցալուսթեամբ»:
- (7) Այս ժամին տե՛ս, սակայն, ճշգր նամակի նախաձեռնին պոզրբոյթը:

5

2 Մարտի [1920] (1). Փքնեւ.

Միրեյի Միմօս,

Ստացայ նամակդ. շա՛տ շնորհակալ եմ:

Կիլիկիայի ջարդերի մասին ինձ մի քանի որոշ բան գրի՛ր. մի՞թէ այդքան ահռելի չափերով են. ուրեմն «Հայաստանն առանց հայերի» հիմա դառնում է «Կիլիկիան առանց հայերի» (ուզուե՞լի՞ (2)). ա՛յդ է նշանակում ֆրանս. մանդայ:

Փերմանացիք ասում են, թէ հիմա ո՞վ է ջարդում, դարձեալ մե՞նք... Թող պատասխանեն կաշառուած ֆրանս. թերթերը:

Երկու հեռագիր ուղարկեց տեղիս զաղութի կողմից գերագոյն խորհրդոյին, իբրեւ բողոքներ. բաւական խիստ լեզուով էր. դա է մեր մխիթարանքը. ի՞նչ կարող ենք անել ուրիշ:

Ամերիկան գետինը մտաւ. մեծ-մեծ խոստումներ արաւ, Արմ. Գարոն էլ ուռցրեց ու հաւատացրեց մեզ. հիմա միայն 2 սպանուած ամերիկացիներն յարնագինն է պահանջում: Կարծես Սուլթան Համիդի ժամանակներն ենք նախորդում: Վիսօն մեր դատին շատ վնասեց. ասելով ատում եմ այդ տիրացուին. թէեւ միշտ եմ ասել. շնորհ[ի]քը մեծ խօսքեր ասելու մէջ չէ, այլ կատարելու. իրականացնելու: Բոլորովին յուսափաթ արեց այդ մարդը մեզ իր դուարապաշտ ժողովրդով:

Կարո՞ղ ես ինձ մի քանի տողով բացատրել, թէ մալականները (3) (Կարոյի նահանգի) ինչո՞ւ են հակառակ Հայաստանին. ի՞նչ են ուզում այդ երկկապ տերերը. ինչո՞ւ են դաշնակցել թիւրքերին. քեցեք, գնան Ռուսաստան:

Իսկ Ազուլիսի ջարդե՞րը. չէ՞ որ այնտեղ ամերիկեան նահանգապետ կար... գնացողը անցնում է մեր բշնամու կողմը. անհասկանալի ճակատագի՛ր:

Միրեյիս, ոչ բարով մտել ենք քո սիրած Հրուշեակու լիգայի (4) մէջ. (թէեւ այդ մարդը սկզբից այնչաթ քաթարասէր երեսաց), այսօր նրա հրատարակած «L'Europe Orientale» թերթի № 9-10 մէջ կարդում եմ հետեւեալ էջերում

47 եւ 48. Ի վնաս մեզ եւ ի պաշտպան Ադրբեյջանին տողեր: Բողոքեցի, խստորէն, մի հերքում եւ մի յարձակում պիտի գրեմ թերթի մէջ, եթէ չտպեն, սպառնամ պիտի հեռանալ լիզայից, մեղադրելով, որ լիզայի օրգանը (5) կողմնապահութիւն է անում, պօլեմիկ(6) է անում լիզան կապմող մի պետութեան դէմ, յաւ առիթ է հեռանալու այս խմբակից. — կամ մենք, կամ Ադրբեյջանը. ես կարծում եմ, որ միւսները մեզ կը պաշտպանեն. խնդրում եմ իսկոյն կարգաւ եւ Ձեր խորհուրդը գրեա ինձ:

Ես յօդածը կտամ, կ'սպասեմ Ձեր պատասխանին՝ ուշտիմատումը (7) տալու համար: Արիկայ, լիրբ աշխարհը, կարծես, բոլորը մեր դէմ են. չափազանց կատաղած եմ եւ արդէն պզանջով եմ մասնակցում այս լիզային:

Ի՞նչ դուրս եկաւ Լօնգոնի ժողովից. երբ են կանչելու թիւրքերին. երբ են վերջնականապէս գծելու մեր սահմանները: Ինչպէս է երեսանի վիճակը. ասում են համաձայնակ կայ եւ սով. օ՞Փ, մեռանք... զբաղմունքներս կանց առան. այս հոգեբանութեամբ չի կարելի պարապել. տնտեսապէս էլ շան հայի մէջ եմ:

Ար. Գարոյի բաց նամակը Նուբարին՝ ջղայնացած յիմարութիւն է:

Որքան որ մեր խմբապետները Դրօ, Մուրադ, Անդրանիկ, Սեպուհ բարձր են, այնքան էլ մեր մտաւոր ղեկավարները, քաղաքագետները տիմար մեծամտութիւններ են, բացի քեզնից եւ մի-երկուսից՝ միւսներին արհամարհում եմ. միթէ՞ իրատունք չունիմ: Ամենից շա՛տ արհամարհում եմ լաւատեսներին, որ երեսխներ են ուղղակի. ախտո՛ս այն դրամներին, որ վատնում են...

Բարեւով

Քո ԱԻԵՏԻՔ

- (1) Այս նամակը հասնեալով 1920 թուականից է:
- (2) Հայերէն ճշտեալութեան:
- (3) Քուս ազանդաւորներ, սրեւջ Հայաստանում հաստատուել են 18րդ դարի 80ական թուականներին:
- (4) Միւսարում:
- (5) Գալտեանիան թղթեր:
- (6) Բանակէն:
- (7) Վերջնապէս:



6

24 Մարտի [1920, ժընև.] (1)

Սիրելի Սիմօն,

Զաւօն (2) նորից գրում է, մի ճար արեք, որ ուզենաք՝ կարող էք. ասում էք փող չկայ, բայց սուղ քնակարան էք վարձել, որ բոլորը քննադատում են: Հրուշեակու ազգերի լիզան նորից 100 պից. ֆրանկ է ուզում. շա՛տ ջուտով ուղարկեցէք. ես չունէի, որ այս անգամ տայի. ջուտով կարգադրեցէ՛ք:

Ուրեմն նորից Զանգեզուրի շորջը պատերապմ. Անգլիան ուզում է անպատճառ ունենալ Զուղայի բերանը, հնար չկայ, կորած է թէ Ղարաբաղը, թէ Զանգեզուրը եւ թէ Նախջեանը: Դուք հաւատում էք Թիւրքահայաստանի ազատութեան, ես դրան չեմ հաւատում, երաջք պիտի լինի, եթէ ապատի: Իտալիան անվերջ պիտում է Մուստ. Բեմալին. Ֆրանսիան՝ գիտենք ի՞նչ չունեն է,

Անգլիան էլ միա կողմից Ադրբեյջանն է պինում, խաբում են մեզ: Բաշենիկներին էլ յոյս չկայ, նրանք էլ պանթուրանիստ (3) են դարձել. շա՛տ մտայլ են տեսնում գործերը. Պոլսի առումը գարանտի (4) չէ, քանի որ ոչ ոք լուրջ չի մշտածում՝ Հայաստան շինել:

Վ. Տերեանի մահը (5) սարսափելի ազդեց վրաս. թե իբրև ինձի համար լաւ ընկեր, եւ թէ աննման բանաստեղծ՝ անփոխարինելի է. մի բան զրի՛ր «Վերածնունդի» (6) մէջ:

Պօլմներին հրատարակութեան մասին սրտանց մտածի՛ր. ամօք բան է, որ չեմ կարող հրատարակել, իսկ ուրիշներ իրենց յիմար բաները բշում են առաջ: Քէֆա շա՛տ վատ է. — ասող եւ վայրացած, զապաւած.

Քո ԱՌԵՏԻՔ

- (1) *Բացիկի սարսփելը եւ սարսփան վարը՝ փոստային կիւրէջ, հասցին՝ Փարիզ, 27, Av. Marceau, Mr. S. Akopian.*
- (2) *Երևի իտալական երկիրն անօթնիւրջ օր. Ջավահիր Ներսիսեան, սրն ամուսնացել է (եւսն Յանթի հետ):*
- (3) *Համաժողովոսն յարժան կողմակից:*
- (4) *Երաշխիք, garantie.*
- (5) *Վահան Տէրեանը ծաւաղել է 1920 թ. Յունաստան, Ժն. 1885 թ.:*
- (6) *Վերածնունդը յոյս էր տեսնում Փարիզում, Արշակ Տաղանտի խմբազուլութեամբ:*

7

7 ապրիլ [ի 1920, ժընեւ] (1)

Սիրելի Սիմօն,

15 օր է գնացիր, մի նամակ չ'գրեցիր. թէև ես այլեւս սպասելիք չունեմ «գերագոյն խորհրդից», այդ աւազակապետ-դահճապետներից, բայց եւ այնպէս, կուզէի դրանց նորագոյն լրբութիւնների մասին լսել. դու գիտես իմ կարգը՝ թեւ հեռանալ դրանց վրայ (2), եւ գնալ Պոլսով տուն: Ի վուր յոյսով եմ [դնում] նոյնպէս Ամերիկայի վրայ. դրան միայն Գարօների (3) պէս Տարտարե՛նները (4) կարող են հաւատալ. Հայաստանը այն է, ի՛նչ որ ընկաւ Ռուսիայից. դա էլ վտանգած է. խնդրում եմ ինձ գրես — թէ ի՞նչ է կատարում մեզ մօտ. թիրք-թաթարները յաջողութիւն ունեն, կարող են մերոնք պահել սահմանները. ցաւում եմ, որ այսպիսի մի փափուկ ժամանակ Համօյի (5) պէս փայտածին է արտաքին գործերի նախարար. նախկին փորձերը բաւ չէին դաշնակցականները շա՛տ են սիրահարած իրենց վրայ. — այսպէս որ տանեն գործերը՝ եւ դաշնակցական չեմ այլեւս: —

Անգլիական թերթերը շարունակ վատ լուրեր են տալիս Կիլիկիայի եւ Կովկասի մասին. դո՛ւք ի՞նչ տեղեկութիւններ ունիք. Ուրֆայի նահանջի պատճառով հայեր կոտորած են թէ ո՛չ. — ինձ թում է, որ հայերը համաձայնութեան են եկած թիւրքերի հետ: —

Իմ մասին ի՞նչ արիր. գրեցի՞ր [...] (6). ես վերջերս հիանդ էի. հիմա լաւ եմ. վարդապետը մահից ապաստեց:

Քո ԱԻԵՏԻՔ

- (1) Տարեթիւը եւ գաղաթի տեսչը՝ փոստակիւղից: Հասցէ-դրուած է Փարիզ, Mr. S. Akopian, Délégation Arménienne, Rue Boétie, 81:
- (2) Կարգա՝ զթիւ զբնից վրայ, հետեան է...:
- (3) Արմէն Գարո Գասարճաճեան:
- (4) Tartrine de Tarascon, Փրանսիայի վիպառան Alphonse Doudet, Երևանու Վեպի դարձնիկաւ հերոսը:
- (5) Համա Յեանիանեան:
- (6) Թանաթի լոզոզուելու պատճառով մէկ բոս տնըթիւնի է:

8

1 Մայիսի [1920, ժընեւ] (1)

Միրեյի Սիմօն. միայն ապրիլի 20-ին ստացայ Ս. Ռէմօնի(2) գրած (ապր. 22-ին) սարսափելի նամակը. երեւի արիկայ Նիտտի(3) կառավարութիւնը ուշացրել է առաքումը:

Թէեւ ես Գերագոյն խորհրդից բան չեմ սպասում, սակայն եւ այնպէս նամակը խենթացուցիլ յուսահատեցուող էր. — առանց Սեւ ծովի եւ էրպրումի Հայաստան չկայ, եղածը կը լինի ոտնակոխան բաթարի, թիւրքի, վրացու ոտների տակ:

Ես շա՛տ բան ունիմ ո՛չ միայն դժգոհ լինելու Ձեզ(4) բոլորիցդ, այլեւ փաստօրէն մեղադրելու. դուք խաբում էք հայ ժողովրդին, բնեցնում էք. դաշնակցական միաճեմանութիւնը կործանեց հայութիւնը. չէք բանում ժողովրդի աչքերը, որ իր գլխի ճարը տեսնի. առանց ղեկավարների մեր ժողովուրդը շա՛տ աւելի լաւ կերպով կը կարողանար իր գլուխն ապաստել, բան Ռոստոմների, Գարօների, Զարիների(5), Ակնունիների Դօն Քիշոտութեան(9):

Հատ բան կայ ասելու. միայն հիմա գրիր, թէ ի՞նչ էք անելու. Ամերիկան ի՞նչ է ասում. դուք պիտի համաձայնի՞ք այդ սահմաններին. ինչ կարծիք ունի Ձեր պիտաքին գործերի նախարար Համօն:

ԱԻԵՏԻՔ

- (1) Տարեթիւը եւ գաղաթի տեսչը՝ փոստակիւղից. Հասցէ-դրուած է Փարիզ, Ազգային պատուիրակութեանը՝ Սիմօն Յակոբեանին:
- (2) Իտալական այս գաղաթում 1920 թ. տեղի ունեցաւ Դաշնակիցների խորհրդածողովը:
- (3) Բնազրում՝ այսպէս, իրականում Նիտտի՝ Francesco Saverio Nititi (1868-1958), Յունի 1910ից Յունի 1920 թթ. եղել է իտալական կառավարութեան պարագլուխը:
- (4) Բնազրում՝ այսպէս, փոխ. ճեմք:
- (5) Յակոբ Զատրեան (Զարիիւ, Թե. թ. տեյայտ — 1920, Մոսկուա), Հասարակական եւ գաղաթական գործիչ, դաշնակցական, բժիշկ. 1917 թ. աշխարհ Նշանակուել է Արեւմտեան Հայաստանի բնդէմտուք նահանգապետի օգնական:
- (6) Փոխարեւարտը՝ մնացաբնութիւն:

9

5 Մայիսի [1920, ժընև] (1):

Սիրելի Սիմօն, Հայաստանը ներկայումս այն վտանգի մէջն է, ինչ որ էր 1918. այն ժամանակ Ռուսները հեռանում էին մեզնից, իբրև բարեկամ, հիմա գալիս են, իբրև բշնամի: Վաղը տապալւած կը լինի Երեւանի հանրապետութիւնը, եւ դաշնակցութիւնը խորտակւած, եւ օրէնքից դուրս. կորաւ միացեալ Հայաստան, բաշնակեան Հայաստանը մասն է կազմելու սովետական Ռուսաստանի (2): Թիւրքիոյ Հայաստանի հարցը բաժանեց եւ մնաց առանձին, բայց վտանգւած...

Դու շա՛տ մեղաւոր ես, որ եկար Փարիզ, եւ տեղդ տաք գտնելով այդ Դօն-Քիչօտները հետ յարմարեցար. եթէ Մօսկվա լինէիր, շա՛տ բան կանէիր, Հայերին փրկելու. Բերն (3) ունեցած մեր խօսակցութիւնը-ամենախմտտունն էր, որ մոռացութեան տօինց: Մենք որ բաշնակիւնների հետ ձեռք-ձեռքի կուել ենք, այսօր բշնամի ենք. եւ ամէնամեծ բշնամին հայ բաշնակիւմն է, որ կըրքից կուրացած այժմ պիտի սրի անցնէ, ինչ որ դաշնակցական-պագային-հայկական է...

ԱԻԵՏԻՔ

(1) Ցարեթիւք եւ զաւաթի անունը՝ բացիկէ փոստակէիկէ:
(2) Գրուած է Հուլիսի 1920 թ. Մաշեանի ազատամարտի ան պաշտօնագրով:
(3) Ելիւրքի-Երն Բերն թուրք:

10

12 Մայիսի: [1920], ժընև

Սիրելի Սիմօն, կարդացի խաղաղութեան պայմանները Tempքի (1) մէջ. մեր հարցը նորից անորոշ է, եւ վախենում եմ այսպէս էլ մնայ ընդ միշտ — վիճեցնելու տարբեր ձեւ:

Բայց բաշնակիւմը... «Չիկակօ - Տրիբունը եւ Տայմպը» (2) շա՛տ վատ լուրեր են տալիս, որ Ալէքսանդրօպօլը բաշնակիւնների ձեռքն է, որ վօրքն ու ժողովուրդը իրար դէմ կուում են, որ մի քանի ժամանակից յետոյ Հայաստանը կը լինի բաժանւած Ռուսների եւ Թիւրքերի միջեւ. հեռագրողը շատ ծանօթ կօրեսպոնդանստ (3) Պօլ Վիլիամսն է: Կարդա՛ Չիկակօ-Տրիբունը, մայիսի 11-ի քիւր: Խելքս շաղելի է այս լուրերի տակ. բան չեմ հապկանում. այնպէս է երեւում, թէ բաշնակիւմը, որ իբթիատական խորք ունի, ուղղւած է միմիայն Հայաստանի դէմ, ջնջելու հայ անկախութիւնը. ի՞նչ եւ կարծում, եւ ի՞նչ վստահելի տեղեկութիւններ ունիք:

